



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵՒՆ

Ա. ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ

ԽԱՅԻԿԻ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ի ՊԵՏԻԿԹԱՇ



Ltn

135

Կ. ՊՕԼԻ

ՏՊԴՐՈՒԹԻՒՆ Ո. Տ. ՔԻՒՐՔՃԵՆ

ԽԵՂՋ

4.993

1999.1.10

43916 - Ա. Հ.

Հ. Հ. - 182

ԴԱՍԱԳԻՐՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ա. ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ

ԾԱԽԻԿԻ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՇԻԿԹԱՇ

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

6/3.



28064-62

9-

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԵՍԱՅԵԱՅ  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻ ԱՐՔՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՄՈՅ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՒ

28 141

135-60



Սոյն դասագիրքը ո՞չ այնչափ ընթերցանութիւն սորմելու, որչափ գրուած բան մը հասկընալու, խորհելու խորհրդածելու եւ մտածածը խօսելով եւ գրով արտասանելու եւ ուրիշին հաղորդելու համար է։ Արդէն թիւ կարդալը գիտնալու է աշակերտ մը որ այս դասագիրքը ձեռքը տրուի։ Թէեւ զայն արդիւնաւոր կերպիւ գործածելու համար, մասնաւորապէս վարժապետաց համար, բանալի մը պատրաստելու կաշխատինք, բայց առայժմ քանի մը օգտակար խըրատներ աւելորդ չեն ըլլար։

Խնջղէն արդէն ամեն դասագիրք՝ նոյնպէս ալ այս, վարժապետին հմտութենէն եւ հանձարէն կոպասէ իր շահաւոր կիրառութիւնը։ Երկար հրահանգները չատ անգամ օգուտ չունին։ Սոյն դասագրքիս սկիզբը գրուած քանի մը հասարակ եւ կարծ նախադասութիւնը համբակը կարդալով, անոր նման համառօտ բաներ լեզուաւ խօսելու է վարժապետին առջեւ եւ յետոյ գրելու։ Հոս միայն քանի մը նիւթերու վրան խօսելով, ուսուցչին գաղափար մը տրուած է։ Ինքը կրնայ հաղար նիւթ գտնալ։ Յետոյ կենդանեաց ու բուսոց նկարագրութիւնքը պէտք է աշակերտին աչացն առջեւ այն բոյսէն կամ կենդանին—ո՛րը կարելի է, կամ պատկերը կամ բոյ-

սըն ինքը—բերելով՝ կարդալ, այն առարկային վրայօք տղուն հարցումներ ընել, բաներ դիտել տալ եւ թողուլ որ իր տեսածներն ու դիտածները գրէ:


Ոտանաւորները աշակերտը ՚ի բերան սերտելու է եւ բնական ու անպաճուծ ձայնով ըսելու է աշակերտակցացն առջեւ, Երկար պատմութեանց բովանդակութիւնը համառօտելով երեք կամ չորս տողի մէջ ամփոփելու է զրով: Խոկ վերջին առակներուն վրայօք վարժապետը ինքը խօսելով եւ աշակերտաց հետ խօսակցելով, զանոնք ընդարձակելու եւ խօսւածը աշակերտաց գրել տալու է: Զորօրինակ « ծառը եթէ վար ինսայ . կացնաւորը կը շատնայ »: Հոս աշակերտաց դառնալով վարժապետը կըսէ: « Ծառի մը քով չի տեսնուիր որ մարդիկ կացինով կայնին կամ անօր զարնեն . ի՞նչու Տիգրան : — Որովհետեւ կանաչ է եւ սկսուղ կուտայ, կը պատասխանէ նա : — Կը հարցուի նաեւ ծառին ուրիշ օդուաները, անոր շուքը, անոր գեղեցիկ տեսիլքը եւն :

« Այսափ օգուտաներ բերող ծառ մը բնականաբար չեն կտրեր » , ըսել կուտայ վարժապետը, Բայց ե՞րբ կը կտրեն . — Երբոր ծերանայ, հիւանդանայ, տկարանայ, չկարօղանայ զինքը օդերուն ու հովերուն դէմ հաստատ պահել եւ կիյնայ . յայնժամ կուգան կացնաւորները, կը կըտրեն . — ու վառելու կը գործածեն : — Այսչափս առածին բառական նշանակութիւն է, որ առաջ պէտք ցուցնել աշակերտին :

Ցետոց ցուցնելու է քանի մը օրինակաւ-

թէ մեր կենաց մէջ ե՛րբ եւ ի՞նչպիսի պարագայից մէջ կը գործածենք այդ առածը . օրինակի աղագաւ՝ երբ հարուստ կծծի մէկը կը մեռնի ու անոր ժառանգները ստացուածքը կը բաժնեն . Երբ ճարարախոս մէկը կը ծերանայ ու այլ եւ լը չի կրնար ուրիշներուն խօսածները լսել ու պատասխանել եւն . Իր գործը սիրող վարժապետ մը միշտ սրամիտ առածներ ու զուարձալի պատմութիւնք կրնայ գտնալ իր աշակերտացը համար :

Բայց վարժապետ մը որ բարեպաշտ ու իրաւ հայրենասէր ու ազգասէր չէ, անոր համար այս դասապիրքը օգուտ չունի . թող զայն իր աշակերտին ձեռքը չխայ . եւ այնալիսի վարժապետ մ'ալ իր պաշտօնը ձգէ ու ուրիշ արհեաւաի յարի՝ աւելի լաւ կ'ընէ, քանզի առանց Աստուածպաշտութեան եւ ծմարիտ հայրենասիրութեան ոչ ոք կարէ կրթել ու դաստիարակել, մանաւանդ ոչ մէկ հայ վարժապետ որուն ազգին պատմութիւնը քրիստոնէական է :



## ԴՊՐՈՑ

1. Ես կերթամ դպրոց ✸ Տը-  
ղաք բարեւ կուտան վարժապե-  
տին ✸ Յետոյ կը նստին իրենց տե-  
ղերը ✸ Հապա աղօթք կ'ընենք ✸  
Այնուհետեւ կըսկսի դասը ✸

2. Մեք դպրոցին մէջ կուսա-  
նինք ✸ Կը խօսինք, կը կարդանք,  
կը գրենք ու հաշուել կը սոր-  
վինք ✸ Երբեմն ալ կերգենք  
ու գծագրութիւն կընենք ✸

3. Վարժապետը կը սորվեցը-  
նէ ✸ Աշակերտը կը սորվի ✸ Տղան  
կը խօսի ✸ Աղջիկը կը պատաս-  
խանէ ✸ Զանգակը կը զարնէ ✸

4. Գիրքը նոր է ✸ Գիրերը խո-  
չոր են ✸ Թուղթը ձերմակ է ✸  
Փարետախտակը սև է ✸ Փարե-  
գրչին ծայրը սուր է ✸

5. Ես կը սիրեմ Հնաղանդիլ։  
Դուն աշխատասէր ըլլալու ես։  
Նա չուզեր կարդալ։ Մենք գը-  
րելու ենք։ Դուք կրնաք կար-  
դալ։ Նոքա կրնան խաղալ։

6. Աշխատասէրը կը գործէ։  
Աշխատասէրը գործեր է։ Աշ-  
խատասէրը պիտի գործէ։ Ծոյլը  
կը քնանայ։ Ծոյլը քնացեր է։  
Ծոյլը պիտի քնանայ։

## ՏՈՒԵ

1. Հին տունը կը փէի։ Նոր  
տուն մը կը շինեն։ Հաստատ  
հիմ մը կը դրուի։ Որմնադիրը  
ժիր օգնականներ ունի։ Գործիք-  
նին նոր է։ Նոր տանը պատերը  
հաստատուն են։ Կաղնի դրանը  
վրայ մեծ փականք մը կայ։ Պա-  
տուհաններուն ապակինները մա-  
քուր են։

2. Ես կը սիրեմ իմ սենեակս։  
Մեր տունը քանի մը սենեակներ  
ունի։ Եղբօրս պառկած սենեա-  
կը փոքր է։ Մեր տունը մեծ որ-  
րահ մը ունի։ Դուք ձեր բակը  
կը խաղաք։ Մեր խոհանոցը մեծ  
ու մաքուր է։

3. Այս տունը երկու սան-  
դուղք ունի։ Կան տուներ որ  
սանդուղք չունին։ Յառաջակողմը  
ութը պատուհան ունի։ Պատու-  
հաններուն շատը ութը ապակի-  
կունենայ։ Կան ալ պատուհան-  
ներ որ վեց ապակի ունին։

4. Սենեակներուն պատերը  
ներկուած են։ Արահին առաս-  
տաղը ձերմակ է։ Տան տանիքը  
ծուռ է։ Տան վերնայարկը հովը  
կը փչէ։ Մառանը մութ կ'ըլլայ։  
Մթերանոցը խոհարաբին ամե-  
նէն սիրելի տեղն է։

5. Տան կարասիքը նոր են։  
Պատին վրայի հայելին կը փայլի։

Հայելոյն շրջանակը սև է։ Պատ-  
կերներուն շրջանակները ոսկե-  
զօծ են։ Վարագոյքները բարակ  
են։ Բազմոցներուն ծածկոցը  
բամբակէ կտաւ է։

6. Հայրը կը գործածէ գըրա-  
սեղանը։ Մայրը կը մաքրէ պատ-  
կերներուն ապակիները։ Աղա-  
խինը կ'աւլէ սենեակը։ Նա կը  
հնազանդի իր տիկնոջը։ Տէրը  
հաւատ կ'ընծայէ ծառային։ Ծա-  
ռան հաւատարիմ է։ Տիկինը խո-  
հարարին ստակ կուտայ։

7. Ծառան ձիերը կը խնամէ։  
Զիերը կը խնամուին։ Զաղացպա-  
նը ցորեն կ'աղայ։ Ցորենը ջաղա-  
ցին մէջ կ'աղացուի։ Մարդիկ հա-  
սած արտերը կը հնձեն։ Հասած  
արտերը կը հնձուին։ Գիւղակա-  
նը սերմը կը ցանէ։ Գարնան ժա-  
մանակին սերմը կը ցանուի։

8. Շունը կը հաշէ։ Զին կը  
խըխնջայ։ Կովերը կը պառաշեն։

Ոչխարները կը մայեն։ Թոչունը  
կ'երգէ։ Հաւը կը խօսի։ Կատուն  
կը նուայ։ Խոզը կը խոկայ։ Ա-  
քաղաղը “կիկրիկի”։ Կը պուայ։  
Աղաւնին կը մնջէ։ Ոչխարները  
բուրդ կուտան։

9. Հաւերը, աղաւնիները,  
սագերը և բաղերը հաւկիթ կ'ա-  
ծեն։ Աքաղաղը ինքնահաւան  
է և կոիւ կը սիրէ։ Հաւերը ցո-  
րեն գարի և ուրիշ արմտիք լաւ  
միջատներ ու ձձիներ կուտեն։  
Հաւերուն, աղաւնիներուն, սա-  
գերուն և բաղերուն միսը հա-  
մեղ է։ Սագերը ու բաղերը կը ր-  
նան թոչիլ, քալել ու լողալ։  
Ճնձուկներն ու ծիծեռնիկները  
կը սիրեն մարդկանց մօտ բընա-  
կիլ։

## Զ ՈՒ Ի Ր

Ի՞նչ պիտի ընէինք եթէ ջուր չունենայինք : Առանց ջրի անհնարին է մեզի ապրիլ, այն ատեն ոչ բան կունենայինք ուտելու, ոչ խմելու, ոչ ալ հագնելու : Ուստի ջրին ամենափռքլիկ կաթիլն ալ արհամարհելու չենք, որ կամ գետնէն կ'բղիի կամ ամպերէն կուգայ . քանզի ամենակարօղն Աստուած այնպէս ըրեր է որ մեկ կաթիլ ջուրը միւսը սիրէ, անոր քովը երթայ, հետը միանայ և այս կերպով գետ մը կազմէ որմէն մարդիկ օդուտ քաղեն :

Լերան վերի կողմերը կը բղիի աղբիւրը . Ուրախ ու կայտառ ջուրը կարկաշելով վար դէպ 'ի ձորը կը վազէ, որպէս զի իր եղբայր առուին հետ միանայ և գետ ըլլայ: Երկու ափանցը վրան սիրուն և անուշահոտ ծաղիկները՝ գլուխնին ծուած՝ եկող ջուրը կը բարեն և վաղողին ալ « երթաս բարեաւ » կըսեն : Ջուրերը կերթան հովիտը և մէջի ձկերը աստ և անդ լողալով կը ջուարճանան : Բայց կուգայ մարդը իր ուռկանովը և կը բռնէ միամիտ ձուկը և կը դադրեցնէ անոր

խաղը . դետն աս բանը կը տեսնէ, բայց կանցնի կերթայ մինչև որ բարձր տեղէ մըջաղացին անիւին վրան թափուի և զայն դարձունէ : Դետն ալ առաջ կը վազէ և կերթայ կը հասնի քաղաքի մը և անոր մէջէն կամ քովէն ալ անցնելով շատ մարդիկ տուներ, պատեր, աշտարակներ և եկեղեցիներ կը տեսնէ :

Այսու ատեն լեռներուն ձիւները կը հալին և երկնքէն ալ անձրև կուգայ ու գետերը կոկուն մեծնալ. ջուրերը յորդ կ'վազեն, այնպէս որ իրենց աւազանէն դուրս կելեն ու դաշտերն ու մարգագետինները կ'ողողեն և այն ընդարձակ դաշտը լիճ կը դառնայ . Յետոյ նորէն կը խոնարհի ու կ'իջնայ իր աւազանին մէջ և ափանց մէջէն վաղելով յառաջ կերթայ : Այս տեղ երբեմն գետին կը ռնակին վրան փայտէ շինած և մէջը պարապ տուներու սիէս բաներ կան, որոնց մէջ բարձըր գերան տնկած են և այն գերանին վըրան ալ մեծ կտաւ մը կապեր . ասիկայ նաւնէ իր կայմովը և առագաստովը, որ գետին շալակը ելած կերթայ ուր որ գետը կը տանի զինքը . Հովը կը փչէ, առագաստը կուռենայ և նաւը կը սահի վրայէն կերթայ . վերջապէս երկուքն ալ կուգան այն մեծ և խորունկ ջրին կը հասնին որ հարիւր գետերէ ալ մեծէ : Ասիկայ ծովնէ : Երրոր սառ

տիկ հովմը փէք , այն ժամանակ անոր խո-  
շոր ալիքները փրփրալով վեր կեղան և ի-  
րար զարնուելով այնպիսի ձայներ կը հանեն  
որ նաւուն վրայի մարդիկը կը վախնան : Աա-  
կայն գետը կըսէ և աճաւասիկ լեռներուն  
և ձորերուն ազբիւրներն ու առուները՝ բո-  
լորն ալ ժողվեր և նաւերն ալ կռնակս առեր  
շալկեր բերեր եմ քեզի , առ ասոնք , ով  
մեծ ծով . ես ալ որ հոգնած եմ թող այս-  
տեղ քո անկողնիդ մէջ պառկիմ հանգըս-  
տանամ :

## ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ՄԱՀ

Գեղացւոյն մէկը ծերացած ու խըռֆած ,  
Աղքատութեամբ աշխատութեամբ ալ մաշ-  
ուած ,

Զըմեռուան ցուրտ ժամանակը  
Շալակ մը փայտ առած իրեն կռնակը ,  
կամաց կամաց կերթար մըխոտ տրնակը ,  
Հաղալով արքաթքալով ծանըր բեռանը տակը .  
Տարաւ տարաւ՝ յոդնեցաւ ,  
կանկ առաւ՝ մէկ մը կեցաւ .  
Փայտերը կըսնըկէն իջեցուց գետին դըրաւ ,  
Նըստաւ վըրան , ախմը քաշեց ու ըսաւ ,  
«Ո՞չ Տէր Սստուած , աս ի՞նչ է իմ քաշուծը .  
Մէկդիէն չունիմութիւն , մէկալդիէն տղաքը» :

Հապա իսրա՞ծ , սալեա՞ն , տո՞րք . . .  
կեանքիս մէջ աղէկ օր մը ես ալ տեսե՞ր եմ  
արդեօք :

Այս կերպով սիրտը կոտրած ,  
Ոմէն բանէ յոյսը կտրած ,  
«Ո՞չ մահ , կանչեց , ո՞ւր ես , ո՞ւր : »  
Մահն ըսես՝ ի՞ւ դու ձայն տուր :  
Լեռնէ ծովէ անդին չէ ,  
Միշտ կըսնակիս կեցած է .  
իսկոյն եկաւ երևցաւ .  
«Ենթուկ ինչո՞ւ զիս կանչեցիր դուն » ըսաւ .  
Ենթըն որ տեսաւ մահուն ահեղ տիպարքը ,  
Մահմըռկեցաւ շրփոթեցաւ ,  
կորսընցուց խօսքին կարգը ,  
Կըմկըմալով այս ըսել հազիւ կըրցաւ .  
«Թողութիւն կընես .  
Ես կանչեցի քեզ  
Որ , սա փայտը կը տեսնե՞ս ,  
Ճալկելու իւծի օգնես : »

---

Կը տեսնուի սյս առակէն ,  
Որ մարդ որքան ալ իր կեանքէն  
Զանձրանայ ու դըժգոհանայ ,  
Մեռնելէն շա'տ աւելի կը վախնայ .

# ՈՂՈՐՄԱԾՆ ԱՇՈՏ

Աշոտ Գ. Հայոց թագաւորը իր կեանքին մէջ այնքան գութ ու ողորմութիւն ցաւցուց աղքատներուն ու ամեն տեսակ թշուառներուն որ ազգերնիս անոր Ուղրած մականունը տուաւ . Զարմանք կուգայ մեր վրան երաբոր մեր ազգին ճշմարտասէր և բանիբուն պատմաբաններէն մին կը պատմէ մեր Աշոտ Գ. թագաւորին աղքատասիրութիւնը : Ստեփաննոս Ասողնիկ կըսէ թէ գոնջերը (քէլերը), կաղերը ու կշյուրը կը հաւաքէր , իր քովը կը նստեցնէր ուրախութեան հացկերոյթի ժամանակ , մէկուն իշխան կը կանչէր , միւսին իշխանապետ և ուրիշին կիւրապաշտ (պէյ) և անոնցմով կզբունչըր : Բորոտներուն քոսերէն և անոնց խոցերէն չէր զըզուէր . նաև իր թագաւորական գաւաթովն անոնց ջուր կամ դիմի կուտար . Այս մեծ ողորմած թագաւորը այն աստիճան առատաձեռնութեամբ աղքատաց և կարօտելոց ողորմութիւն կը բաշխէր , որ մեռնելու ժամանակ գանձատան մէջ ստակ չ'գտնուեցաւ :

Նաև սենեակիներուն կարասիքը և պատերուն վրայի զարդերը աղքատաց կը պարգևէր :

Ասոր գեղեցիկ օրինակին կը հետևէր Երեխ երանելի ամուսինը՝ Խոսրավանոյշ թագուհին , որ շատ սիրով և խոնարհութեամբ աղքատներուն տուները կերթար և իրեւազին գթասիրտ և աղնիւ մայրը զանոնք կը միսիթարէր իրենց վշտերուն ու ցաւերուն մէջ :

Չ ի

Չին գեղեցիկ և խրոխտ կենդ անի մ'է : Կառքի լծած ատեն , նոյնպէս ալ երբոր մարդանոր վրան հեծնէ , կը ծուէ իր վիզը կարապի մը պէս և ոտքերը կը վերցնէ կը դնէ , կարծես թէ պարել կուզէ : Եթէ անոր լաւ հոգ տանին մազը ողորկ և փայլուն , պոչն ալ մաղալից և երկայն , իսկ պաշն ալ փոքրիկ մը կոռուզ կըլլայ : Անոր սմբակիներուն գամերով պայտեր կը փակցունեն , երբոր պէտքէ անոր քարուտ ճանապարհով կամ սառուցի վրայէն քալել :

Գարի , խոտ և յարդէ ձիուն սովորական և սիրած կերակուրը : Չին հեծնելու համար նախ և առաջ կը թամբուի , յետոյ բերանը սանձ կը դնեն որպէս զի հեծնող

ուղածին պէս կարօղանայ յայս կամ յայն  
կողմն վարել . Զիերը կը դործածուին նաև  
կառք քաշելու համար . Խելացի ձիապան-  
ները անոնց զօրութենէն աւելի չեն բեռ-  
ներ , և զանոնք ալ չեն ստիպեր չափէն ա-  
ռաւել արագ երթալու , բայց երբէք ալ չեն  
տանջեր խեղճ կենդանին խարազանով կամ  
ուր մնայ խարազանին կոթովը . Զին շուտով  
կը հասկնայ մարդուն հրամաններուն միտքք,  
ուստի կրնայ միայն խօսքով ալ վարուիլ :  
կենդանին մարդու մը չափ ցաւ կզգայ .  
Տղաք պէտք է որ ձիերէն հեռու կենան,  
քանդի անոնք երբեմն կամ ոտուլնովնին կը  
զարնեն կամ բերնովնին կը խածնեն , ինչպէս  
արդէն շատ տղաքներ ալ փորձով հասկցեր  
են :

## Կ Ո Վ

Կովը այնքան դեղեցիկ չէ որչափ ձին ,  
Անոր իրանը հաստ է և խոշոր , գլուխը՝ լայն  
և մեծ ճակատ մը և դուրս դէպ ՚ի կողմն  
ցցուած ականջներ , պղտոր աչքեր և մէկ  
մեծ ալ բերան ունի . Ոտուլները շատ գեղե-  
ցիկ չեն և պոչն ալ հանրածանօթ երկայնա-  
կանջ իշունը կը նմանի : Բայց այս բաներուն  
համար մեք զկովը բնաւ չենք արհամարհեր՝  
ինչպէս նաև չենք արհամարհեր մարդ մը ո-

րուն դէմքը տգեղ կամ մարմինը վասուած  
է . Քանզի ամենքս ալ քաջ գիտենք թէ որ-  
չափ օգտակար անասուն մ'է կովը կերակու-  
րին մէջ իւղ եղած ատենը աւելի համով կըլ-  
լայ , և սուրճն ալ կաթով աւելի համեղ է :  
կաթնապուրը մեր խիստ սիրած կերակուր-  
ներէն մին է . Թէև ամեն մարդ չի կրնար  
հորթի միս առնել խորովել ուտել , որովհե-  
տե հորթի միսը սուղ կըլլայ , բայց թէ անի-  
կայ շատ համով է իւրաքանչիւր ոք գիտէ :  
Նմանապէս և կովերուն ու հորթերուն կա-  
շիէն է որ մեզի կոշիկներ կը շինեն որպէսզի  
ասգերուն պէս բորիկ չպտտինք :

## Ո Չ Խ Ա Ռ

Ոչխարին համար կըսեն թէ տգէտ է և  
յիմար , որ շատ ալ հաւանական է , Քանզի  
երբոր հրդեհի ժամանակ ոչխարներուն մէ-  
կը յուսահատած կրակին մէջը վազէ մնացած  
որքան որ կայ , ամենն ալ անոր ետեկն կեր-  
թան կրակին մէջը կիյնան կայրին : Նոյնպէս  
ալ զրին մէջը կիյնան բոլորն ալ , երբոր հո-  
վիւը անոնց առաջնորդ խոյը գետին մէջը  
նետէ : Բայց որովհետեւ մեզի պէտք չէ անոր  
իմաստութիւնն ու հանճարը , ուստի չենք ալ  
ուղեր քննել անոր ընդունակութիւնը և

խելքը, մեզի հերիք է որ աս սիրուն անասունը իր բուրդը մեզի տայ գույլրայի և ասու իի համար, իր ճարպը ճրագի և օճառի, իր կաշխն կրչիկներու ու ձեռնոցներու և իր անոյշ մին ալ խորովածի համար. Այս բոլոր բանները ոչխարը մեզի առատօրէն կուտայ, և անոր համար ալ զանի հին ժամանակներէ ՚ի վեր ընտելացուցեր են: Ասուածածառնը մեզի կըսէ թէ բարեպաշտ Արէլը հովիւ մ՚էր և թէ չայր Արրահամ շատ ոչխարներ ունեցեր է:

Փոքր գառնուկները կայտառ կըլլան և տղայոց պէս ցալիկէլ ու ցաթկուտելը կը սիրեն. իսկ մեծ ոչխարները քիչիկ մը տրտում կըլլան և գլուխնին ալ սովորաբար կկախեն:

## ԽՆՁՈՐԻ ԾԱՌ

Խնձորի ծառ մը պտուղներով լեցուն, բայց առաւել ևս գոռողութեամբ լեցուած, կը դառնայ օր մը իր քովի ծառերուն որ այս երկրին պարծանքն էին, և այսպէս կըսի խօսիլ. “ Տեսէք, ո՞վ բարեկամներ, ի՞նչ գովութիւններ կուտան ինձ, ինչ մեծարանք և պատիւ կընծայեն ինձ այս օրեւըս իմ վաստակոցս արժանի: Պարտէզին տէրը կուրծքը տնկած և ուրախ դէմքով

զիս տեսնելու կուգայ. Երբեմն կը գովիէ, երբեմն լուս կեցած առջևս կը հիանայ կը մնայ: Տիկինն մինչև անդամ իր պղտիկ տըղաքներովը ՚ի միասին շատ անդամ կուգայ իմ շուրքիս տակ կընստի: տան պահապանին ի՞նչ կըսես, սիրտը շուղեր որ քովիէս հեռանայ: Մէկն իմ պտուղներուս անուշ հոտովը կըզմայի, ուրիշը գեղեցիկ գոյները տեսնելով կը գովիէ, և գրեթէ այենուն բերնի ջուրը կը վազէ. ասոնց . . . ի՞նչ ասոնց, այլ ամենուն ալ խելքն ու միտքը իմ վրասէ: Ո՞վ ունի այսպէս գեղեցիկ ու պտղաւէտ գանձ մը: Երջանիկ և բարեբաղդ եմ ես. աշխարհիս մէջ, չէ, չըկայ ասկէ աւելի փառաւորութիւն: ” “ Ազնիւ խնձորենի, ” պատախան տուաւ տարին առած տանձենի մը ցած ձայնով, “ Կաղաչեմ. ներէ թէ որ համարձակիմ խօսքիդ գէմ կենալ, իրաւ է որ հիմայ ամեն մարդ կը փափաքի կուզէ հնազանդ. և սիրելի երևնալ քեզ, բայց մի վստահիր մարդկանց, որոնք բնութեամբ ագահ ըլլալով սովոր են միշտ ատել, շողոքորթել և խօսքերնուն վրայ չկենալ, կեցիր որ այն դաժան ձմեռը դայ վանէ զայունն, և այն ատեն կը տեսնես թէ անոնց բարեկամութեան կապը արդեօք հաստատ էր: ” ” Տանձենուցն տուած խրատը խիստ խելացի էր և խիստ յարմար, մանաւանդ թէ մար-

գարեի պէս խնձորենւոյն դլուխը դալիքը  
գուշակելով խօսեցաւ : Վասն զի հպարտ  
խնձորենին իր պառուղները կորսնցուց և մօրէ  
նոր ծնածի պէս մերկ մմալով իր տիրոջն ու  
անոր ծառաներուն երեսէն ալ ինկաւ : Այս  
փորձանքը որ անոր պատահեցաւ, սկսաւ  
ցաւիլ և զարմանալ : « Ո՞՛՛ , կըսէր «ահա  
հիմայ կիմանամ այն խաբերայ գողերուն ը-  
րած մատնութիւնը , բայց ի՞նչ օդուտ , ա-  
տենն անցաւ . վայ իմ գլխուս : Անոնց ինծի  
ցուցած սէրն երեսանց էր , կեղծաւորութիւն  
էր ըրածնին որ առջևս կը հիանային կը մը-  
նային , և իմ պատիւս աղարտելէ եղեր այդ-  
չարագործներուն դիտաւորութիւնը : » Այն  
ատեն կրկնեց տանձենին . «ահա հիմայ ճշշ-  
մարիտ կը խօսիս և չես խաբուիր . վասն զի  
ես տարիներ եմ անցուցեր մինչև որ սորվե-  
ցայ չխաբուիլ անոնց սուտ գովեստներէն ,  
և խոհեմութեամբ յայտնել անոնց խարէու-  
թիւնն ու խարդախութիւնները . և իմ զնա-  
սովս իմացայ թէ ինչ որ մեր գլուխը կը բե-  
րեն այդ մարդիկը , նոյն վնասն իրենց մէջ  
մէկմէկու ալ կուտան . » Անմիտ խնձորենւոյն  
վրան եկաւ հասաւ ձմեռը , և ձմեռուան  
հետ չքաւորութիւն , հիւանդութիւն , վիշտ  
ու ցաւ . բայց իրեն բարեկամները հարցուր,  
ամենքնին ալ երեսէ ձգեցին , և ոչ մէկը  
քովը կուգար . մէկն ալ հաւատարիմ չմնաց

որ անոր դառն ու ողորմելի վիճակին մէջ  
ցաւակից ըլլար իբե՞ն :

# ԱԳՐԱԿԻ ՈՒ ԱՀԱՒԻՔԱ

Քանի՞ քանի քարողիչներ կարդացողներ  
Խըրատ տուեր են ամենուն ու կուտան,  
թէ ով մարդիկ , չէք գիտեր  
ինչ գարշելի ինչ անպիտան  
Բան է լինելը շողոքորթ  
կեղծաւոր՝ երկու երես ,  
Մարդահաճոյ անամօթ :

## ՈՐՈՇ ԿՐԱԵԱ

Գովասանք ըստածըդ սուտ ալ լինի ,  
Մարդուս սրտին մէջ քունճիկ մը ունի :  
Ագռաւուկին օր մը բաղդը բանեցաւ,  
Կտորիկ մը պանիր ինկաւ կըտուցը .  
Բարձըրկեկ ծառի մը վրայ թառեցաւ ,  
Պատրաստվեցաւ ուտելու , անցընելու իր քաղցը  
Բայց չէր ուզեր որ պանիրն ալ շուտ հատնէր  
Մէկ մ'ալ ո՞ւսկից այսպիսի որս մը գտնէր :

Ագռաւուն այն տադնապին  
Ազուեսուկը վրայ հասու .  
Հզմայլած պանրին հոտէն ,  
Վազեց եկաւ ծառին տակը կանկ առաւ ,  
Վեր նայեցաւ , տեսաւ որ ի՞նչ կրնակին  
Պանի՛ր պանի՛ր . “ վայ է ըսաւ <sup>ի թաշ գրադականութեա</sup>



Թէ որ գորա կըտուցէն

Ես այդ որսը չը խլեմ” :

Մատիկներուն վրայ հանդարտ կոխելով,  
Պոչը մէկրիէն մէկաղդին շարժելով,  
Աչքը տընկած ագռաւուկին նայեցաւ,  
Յետոյ սկսաւ լեզու թափել, ու ըսաւ .

“ Տեսք ալ որ ըսես՝ քուկինդ է, հոգի  
ի՞նչ սիրուն վիզ է, ինչ աչք ու աղի .  
Գեղեցիկ կըտուց, ցորուն վետուրներ .  
Այդքան ալ աղուրութիւն կ'ըլայ եղեր .  
Հարկաւ ձայնիկդ ալ հրեշտակի ձայն է  
Աչքիս լրյուր, արի մէկ խաղ մը կանչէ .

Հաւատաք քուրիկ,

Թէ որ ձայնիկդ ալ տեսքիդ պէս է գեղեցիկ,  
Դուն հասարակ թռչուն չես,  
Թուչնոց ու մեր սուլթանն ես ” :

Այն խօսքերէն

Գովեստներէն

Ագռաւուկին խելքը գլխէն թռաւ դնաց .  
Խընտումէ կլթիկ եղաւ, սիրտը թնդաց .

“ Որի սա աղուեսուկին

Ինծի տուած գովասանքին

Շիտակ եղածը ցուցնեմ իրեն ”

Ըսաւ ինքնիրեն .

Կըտուցը բացաւ ,

Կա՛ռ մը ըրաւ ,

Պանիրն ընկաւ ,

Պանիրն հետը աղուեսին ալ հետքը կորաւ =

## ՍՐԱՄՏՏՈՒԹԻՒՆ

Ամերիկայի բուն բնակիչներէն մին որ  
օր մը երկար թափառելէն զինի իր բընա-  
կացանը դարձած էր, կը տեսնէ որ գող-  
ցուած է այն իրեն երէն որ որսեր ու չոր-  
նալու համար կախեր էր . Որպէս զի գողը  
անոր հետքերէն գտնայ . Ելաւ ճամբայ ին-  
կաւ անտառի մը մէջէն : Հոն իրեն քանի  
մը անձինք պատահեցան որոնց հարցուց  
թէ արդեօք կարճահասակ և ճերմակամորթ  
ծեր մարդ մը տեսած են որ կարճ հրացան  
մը կը կը ու հետն ալ պոյը կտրած չուն  
մը ունէր . “ Այս ”, պատասխան տուին ա-  
նոնք, ու Հնդիկն ըսաւ թէ այն մարդը ի-  
րեն երէն գողցած է : Բայց ասոնք շատ  
փափաքեցան իմանալու թէ ինչպէս կարող  
է անձ մը այդ ճշդութեամբ նկարագրել,  
զորն երբէք տեսած չէ . “ Ես գիտեմ ”,  
ըսաւ Հնդիկը, “ որ այն մարդը կարճահա-  
սակ է, քանզի բերեր քանի մը քարեր  
մէկտեղ ժողվեր էր որ վրան ենէ ու երէն  
վար առնէ իր տեղէն ուր ես գետնին վը-  
րայ կայնելով կախեր էի . Անոր ծեր մէկն  
ըլլալն ալ անկէ գիտեմ որ ոտքին տեղերը

իրար մօտ են զորս ես տեսայ անտառին մէջ  
թափած չոր տերկներուն վրան . և թէ  
ճերմակամորթ է այն մարդը՝ ան ալ իր ոտ-  
ուըներուն ծայրերովը դէպի դուրսի կողմը  
կոխելէն հասկցայ, քանզի չնդիկ մը այդ-  
կերպով երբէք չը քալէր . Անոր հրացանն  
ալ կարճ ըլլալու է, քանզի զանի ծառի մը  
կըռթնցուցած տեղը փոքր մի փիրաւորուած  
էր անոր կեղել . շանը փոքր ըլլալը յայտնի  
է անոր ոտքերուն հետքերէն, և երբ որ  
ալ մարդը աշխատեր է երէն վար առնե-  
լու և շունն ալ քով պըպգած է եղեր, պո-  
չին ծայրը աւազին վրան նշան մ'է ձգեր,  
յորմէ լաւ կը հասկցուի որ պոչը կարճ է  
եղած :

## ՀԱԻՍՏԱՐԻՄ ՇՈՒՆ

Վ աճառական մը շուն մ'ունէր որ ար-  
թուն ու հաւատարիմ էր . Անզ ամ մը անոր  
կետ քաղաք մը դացեր, հոն բաւական բան  
ծախելով շատ մը ստակ ալ հետը՝ իր տու-  
նը կը վերադառնայ . Աս մարդը իր ստակը  
խուրճի մը մէջ դրած թամբին ետևի կող-  
մէն կապեր էր . շունն ալ ընկերացած քո-  
չին կերթար : Տակաւ առ տակաւ կը լուծ-

ուին խուրճին կապերը ու վար կիյնայ ա-  
ռանց վաճառականը բան մը իմանալու :  
Սակայն շունը, որ աս տեսած էր՝ կ'ըսկսի  
ճշալ, բայց վաճառականը բանի մը տեղ  
չը դներ ու ճամբան կը շարունակէ . Շունը  
կը հաջէ ու երթալով հաջելը կը սաստկա-  
ցրնէ, և թէւ վաճառականը իր խարազա-  
նովը անոր քանի մը հարուած կուտայ ,  
հաւատարիմ կենդանին դարձեալ չը դադ-  
րիր, կը հաջէ, ետ կը դառնայ, նորէն տի-  
րովը քովը կուգայ ու բոլոր շարժումներովը  
հասկցնել կուզէ որ տէրը ետ դառնայ , սա-  
կայն 'ի զուր . Երբոր կը տեսնէ որ տէրն իր  
դիտաւորութիւնը հասկնար՝ վեր կը ցատ-  
կէ ու ձիուն ոտքը կը խածնէ որ ալ կարօղ  
չըլլայ երթալու . սակայն վաճառականը  
խորհելով որ շունը կատաղած է, կառնէ  
ատրճանակը, կըսպաննէ կենդանին և իր  
ճամբան յառաջ կը տանի .

Բաւական տեղ ալ երթալէն զկնի յան-  
կարծ իր խուրճը կը յիշէ ու ձեռքը կեր-  
կընցընէ իր ետևը թամբին վրան կը քըսէ  
ու կ'սարսափի երբ կը տեսնէ որ չիկայ :  
Կփութայ եկած ճամբայէն վերադառնալ և  
ամենայն ուրեք կդիտէ իր շանը արիւնին  
կամիլները . վերջապէս եկաւ հասաւ խուր-  
ճը ինկած տեղին . Հոն պառկած էր խուր-  
ճին քովը նաև իր հաւատարիմ շունը : Երբ

տէրոջը հոն հասնիլը տեսաւ , արիւնլուայ  
կենդանին պոջը երեցուց , անոր ձեռուընեւ-  
ըլ լիզեց և մեռաւ :

## Ա.ՂՈՒԵՍ ԵՒ ԽԱՂՈՂ.

Քաղցած աղուէսուկն ի՞նչ ըրաւ չըրաւ ,  
Այգի մը մտաւ ,  
Տեսնէ որ խալողները  
կուզ կուզ կախուած կը վառէն .  
Սանամարին ոչ թէ միայն աչքերը .  
Ակռաներն ալ կրակ առին .  
Կուզերն որ ըսես իրարմէ հասուն ,  
Մէկ մէկ յակընթի նըման պըսպըզուն  
ինչ էր գիտես՝ ցաւալին ,  
Կուզերը խիստ բարձր էին .  
Մեր աղուէսուկը շատ աշխատեցաւ .  
Ցատկեց , ցատքատեց , չորսդին մանեկաւ ,  
Ճար մը չը դտաւ ,  
Մէկ կուզ մըն ալ փըրցնել չը կրցաւ .  
Կը տեսնէին աչուըները ,  
Չէին հասներ ակռաները .  
Ամբողջ ժամէն աւելի  
Պարապ տեղը կը յոդնի ,  
Կելնէ կերթայ բանն ու կըսէ .  
“ էս ի՞նչ կայ .  
Տեսքին նայիս նէ՝ գէշ չէ ,

Բայց կափկանանչ է ահա .  
Չես գտներ մէջը և ոչ մէկ հատիկ  
Հասուն խաղողիկ :  
Գիտեմ , բերանդ որ դրուին ,  
Խսկոյն ակռաներդ չարաչար պիտի հարուին :

## ՀՈԳԱ ԺԱՄԱՆԱԿԻՆ

“ Տէր ” ըսաւ Սարդիս էր տիրոջը ,  
“ մեր տանիքին վրայի մէկ կղմինդրը ինկեր  
է . հրամայեցէք որ շնորհի ” : — Բայց ծոյլ  
տանտէրը ըսաւ . “ էն , կղմինդր մը աւելի  
է եղեր կամ պակաս , ատով ի՞նչ կ'ըլլայ ” :  
Սակայն բաւական ժամանակէ մ'ալ ետքը  
սաստիկ հով մը փչեց , մտաւ պակաս կըզ-  
մինդրին ծակովը , երեցուց միւսներն ալ ի-  
րենց տեղէն : Յետոյ եկաւ անձրեւ ու ձիւ-  
նը , չուրերը քիչ քիչ ծակերէն ներս  
վազեցին և տանեաց գերանները փտտեցու-  
ցին : Հիմայ հարկ եղաւ որ հիւսը դար և  
ամբողջ տանիքը նորոգէր :

“ Շատ զնասուած է տունդ ” ըսաւ հիւ-  
սը . “ երեք հազար դահեկանէն վար չեմ  
կրնար առնել զնասը շտկելու համար . բայց  
ի հարկէ քանի մը տարի առաջ որ միայն  
մէկ կղմինդրը կը պակսէր՝ մէկ դահեկանով  
ալ կը լինար այդ բանը ” :

## ԸՆՉԱՏՈՒՓ

Օր մը երբ որ Պրուսիոյ թագաւոր  
Փրէտէրիկոս Բ. իր պատուհանէն դուրս կը  
նայէք, դիտեց որ մանկլաւիկներուն մին  
իր ընչատուփէն քթախոտ առաւ քաշեց.  
Անոր զրւարճութիւնը չընդմիջեց թագաւո-  
րը, բայց փոքր միջոց մը անցնելէն զկնի,  
դարձաւ պատուհանէն ու հարցուց երիտա-  
սարդին. « ի՞նչպէս է, ընչատուփին կը  
հաւնի՞ս: » Մանկլաւիկը թէև խիստ ամօ-  
թահարեալ էր, բայց ճշմարիտը խոստովա-  
նելով ըստ թէ իրաւ շատ պատուական է:  
« Ա՛ռ քեզի ուրեմն զայն, » ըստ թագա-  
ւորը, « բան մը որուն մեք երկուքս ալ  
աչք տնկեր ենք, չ'կրնար իմս և քուկդ ըւ-  
լալ »:

## ԳԱՅԼ ԵՒ ՄԱՐԴ

Անդամ մը աղուէսը կը պատմէր գայլին  
մարդուն զօրութիւնը. « ոչ մէկ կենդանի  
ալ » կըսէր, « չը կրնար անոր դէմ դնել,  
և անկէ աղատելու համար պէտք է որ խո-

րամանկութիւն գործածէ »: Գայլն ըստ,  
« եթէ կարենայի մէկ անդամ այդ մարդ ը-  
սածէդ մէկ հատը տեսնել, ես վրան կը-  
յարձակէի »: — « Ես քեզի այդ մասին կը-  
նամ օգնել » ըստ աղուէսը. « վաղը առ-  
տուանց կանուխ ինծի եկու և ես քեզ  
կը ցուցնեմ մարդը »: Գայլը արշալուսին ե-  
րեւցաւ, և աղուէսն առաւ զայն ու հետը  
տարաւ այն ճանապարհին քովը կայնեցուց  
ուսկից որսորդը ամեն օր սովոր էր անցնե-  
լու. Նախ և առաջ եկաւ զառամեալ ծեր  
զինուոր մը: « Մարդը աս է » հարցուց  
գայլը: — « Ոչ, » պատասխանեց աղուէսը.  
« աս՝ անդամ մը մարդ էր »: Յետոյ նոյն  
ճանապարհին տղայ մը եկաւ և կանցնէր դըպ-  
ըոց գնալու համար: — « Մարդը ան է »  
կրկնեց իր հարցումը անհամբեր գայլը: —  
« Ոչ պատասխանեց աղուէսը աս ալ չէ,  
ասիկայ մարդ պիտի ըլլայ տակաւին: » Վեր-  
ջապէս եկաւ որսորդը երկրերան հրացանն  
ուսին և թուրը ազդերը վրան կախուած:  
« Ահաւասիկ կուդայ մարդը ըստ աղուէսը  
դույարձակէ վրան ուղածիդ չափ, իսկ ես  
կերթամ իմ ծակս կը մտնամ: Գայլը հազիւ-  
թէ մարդը տեսաւ, քայլերը փոխեց նա և  
սկսաւ վրան գալ: Իսկ որսորդը՝ երբ որ  
զայն տեսաւ, շատ զղացաւ որ հրացանը  
մեծ դնտակով չէ լեցուցած, բայց և այն-

պէս նշան առաւ ու պարպեց կապարին  
փոքրիկ գնտակի կները դայլին երեսին։  
Դայլը երեսը ազւոր մը ծռմռտկեց, բայց  
մեծ բանի մը տեղ չը դրաւ ու յառաջ գը-  
նաց։ Որսորդը երկրորդ հարուած մըն ալ  
տուաւ երեսին։ Գայլը զինքը ժողվաեց ու  
սկսաւ դարձեալ մարդուն վրան երթալ։  
Հոս հանեց որսորդը թուրը պատեանէն և  
անով դայլին աջ ու ձախ կողերուն այնպիսի  
հարուածներ առուաւ որ յանդուգն անա-  
սունը արիւնաթաթախ դառնալով՝ աղուե-  
սին որջը կը բնտռէր։ “Ե՞՞ն, գայլ ախքար,  
ըսաւ աղուէսը։” շուտով եկար, ըսէ՝ բանդ  
մարդուն հետ ինչպէս վերջացաւ։ —  
“Մ՛ըսէր, ” ըսաւ գայլը։ Անս մարդուն զօ-  
րութիւնն բնաւ ասանկ չէի կարծած, Առաջ  
իր ուսէն գաւազան մը վար առաւ ու փը-  
չեց մէջէն։ չեմ գիտէր թէ ինչ էր, բայց բան  
մը թռաւ երեսիս դպաւ որ սկսաւ սար-  
սափելի կերպիւ քերուիլ։ Կրկին փչեց ծակ  
գաւազանէն և բաներ անցան քթիս ու աչ-  
ուըներուս առջեւէն որ կարծես թէ կայ-  
ծակ էր և կարկւուաւ։ Եւ երբոր ես իրեն  
շատ մօտեցայ քաշեց իրեն կողէն փայլուն  
ճաղ մը հանեց և անով զիս այն աստիճան  
դանակոծեց որ մերձ ’ի մահ էին։ — Հի-  
մայ կը տեսնես ու ըսաւ աղուէսը, “թէ  
դուն որչափ սնապարծ մէկն ես եղեր ։”

## ԾԵՐ ԶՈՒԱՊԵՏԸ

Ցիթէն՝ ծեր զօրապետը՝ որ մը քանի մի  
ազնուական անձանց հետ մէկտեղ Պրուսիոյ  
մեծ ֆրեդերիկոս թագաւորին հետ սեղանի  
նստած էր։ Ազնուականք ընդհանրապէս  
երկար կնստին հացի։ Հոս ալ երբոր խօսակ-  
ցութիւնը երկարեցաւ, զօրապետը որ 80  
ամօք ծերունի մ'էր քնացաւ։ Ներկայ եղող  
անձինքներէն ոմանք սկսան ծիծաղիլ, եւ  
կուզէին ծաղրել։ սակայն թագաւորը ար-  
գիլեց անոնց այդ գիտաւորութիւնը իր կա-  
կուզիկ յանդիմանութեամբը՝ ըսելով թէ  
“շատ կամաց խօսելու ենք որպէս զի մար-  
դուն քունը չխանգարենք, քանզի անիկայ  
մեր հայրենիքը պաշտպանելու համար շատ  
գիշերներ արթուն մնացած է”։

## ՓԱՂԱՔԱՄՈՒԿ ԵՒԴԱՇԱՄՈՒԿ

Քաղաքամուկ մը գացեր էր պտրտելու  
և եկաւ դաշտամուկի մը քով։ ասիկայ իր  
հիւրին կաղին, գարի ու ինչ որ ունէր՝ հա-  
նեց։ Բայց քաղաքամուկն ըսաւ։ “դուն  
խեղճ մուկիկ մ'ես։ Հոս այս չքաւորութեան

մէջ ի՞նչ կայ որ նստեր մնացեր ես : Եկու  
ինծի հետ , տե՛ս թէ քեզ որչափ փառաւոր  
կերակուրներ կկերցնեմ” . Դաշտամուկը ու-  
ղեկից եղաւ անոր ու եկան մոտան մէկ գե-  
ղեցիկ հոյակապ տուն մը ուր քաղաքամու-  
կը կը բնակէր . Երկուքն ալ ամբարը գնա-  
ցին : Հացը , պանիքը , ապուխտը , իւղը եւ  
ինչ որ մուկի մը մոքէն կանցնի , բոլորն ալ  
առատ առատ դրուած էին . քաղաքամուկը  
դարձաւ դէպի իւր ազգակիցը ու ըստ .  
“ Հիմայ կե՛ր ու զուարճացի՛ր , հանապազօր  
ես սապէս կերակուրներ կուտեմ” . Սակայն  
այդ միջոցին որ անոնք կուտէին և կխօսէին  
եկաւ մառանապետը և բանալիքները դռան  
ծակը խօթելով սկսաւ զայն բանալ : Մկերը  
խիստ վախցան ու փախան : Քաղաքացին՝  
ըստ որում վարպետ էր , իր ծակը շուտ մը  
գտնալով՝ հոն սպրդուեցաւ . բայց գիւղա-  
կան մուկը մէյմը աս պատն ՚ի վեր մէյմ’ալ  
այն պատն ՚ի վար շլուելով հաղիւ հագ  
կրցաւ պրծիլ :

Բայց երբոր մառանապետը ելեր դացեր  
էր՝ ըստ քաղաքամուկը . “ ա՛լ վտանգը ան-  
ցաւ . հիմա եկու , նորէն ուտենք ու զուար-  
ճանանք ” : Իսկ դաշտամուկը պատասխա-  
նեց . “ այո , քեզի դիւրին է այդպէս խօսիլ ,  
դռւն ծակը շուտով կը գտնաս մինչդեռ ի-  
մին երկիւղէս լեզիս պատռեցաւ . Թող քե-

զի ըսեմթէ ի՞նչ է իմ գաղափարս . դուն՝  
եթէ կուզես , քեզի համար հարուստ քա-  
ղաքամուկ եղիր , ես կմնամ ինչպէս որ էի՝  
աղքատիկ դաշտամուկ մը և կշատանամ իմ  
կաղիններովս : Տեսայ որ դուն ո՛չ մէկ ըոպէ  
ալ ապահով չես ո՛չ մառանապետէն , ո՛չ  
կատուէն , ո՛չ որոդայթէն . իսկ ես աղատ  
ու անվտանգ կելեմ ու կմտնամ իմ ծակս  
դաշտին մէջ :

## ԲԱՂԴՈՒ ԱՂՋԱԾ

Ատենով աղքատ մը կար մուրացկան  
չալած մաշած հին տօպրակ մը կըռնակը  
Դըռնէ դուռ կը պըտըտէր լական լական ,  
Տըդգոհալով կողբար իրեն վիճակը .  
Շատ անգամ “ Զարմա՛նք , կըսէր ,  
Լոնչպէս կըլլայ որ մարդիկ  
կը բնակին մեծ մեծ տներ ,  
Ծոցերնին ոսկիով լիք ,  
Ունին ամեն կերպ զրօսանք ,  
Հանդըստութիւն փառք ու պարծանք ,  
Ու դարձեալ չեն կըշտանար .  
Այն աստիճան ագահաբար  
Կընկնին նոր նոր հարստութեանց ետևէն ,  
Որ շատ անգամ կը զրկուին ձեռքերնին ալ  
եղածէն :

Աւասիկ, զոր օրինակ, սա դիմացի տան  
տէրը  
Զեռք զարկաւ առուտուրի, 'ի սկզբան լաւ  
էր դործերը .  
Յետոյ վաստակը կորուց . պէտք չէ՞ր որ  
դադրէր կենար,  
Առուտուրը մէկ ուրիշին ձեռքը տար,  
Եւ ինքը  
Խաղաղ հանգիստ անցընէր դոնէ մնացած  
կեանքը .  
Նա ելաւ՝ գարնան բերան հեռու տեղեր  
նաւ յուղարկեց .  
Ցցոը ոսկի դիզել էր. ծովը զնաւը կոտըրտեց.  
Բոլոր նորա կայքն ու ստակը  
Ընկղմեցաւ դնաց ծովոն յատակը .  
Կարծես թէ հարստութիւն չէր դիզածը ,  
Համա երաղ էր տեսածը .  
Մէկալ աղան մէնավաճառ ըլլամ ըսաւ ,  
Ու միխոններ վաստըկեցաւ .  
Բայց այն քիչ էր . ուզեց որ միխոնները  
կըրկին ըլլան .  
Ուստի աշխարհին բանն առաւ վրան .  
Նա ալքիչ ժամանակէն չարաչար կործանեցաւ  
Փըճացաւ .  
Զերկընցընեմ .  
Այսպիսի օրինակաց որ մէկն ըսեմ,  
Հաղարներ կան .  
Եւ լաւ է . թող իրենց չափը դիտնան .

Մէկ մ'ալյանկարծ բաղդնաղքատին երեւցաւ  
Ու ըսաւ .  
« ինծի նայէ՛, ես վաղուց կուղէի օգնելքեղի  
Ահա գըտայ տեղէ մը շատ մը ոսկի .  
Տօպրակեր բեր լեցընեմ .  
Բայց միայն տես թէ ինչ պայման կը դընեմ .  
Տօպրակիդ մէջ ինչ որ իյնայ  
իսկոյն ոսկի պիտի դառնայ .  
Ինչ որ յանկարծ գետին ընկնի՝  
Փոշիկի պէս պիտի ցնդի .  
Աչքդ լաւ բաց ,  
Ահա այժմէն ըսի քեղի .  
Ինձ այսպէս է հըրամայուած  
Որ այս պայմանն աղէկ պահուի .  
Գու տօպրակը հինէ, շատ մի լեցըներ  
Որ դիմանայ ու չը պատուի „ :  
Ողքտին ցնծութենէն շունչն ու լեզուն բըռ  
նուեր էր .  
Կարծէիր թէ ոտքը գետնէն կը կտրի ու կը  
թըռի .  
Ուսաւ տօպրակը շըտկըտեց .  
Ծակ ծուկ քըռթեց ու կարկտեց .  
Մէկ մ'ալ տեսնես,  
Ոնձընի պէս  
Բաղդին երկու ձեռքերէն  
Զէւ վւ ոսկին ընկըռտալէն  
Տօպրակին մէջը լցուեցաւ ,

Եւ է՛տ աղեկ ծանրցաւ ,  
“ բաւակա՞ն է , ”  
— զէ դեռ , չէ ,  
“ զը պատուի , աղեկ նայէ :  
— վախ չկայ , ամուր բան է ,  
“ նայէ , կրեսոս մը գարձար :  
— Քիչ մ'ալ խնդրեմ , քի՛չ մ'ալ ըլլար .  
Ո. փիկ մըն ալ ձգեիր .  
“ Ե՞՞ն բաւական է , վար դիր .  
Տես տես՝ տօպրակդ հիմա  
Զեռքէդ կելնէ կընկնի հա :  
— Մէկ պտղունց ալ — ըստ չ'ըստ ,  
Տօպրակն էր պատուտեցաւ ,  
Բոլոր ոսկին վար թափեցաւ ,  
Թափածն ալ ան էր՝ իսկոյն ցնդեցաւ .  
Բաղդը եղաւ աներեւոյթ , ու տօպրակը մնաց .  
Աղքատին ալ բոլոր յոյսը բաղդին հետը թը-  
ռաւ դնաց :

## ՈՍԿԻ ԳԹԱՏՈՒՓ

Օր մը հազարապետին մէկը բազմաթիւ  
սպայից հետ սեղան նստած ատեն , հանեց  
անոնց ցուցուց իրեն ոսկի քթատուվը որ  
նոր առած էր և խիստ գեղեցիկ էր : Ո. մեն-  
քը տեսան , հաւանեցան , դովեցին , և հա-

զարապետը ուրախութեամբ նորէն ծոցը  
դրաւ : Փոքը մի յետոյ ուղեց քթախոտ  
քաշել և տեսաւ որ տուփը գրպանը չէ .  
Բոլոր գրպանները փնտոեց , և չը գտնա-  
լով զարմացմամբ հարցուց . — քթախոտի  
տուփս ի՞նչ եղաւ . Տեարք , կաղաչեմ մէյ  
մը գրպաննիդ նայեցէք , թերեւս մէկերնիդ  
առանց ուշադրութեան գրպաննիդ գրած  
էք :

Իսկոյն բոլոր սեղանակիցք ոտք ելան և  
գրպաննին դուրս դարձուցին և քթատու-  
վը ոչ մէկուն մէջէն չելաւ : Մէջերնին մէ-  
կը միայն որ դնդին դրօշակիրն էր , գրպա-  
նը չ'դարձուց , տեղը նստած կեցաւ և ե-  
րեսին վրայ յայտնի այլայլութիւն մը կերև-  
նար :

— “ Ես գրպաններս չեմ դարձուներ ո  
զրուցեց , “ իմ պատոյս վրայ տուած խօս-  
քըս բաւական պիտի ըլլայ հաւտացնելու  
որ քթատուվն առած չ'եմ ” :

Կերակրէն յետոյ սպայք տեղերնին դար-  
ձան գլուխնին շարժելով , վասն զի ամենքը  
մտքերնին դրեր էին որ երիտասարդ դը-  
րօշակիրն էր դողը :

Երկրորդ առաւօտ դնդապետը զի՞նքը  
կանչել տուաւ և իրեն ըստաւ . “ քթատու-  
վըս դտայ : Գրպանիս ծայրը քակուած ըլ-  
լալով՝ բաճկոնիս աստարին մէջ սահեր ըն-

կեր է . Բայց արդ դուն ըսէ ինձ թէ ինչո՞ւ  
համար չուզեցիր գրպաններդ դարձունել,  
մինչդեռ միւս բոլոր սպայք սիրով դարձու-  
ցին ” :

Դրօշակիրը պատասխանեց . « սիրով կը-  
սեմ քեզի , գնդապետ , բայց միմիայն քե-  
զի : Կիտցիր որ ազգականքս աղքատ են .  
ոոճիս կէսը ծնողացս կուտամ , և խնայու-  
թեան համար ամեննեին պանդոկ չեմ եր-  
թար կերակուր ուտելու : Երէկ որ ինձ պա-  
տիւ ըրիր ու սեղանդ հրաւիրեցիր . ես ար-  
դէն ճաշիկս գներ գրպանս դրեր էի . Ամօ-  
թէս կը մեռնէի , թէ որ գրպանս դարձու-  
ցած ժամանակ գետին ձգէի ու հացի ու  
երշիկի կոորս ” :

Այս խօսքերուն վրայ գնդապետին սիր-  
տը խանդաղատեցաւ . « ազնիւ զաւակ մ'ես  
դուն ” . զրուցեց գեռահասակ զինուորին .  
« ուստի որպէս զի կարօղ ըլլաս ծնողացդ-  
աւելի գիւրութեամբ օգնել՝ մեծ ուրախու-  
թիւն է ինձ ե՛թէ ամեն օր սեղանս դաս ” :

Այնշափով դո՞հ չեղաւ : Դրօշակրին վր-  
այ եղած անիրաւ կասկածանքը փարա-  
տելու համար՝ մեծ խնճոյքի մը հրաւիրեց  
բոլոր սպայքը , առջենին պատմեց իր ազ-  
նուամիտ զինուորակցին անմեղութիւնը , և  
՚ի նշան իւր մեծ համարմանը անոր յիշա-  
տակ տուաւ այն ոսկի քթատուփը որ պատ-

ճառ էր եղեր անոր ծնողասիրութեան  
յայտնուելուն :

## ՎԻՃԵԼՄ ԹԵԼ

Գերմանիոյ կայսրն Ալբերտոս ուզելով  
Զուիցերին նուաճել տեղացւոյ երեւելինե-  
րըն իր կողմը որսաց ընծաներով ու խոստ-  
մունքներով , և իր իշխանութիւնը անոնց  
ընդունելի ըրաւ : Յետոյ Զուիցերիի այլեւ  
այլ նահանդացը մէջ բերդեր ու ամրոցներ  
շինել տուաւ , կուսականեր խրկեց պատ-  
ուիրելով որ վերջին խստութեամբ վարուին  
բնակչաց հետ . որպէս զի անոնք վերջապէս  
այլ եւս չ'դիմանալով ոտք ելնեն , և ինքն  
առիթ գտած ըլլայ երթալու բոլոր երկրին  
զինու զօրութեամբ տիրապետելու :

Այս կուսակալաց մէկը կէսէր՝ որուն  
յանձնուած էին Շուրից և Ուրի նահանգ-  
ները , անտանելի հապարտութեան հետ մէկ-  
տեղ անսահման անդթութիւն ալ գործա-  
ծելով , միտքը գրաւ որ գեղացիներուն հետ  
այնպէս վարուի՝ ինչպէս կը վարուին գե-  
րիներու հետ : Վրանին ունեցած մեծ ար-  
համարհանքը ցուցնելու համար ցցի մը  
ծայրն անցուց իր գլխարկը և Ալթօրֆ քա-  
ղաքին հրապարակին մէջ տնկել տուաւ և

Հրաման հանեց որ առջևէն անցնող դարձող մեծ պատկառանօք զայն ողջունեն՝ գլխարկնին վար առնելով. Ամենքը վախէն հնաղանդեցան. Միայն արիասիրտ ու հայրենասէր վիլհէլմ թէլ չուղեց գլուխ խոնարհեցնել այն անօրէն հրամանին. և հըրապարակին մէջէն անցաւ չտեսնելու զարնելով այն ծաղրապաշտօն գլխարկը. կէսլէր կատղած բռնել տուաւ զվիլհէլմ, առջեւը կանչեց և սաստիկ յանդիմանեց իր անհընաղանդութիւնը. Պատասխան չը տուաւ վիլհէլմ. իր անդարբառ լուռութեանը վրայ աւելի կատղեցաւ կէսլէր, և անլուր անգըթութիւն մտածեց. Վիլհէլմ դեռահասակ որդի մ'ունէր. կէսլէր գատապարտեց զինքըն որ որդւոյն գլխուն վրայ դրուած խընձոր մը հարիւր քայլ հեռուէն նետով զարնէ. իրաւ անուանի էր վիլհէլմ իր ճարտար նետաձգութեամբը, սակայն և այնպէս ահագին վտանգին առջև սոսկաց. սոսկացին նաև բոլոր հանդիսականք :

Բունաւորին հրամանաւը մանուկը կը բերուի. 'ի տեսիլ անմեղ որդեկին թշուառ հօր աղիքը կը գալարեն, սիրտը կը կըտըրտի, ամէն ջանք կընէ կէսլէրին կատազութիւնը իջեցնելու. ճար չ'ըլլար: կերդնու գաղանամիտ բռնաւորը զինքն ալ որդւոյն հետ սպաննելու՝ եթէ խիստն կամակա-

տար չհնազանդի, Յայնժամ թէլ սրտէն առ Աստուած կը դիմէ կապաւինի հոդեռանդ աղօթքով, արտասուօք կը գրկէ կը համբուրէ որդեակը, կը պատուիրէ որ անշարժ անփախ ու անխուով կենայ. ինքնին անոր գլխոյն վրայ կը դնէ այն մահագուշակ խընձորը, կը վազէ կերթայ նետաձգութեան որոշուած տեղը, աղեղը կը լարէ, հարուածը կուղզէ և նետը—կը թռչի ու խընձորը նետահար կիյնայ. իսկ անմեղ պատանեակը չ'վիրաւորուեցաւ:

## ՀԱՅԱՎԱՅԵԼ ՊԱՏԱՍԽԱՆ

Երբոր տաճկաց Տուղրիլ թագաւորը Հայաստան արշաւեց, մեր նախարարներէն ոմանք կարուց Գագիկ թագաւորին հետ միաբանեցան և անոր դէմ ելան. Ոսոնց մէջ էր նաև վանանդացի թալթուլ քաջ իշխանը, որ նախարարաց շատերուն իյնաէն յետոյ գերի բռնուեցաւ ու Տուղրիլին տարուեցաւ. Պատերազմին մէջ թալթուլ զարկեր չարաշար վիրաւորեր էր Արսուրան Պարսիկ իշխանին որդին որ Տուղրիլին սիրելին էր: Բաւաւ անոր Տուղրիլ. « Եթէ պատանին առողջանայ՝ զքեզ կազատեմ, իսկ եթէ մեռնի՝ զքեզ անոր զոհ կընեմ»: « Եթէ հարուածը իմա է՝ չապրիր » պա-

տասխանեց աներկիւղ վանանդացին։ Շատ չանցաւ՝ պատանին մեռաւ՝ Տուղթիլ փոխանակ այնպիսի քաջ մը քովը պահերու՝ վայրենամիտ խոստմունքը վրան կատարեց, զինքը մեռցնել տուաւ, և աջ թեր կըտրեց Արտուրանին դրկեց ըսելով։ “Որդիդ վատ բաղկէ մեռած չէ”.

## ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ ԵՒՄԵՆՇԻԿՈՎ

**ՄԵՆՉԻԿՈՎ ծաղարարի** (պօղաշաճը) մը մանչ էր։ Մեծն Պետրոս անոր խելքին հաւնելով մեծամեծ իշխանութեանց հասուց ։ ՄԵՆՉԻԿՈՎ ալ անգամ մը պատերազմի մէջ իր բարերարը վտանգէ աղատելու համար կեանքը մեծ վտանգի մէջ դրեր էր։

Այս աղքատութենէ վեր բարձրացած իշխանը զարմանալի կատարելութեանցը հետ ունէր նաև մեծամեծ թերութիւններ. իր արծաթսիրութիւնն ու իշխանասիրութիւնը չափ ու սահման չունէին. հասարակաց շինուածոց համար որոշեալ ստակէն մեծ գումար մը առեր իրեն սեպհականեր էր։ Երբոր կայսեր հետ կերթային Ազով քաղաքը պաշարելու, ՄԵՆՉԻԿՈՎ ճամբանի մացաւ որ զինքը մատներ են և ՄԵծն Պետրոս իմացերէ իրեն ծանր յանցանքները։ կայսեր լուութիւնն ու պաղ դէմքը՝ ու

ըուն անողոքելի խատութիւնը լաւ գիտէր ՄԷՆՉԻԿՈՎ, անոր երեսէն իշխալը կը գումէին. արդէն ինքինքը ’ի ծագաց փառաց և պատոյ ՚ի վիճ թշուառութեան և խայտառակութեան ընկած կործանած կը տեսներ ու կը սոսկար. և հետզիետէ միտքը կուգային Սիակերիոյ անմարդաբնակ ու ամյի անապատները, երկարատև աքսորանաց մինակութիւնը, գլխուն սպառնացող կացինը։ Այսպիսի դառն մտածութեամբ արիւնը կը վառի կը բորբոքի, վըսան վնասակար ջերմ մը կուգայ. ողորմելի հիւղի մը մէջ կանկ կառնու, և երեք շաբախ հոն կը կենայ ցնորակոծ և սոսկալի մտատանջութեան մէջ ընկղմած։ Վերջապէս խելքը զլուխը կուգայ կարթննայ և իւր անհանդիստ աչուըները խեղճ խուցին չոցս կողմը շրջելով կը տեսնէ որ ամենքը զինքը թողեր են. մէկ մարդ մը միայն զինքը կը խընամէր, և մէկ ձայն մը միայն իւրեն մըսիթարական խօսքեր կարտարերէր, և այս ձայնն էր—ՄԵծն Պետրոսին ձայնը։

Այս անակնկալ տեսութիւնն իրեն կեանք ու ոյժ կուտայ. ջերմաջերմ արտասուք երեսը կողողեն. « Տէ՛ր արքայ, գուն ես », կը գոշէ : « Այս ես եմ, երէք շաբախէ որ այս սենեկէն հեռացած չեմ», կը պատասխանէ կայսրը : « Ուրեմն դեռ զիս

կը՝ սիրե՞ն „ կը կրկնէ Մէնշիկով . “ ուրեմն  
ինձ ներեցի՞ր և յանցաւորիս դատապար-  
տութեան վճիռ չ' տուիր : ” — “ Ով թշուա՛ռ  
կրսէ Պետրոս զինքը գրկելով , կրնայիր  
կարծելոր ես մոռանամ կեանքս ազատելու .  
Յանցանացդ դարման ըրէ , միւսանգամ  
անոնց մէջը մ' իյնար , և միշտ վստահ ե-  
տիր վրաս ” :

Խելացիին մէկը կըսէ իր ծառային որ  
երթայ արևաժամացուցին նայի թէ ժամը  
քանի է : “ Բայց տէր , գիշեր է , ինչպէս  
նայիմ ” , կը պատասխանէ ծառան . — “ Գի-  
շեր թող ըլլայ , վնասն ի՞նչ է ” կը կրկնէ  
հանճարեղ տէրը . հետդ ճրադ ա՛ռ որտես-  
նես ” :

## ՆԿԱ.ՐԱ.ԳՐՈՒԹԻՒՆՔ

### ԾԱՌ

Ծառի մը վրայ կը տեսնենք բուն , ճիւ-  
ղեր , սատեր և տերեներ : Արմատը հողին  
մէջը կը գտնուի . դարնան ատեն ծառը  
ծաղիկներ , իսկ աշնան ատեն պտուղներ  
ունի : կան պարտիզի , դաշտի և անտառի

ծառեր : Այն ծառերը , որնք նեղ ու սը-  
րածայր տերեներ ունին փուշի պէս՝ կը կոչ-  
ուին փշատերեւք , իսկ մնայածները որոնց  
աերեները տափարակ և լայն են տերեւ-  
որ ծառեր .

## ՏՈՒՆ

Տունը ունի հիմ մը , չորս որմեր և ա-  
ռաստաղ մը . Հիմը գետնին տակը կը գըտ-  
նուի , անոր վրան կը կենայ տունը և ըս-  
տորերկրեայ յարկն ալ անոր մէջն է . Այս  
որմերուս մէջն են սրահները , սենեակները  
ու խօհանոցը որնք իրարմէ բարակ պա-  
տերով զատուած են . Որմերուն ու պատե-  
րուն մէջ կը գտնուին պատուհաններ և  
դռներ . Ցանիքին տակը վերնայարկ կ'ըս-  
ուի .

Եթէ տուն մը քանի մի յարկեր ունե-  
նայ , անոնք սանդուղքներով իրար կը  
հաղորդակցին :

Տուները մեծ կըլլան կամ փոքր , որ այլ  
և այլ նպատակներու կը ծառայեն և զա-  
նազան անուանք կը կրեն՝ զոր օրինակ բը-  
նակելու տուն կամ բնակարան , դատա-  
տանատուն , դպրատուն , գինետուն , մաք-  
սատուն , ևն :

## ՄԱՐԳԱԳԵՏԻՆ

Գրաբնան ատեն մարգագետինք կը կանաչանան . Մարդագետիններուն վրան կը բուսնին խոտեր , ծաղիկներ և տեսակ տեսակ բանջարեղինք . Մարգագետիններուն շատերը կամ գետի կամ վտակի մը քով կրլան և մէջերնէն ալ առուակներ կը վազեն որոնց ափանցը վրան ուռենիներ կ'ըւլան տնկուած . Ոմառը կը հարուին խոտերը , կը չորցուին ու կը պահուին ձըմեռաւան համար .

## ԱԳԱՐԱԿ

՚Ի սկզբան կանաչ մարգագետնի կը նըմանի ագարակը . սակայն տակաւ առ տակաւ կը բուսնին ցողունները և կերևնան հասկերը . թգոստոսին բոլոր արմտիք հասուն և գեղին կ'ըլլան ու նաև ննձուելու կամ կորուելու . պատրաստ . Որտին մէջը կարմիր և կապոյտ ծաղիկները առաւել տրշայոց են հաճելի քան թէ երկրագործ գիւղականին . աւելի ևս կը ցաւի գիւղականը

եթէ այն ծաղիկները չափաղանց շատ բուսնին .

Արտը հնձուելէն զկնի՝ խուրձերը կալը կը բերէն ու հոն կը կասեն , մէջէն ելած մաքուր ցորենը ջաղաց կը տանին ալիւր շինելու համար . ալիւրէն հացագործը կեփէ հացը :

## ԵՐԿԻՆՔ

Երկինքը մերթ պարզ ու պայծառ , մերթ պղտոր և ամպերով պատաճ կ'ըլլայ : Եթէ երկինքը պայծառ է՝ արեը կը փայլի և օդն ալ մաքուր կապուտակ գոյն կունենայ . իսկ երկինքը պղտոր ատենը՝ կարծեսթէ բոլոր տիեղերքի վրան մոխիր թափերն , կամ թէ խաւար և ծանր ամպեր կան կախուած օդին մէջ : Երբոր արեը կելնէ կամ մար կը մոնէ՝ երկնից արևելեան և արևմտեան կողմերը կարմիր և գեղին գոյներով ներկուած կերեւնան :

Որուան ատեն երկնից կամարին վրայ կը փայլի արեը , իսկ գիշերը լուսինն ու աստղերը : Երկինքը մեր աշքին մեծ կլոր գմբեթի կը նմանի , որուն այն տեղերը որ երկրիս կը գպչին՝ հորիզոն կանուանուի :

## ԼԵՌ ԵՒ ՀՈՎԻՏ

Գետնէն բարձրացած տեղուանքը այլ  
և այլ անուններ կը կրեն, ինչպէս թումբ,  
բլուր, լեռ, լեռանց շղթայ. իսկ ցած ու  
խոր տեղերը կը կոչուին ցորեր ու հովիտ-  
ներ : Եթէ այն բարձրութիւնքը այնչափ  
շատ վեր ելած չեն՝ կըսուին թումբեր կամ  
բլուրներ. իսկ եթէ գետնէն քանիմը հազար  
կամգուն և առաւելևս բարձրեն՝ կը կոչուին  
լեռներ. Լերանց գօտի կամ շղթայ կըսեն  
այն լեռներուն որոնք իրար փակած են և  
շատերը 'ի միասին երկարաձիգ շարք մը  
կամ թէ խոննեալ իրարու քով խումբ մը յիլ  
կազմեն. Այն հովիտները որոնք լերանց եր-  
կար ուղղութեանը կը հետևին՝ կը կոչուին  
երկարաձիգ հովիտներ, իսկ անոնք որ խո-  
տորնակ ինկած են հատանող հովիտք. Չո-  
րերն ալ հովիտներ են բայց կարճ, նեղ և  
խիստ զառ՝ ի վարներով.

Լեռ մը կունենայ ստորոտ կամ ոտք,  
կողեր և գագաթ . իսկ հովիտը՝ հովտավայր  
և կողմանք .

Լեռները տեսակ տեսակ են. կան որ  
գագաթն մինչև ստորոտը խիստ առկախ-

ուած են, ասոնց գագաթը ելնելը երբե-  
մըն շատ դժուարին է, իսկ կան այնպիսիք  
ալ որոնք տակաւ առ տակաւ կիջնան. կան  
որ մերկ և չոր են, կան ալ որ անոնց վրան  
անտառներ ու բոյսեր կը գտնուին. Ուրիշ-  
ներն ալ շարունակ ձիւնով պատուած են:  
Հովիտներուն ալ զանազան տեսակները կան.  
ոմանք հարթ, ոմանք լայն, կամ ոմանք  
խոր և ոմանք բարձրակողք են, նոյնպէս  
ալ կան ամայի ու անբնակ, ապառաժուտ  
կամ բերբի և մարդաշէն հովիտներ :

## ԶՈՒՐԻՔ

Լերանց ոտքին քով կը բղխի աղբիւրը  
և ուրիշ փոքր ջրերու հետ խառնուելով  
միանալով առու մը կը կաղմէ, որ գաշտին  
մէջ շիտակ պըտուտածն կը հոսէ կերթայ  
կամ թէ կը կարկաչէ : Առուները իրենցմէ  
աւելի մեծ ջրի մը մէջը կը խառնուին, ո-  
րուն վտակ կըսեն, որ երբեմն նաւակներ  
կամ մակոյկներ առած կը տանի : Մեծ վը-  
տակ մը որուն ընթացքը անսովորական մեծ  
է, և բաւական մեծ ալ լայնութիւն ունի,  
կը կոչուի գետ : Ասոր ալեացը վրան կը լո-  
ղան շոգենաւներ և առագաստաւորք ո-  
րոնք գետեղբեայ քաղաքները իրար հետ

հաղորդակցութեան մէջ կը պահեն : Գետը  
վերջապէս կամ ծովի մը կամ ովկիանոսի մը  
մէջ կը թափուի . Ովկիանոսը աշխարհիս վը-  
րան այն անհուն ջուրց ժողովներն է որ  
երկրին մեծադոյն մասը կը ծածկեն .

Բաց ՚ի հոսող ջրերէն կան նաև կայնած  
ջրեր զոր օրինակ ճահիճներն ու լճերը :

## ԴԱՇՏ ԵՒ ԱՆՏԱՌ

Այն կտոր մշակեալ երկիրը՝ որ թէ հով-  
տին մէջն է , թէ բլուրի մը վրան , թող ա-  
դարակ ըլլայ թող մարգագետին՝ բորովին  
ուրիշ կերպարանք ունի քան թէ անտառը:  
Դաշտը՝ ինկած է բաց ու մերկ մեր աշացը-  
առ ջեր , իսկ անտառը՝ կը պահէ ու կը քօ-  
դարկէ իր բարձր և խիտ առ խիտ բու-  
ած ծառերովը ինչ որ մէջը կը գտնուի :  
Թէ և անտառաց մէջն ալ կը գտնուին ճա-  
նապարհներ ու շաւիղներ , բայց և այնու-  
աւելի գիւղին է մոլորիւ անտառի քան թէ  
դաշտի մը մէջ : Ուստի և շատ անձինք կը  
վախնան անտառէն , մանաւանդ գիշեր ա-  
տեն : Դաշտին մէջ լաւ կը տեսնուի մար-  
դուս ձեռքին հետքերը . իսկ անտառին  
մէջ մեծ մաս մը իր ուզածին պէս կը բուս-  
նի ու կածի : Դաշտային կենդանիքն ու

բոյսերը աւելի ծանօթ են քան թէ անտառ-  
ույինք . Անտառին մէջ շատ անգամ մեզի  
ծաղիկ մը , կենդանի մը , ճճի կամ թի-  
թեռնիկ կը պատահի զորն մենք չենք տե-  
սած և մեզի անծանօթի ու օտարի նման  
կերևնայ :

## ՏԱՆՉԻ ԽՆՁՈՐԻ ԵՒ ՍԵՐԿԵՒԼԻ

1. ՏԱՆՉԻ . — Անտառներու մէջ կամ ու-  
րիշ տեղեր բուսած վայրենի տանձի ծա-  
ռէն յառաջ կուգայ՝ ընդհանրապէս պատ-  
ուաստի միջոցաւ , և իր պառւղովը երկե-  
լի և օդտակար ծառերէն մին է : Հաւկը-  
թաձեւ և ամբողջ կամ ատամնաձեւ եղնե-  
րով տերեներ ունի որոնք աշնան ատեն կար-  
մրկէ կ գոյն մը կ'ըստանան և լուսոյ առջե-  
բռնուած ատեն խիստ գեղեցիկ ջիղեր կը  
ցուցնեն : Ճանձենւոյն ծաղիկը հինգ ճեր-  
մակ տերեներէ կաղմուած պսակ մը ունի  
որուն մէջ շատ փոշոյ անօթներ կան : — Պը-  
տուղը շատ մսոտ ու համեղ է , ներսիդին  
մաշկի նման հինգ խորշեր բաժնած սերմա-  
րան ունի , որուն մէջ սերմերը կ'ըլլան :

Ճանձին շատ և շատ տեսակներ ունի  
որոնց պտուղներուն թէ համը թէ ձեր թէ  
մեծութիւնն ու հասուննալու ժամանակը ի-  
րարմէ խիստ տարբեր են . բայց ամենա-  
պատուական տանձերը Ասից մէջ նա մա-

նաւանդ չայաստանու տաք կողմերը կը գտնուին :

Տանձին շիկակարմիր գունով ամուր փայտ մ'ունի որ հիւմնութեան ու ճախարակագործութեան մէջ շատ կարեօր է :

2. ԽՆՉՈՐԻ. — Ասոր ալ սեռը առաջինին կը վերաբերի և անոր նման վայրի ինձորի ծառէն յառաջ եկած է : Տերեւները հաւ կըթաձե և ծայրերը քիչ մը սուր, տակի դիերը մազոտ, ծաղիկներն ալ դրսիդիէն վարդագոյն կարմիր, իսկ ներսի կողմէն ճերմակ և անուշ հոտով են . . . Պտուղը հասարակօրէն կըոր ձեռվ կ'ըլլայ : — Թէև ասոր տեսակները տանձենւոյնշափ շատշեն, բայց ասոր մէկ քանի տեսակէն գինի, քացախ և ոդի կը շինեն : Խնձորներուն ալ ազնիւ տեսակները Ասիա կը գտնուին, և անկէ տարածուած է աշխարհիս վրան :

Խնձորի ծառին փայտը կակուվ է և այսելէ զատ բանի մը պէտք չէ :

3. ՍԵՐԿԵԼԻՒ. — Առջիններուն սեռին կը վերաբերի՝ հաւ կթաձե ու ամբողջ եզրներով, տակի դիերը մազոտ տերեւներ ունի : Ասոր հայրենիքն ու տեղը բուն արեւելքն է . . . անկից տարուած է բոլոր աշխարհ : — Իր պտուղը կամ սերկելիը դեղին գունով ու բարակ մազերով է, և սքանչելի հոտ ու համ ունի : Ասոր սերմը կամ կուտերը շու

զեքի նման հիւթ մ'ունի որ շատ դեղերու մէջ կը գործածուի . իսկ փայտը բաւական ամուր ըլլալուն համար հիւսերուն ու ճախարակագործներուն կը ծառայէ . Սերկելիին շիտակը չ'ըլլար . . . ասոր մեծցածները միշտ կամյայս կամ յայն կողմ կը ծռին կը թեքին :

## ՆՇԻ ԿԱՄ ՆՇԵՆԻ . ԵՒ ԴԵՂՁԻ

Ա. ՆՇԻ. — Ասոր տերեւները նշորաձե ու ատամնաւոր են, ծաղիկները՝ որոնք իրարու քով զոյդ կ'ըլլան՝ բաց կարմիր գունով են . . . Նշենւոյն ծաղիկը հինգ տերեւով պսակ և շատ փոշւոյ անօթներ ունի : Այս ծառին հայրենիքն ու բուն տեղը հիւսիւսային Ափրիկէն է, որ անկէ ալ շատ տեղեր տարածուած է . . . Երկրիս տաք տեղերը՝ արգէն Մարտ ամսոյն՝ իսկ քիչ մի ցուրտ երկիրները՝ Ապրիլին կը ծաղկի : — Իր պտուղը որ քիչ մը կամ խիստ կարծը կեղեւի մէջ փակուած կըլլայ, երկու տեսակ է՝ անուշ և դառն : Անուշ նուշը մարդուս մննդարար ըլլալուն համար խիստ կը գործածուի, բայց գժուարամարս է : Նուշէն մամով տեսակ մը պատուական իւղ կը հանեն, և զով ու սիրուն խմելիք մ'ալ կը շինեն : Իսկ դառն նուշը փորոտեաց որդերուն մէկիկ դեղ է,

բայց թէ որ մէկը անկէ շատ ուտելու ըլլայ , մէջը թոյն ըլլալուն համար՝ կը թռւնաւորի . Նուշին ազնիւ տեսակը Յունաստան կը դտնուի :

Բ. ԴԵՂՋԻ.— Դեղձենին ալ նշենւոյն սեռին կը վերաբերի . հինգ մինչև տասը մէթրօ բարձր կ'ըլլայ աս ծառս . տերևները երկար նշրածնեն ատամնաւոր եղեքով , վարդագոյն կարմիր և անուշ հոտով ծաղիկ կը բանայ : — Իր պտուղը գրեթէ կը լորձենով է և վրան կամ մերկ կ'ըլլայ կամ մազոտ . շատ համով է , ջրի և մառտ . ասկէ մեր կողմերը երկու տեսակը կը գըտնուի՝ մինն որ միսը կորիզին կամ կուտին փակած է , իսկ միւսին միսէն կուտը զատուած է . Ասոր կորիզին արտաքին կողմը խորշոմոտած է : կան և տեսակներ որոնք բնաւ կուտ չունին : Դեղձին ալ նշենւոյն հետ ՚ի միասին կը ծաղկի՝ այսինքն կամ Մարտին կամ Ապրիլին :

## ԿԵՌԱՍԵՆԻ

Կեռասենին չոր գետին կը սիրէ , խիստ շուտ կաճի և շատ երկար կեանք չունենար . շատ երկար ապրողը վաթսուն կամ եօթանասուն տարեկանէն շանցնիր . Տերեւները

հաւկիթաձև են ու եզերքները ատամներ ունին , ծայրերն ալ սուր են . իսկ ծաղիկները փունջ փունջ , երկայն կոթերով ու ծերմակ են , որոնք հինգ տերևներով պըսակներ և շատ փոշւոյ անօթներ ունին . կեռասի ծառին բուն տեղը Ասիա է , ու անկէ տարածուած է երկրիս այլ և այլ կողմերը : — Իր պտուղը բոլոր պտուղներէն կանուխ կը հասնի , շատ սիրուն ու համով է , գոյնը սե՝ բաց կամ գոց կարմիր , բաց դեղին և կամ ուրիշ ներկով կ'ըլլայ : Այս ծառիս փայտէն կերպ կերպ կահ կարասի կը շինուի , մանաւանդ սրինգներ :

## Թ.ՓԵՐ

Թփերը կը տարբերին ծառերէն իրենց ցած հասակովը . և հազիւ թէ գետնէն փոքը ինչ կը բարձրանան՝ անմիջապէս ոստեր ու ճիւղեր կարձակին կամ արդէն գետնէն քանի մը ճիւղեր իրարու քով կելլեն : Թըփերուն մէկ մեծ մասը մարդուս օգտակար է , իսկ միւս մեծ մաս մ'ալ պարտէզներու և ուրիշ տեղերու իրրե զարդ կը ծառայէ : Ա. ՈՐԹ.—Այս թուփը մարդուս խիստ սիրած մշակած տունկերէն մին կամ առաջնըն է : Թէ՛ անոր համար տարած խընամուց թէ զանազան երկիրներու եղանակին

ու գետնին որպիսութեանը պատճառւաւը՝ որ  
թին տեսակները հազար չորս հարիւրը ան-  
շած է։ Ասոր այսչափ պատիւ տալուն պատ-  
ճառը իր անուշ և պատուական պտուղը՝  
խաղողն է, որ ոչ թէ միայն իբրև պտուղ  
կուտուի այլ անկէ դինիներ ևս կը չինեն,  
և անոր չորցուցածին ալ չամիչ կըսենք։—  
Որթը սրտաձև և ակռայ ակռայ տերեներ  
ունի, իր ծաղիկը տեսք մը չունի բայց հո-  
տը անուշ է։ Որթը բուն Ասիաէն տարուած-  
երկրիս բարեխառն տեղերը տարածուած-  
է։ Հիւսիսային գաւառներու խաղողը քաղց-  
րահամ չ'ըլլար այլ թթու, իսկ երկիր մը որ-  
չափ գէպի հարաւու կողմերը գտնուի՝ ա-  
նոր խաղողն ալ այնչափ ընտիր և դինին  
այնչափ ազնիւ կըլլայ։—Խաղողի կուտերէն  
տեսակ մը իւղ կը հանեն։

Բ. ՊՂՊԵՂ. — Այս տունկը աշխարհիս  
խիստ տաք տեղերը և գլխաւորաբար ա-  
րեւելեան Հնդկաստան կըլլայ։ բարակ ու  
վրան կունտ կունտ բան մ'ունի. ծաղիկնե-  
րը երկայն ու բարակ ձեւով են։—Պտուղը  
որն որ ամենեցուն արդէն ծանօթ է՝ առաջ  
կանաչ գունով լետոյ կարմիր և վերջապէս  
սև կըլլայ։ ձերմակ պղպեղ ալ կայ որ սկէն  
տարբեր տեսակ մը չէ, մինակ սա զանա-  
զանութիւնը կայ մէջերնին որ սև տեսակը  
գեռ կատարեալ չը հասած վրցուած է,

իսկ ճերմակը բոլորովին հասածն է. ուստի  
առաւել ևս զօրաւոր և ազդու է։ Պղպեղը  
խոզերու և ուրիշ քանի մի կենդանիներու  
մահացու թոյն է.

Գ. ՄՈՒՐԵՆԻ ԿԱՄ ՄՈՒՐՄԵՆԻ. — Տունկ  
մ'է որ ամեն տեղ կը բուսնի, երկայն բա-  
րակ ու վշտ ճիւղեր, խիստ բարակ մա-  
զոտ տերեւներ ունի, ծաղիկն ալ ճերմակ  
է. իրեն պտուղը զորն մօր կամ մոշ ալ կը  
կոչեն՝ մութ կապուտակ գունով է. ասկէ  
տեսակ մը օղի կը հանեն։

Դ. ԱԶՆԻԻ ՄՈՒՐԵՆԻ. — Առաջնոյն տեսա-  
կին և սեռին կը վերաբերի, ճերմակ ծա-  
ղիկ ունի, տերեւներուն տակի դին մազոտ  
է, իսկ պտուղը որն որ Յունիսին կը հասնի,  
կարմիր գունով կամ գեղին կըլլայ և համն  
ալ շատ ընտիր ։ Ասոր ջրէն պաղպաղակ մը  
կը շինեն, և բաց ՚ի գմանէ նաև օղի և  
քացախ կը հանեն։

## ԲՈՅՑՄԵՐ

1. Մարդո չը կրնար ըստ արժանւոյն  
զարմանալ բուսոց շատութեան ու բազմա-  
տեսակութեանը վրայ որոնցմով բնութիւնը  
իւրաքանչիւր տարի երկիրը կը ծածկէ։  
Մի միայն այն փոքրիկ սահմանափակ տե-  
ղը զորն մարդուս աչքը մէկ անգամ նայե-

լով կը տեսնէ , -որչափ տարբեր տարբեր ձեւեր , գոյնզգոյն երանդներ և ինչ ճոխութիւն այս հայրագոյն զօրութեան և անհաւանելի իմաստութեան դործարանին մէջ . Աչինչ նուազ կօքանչանանք այն արագութեանը վրայ որով բնութիւնը ամայի դաշտից , ձգուած ճանապարհներու , լերկ ապառաժներու , պատերու և տանիքներու վրան եղող պարապ տեղերը՝ ուր մի միայն մէկ ափ լնդունակ հող ինկած է , սերմեր կը ցանէ և խոտ , բանջար , այլ և այլ տընկեր ու թուփեր կը հանէ ու երկիրը կը ծածկէ . Այս բանը յաճախ տեսեր ենք բայց դիտողութեան առած շենք , որովհետեւ ՚ի մանկութենէ սորված ենք այսպէս տեսնելու : Մեծագոյն իմաստութիւնը կը ցուցնէ զինքը իրաց պարզ և բնական շարակարգութեանց մէջ , սակայն շատ մարդ զայն չը ճանչնար ճիշդ անոր համար որ այնպէս բնական ու պարզ է .

2. Բուսոց մեծ մասը աճման ու բազմացնան համար զարմանալի զօրութիւն մ'ունի , ինչպէս իւրաքանչիւր հմուտ երկրագործ առ քաջ դիտէ : Հազար հունտը մէկ բայսէ մը՝ քանի որ կեանք կը վարէ՝ թէւ ասիկայ շատ մեծ թիւ մը չէ , սակայն ամենը ալ չեն աճմեծ թիւը չէ : Մէն մի ծխախոտի տուն-

կի վրան 40,000 սերմի հատիկներ հաշուեր են . զորս անիկայ սոսկ մէկ տարւոյ մէջ հասուցեր է . լնդ հանրապէս կընդունուի թէ կաղնին կրնայ 500 տարի ապրիլ . Որդ եթէ առ նուազն գիցուք թէ այս երկար միջոցիս կրնայ կաղնի մը միայն 50 անդամ պառող տալ և իւրաքանչիւր անդամը իր բոլոր ճիւղերուն ու ուստերուն վրան մի միայն 500 հատ կաղնին բերել որոնք յարմար են ճիշդ այնպիսի ծառ մը եղանելու , յայնժամ կաղնին իր կենացը մէջ 25000 իրեն նման ծառերու սերմերը ծնած կըլլայ : Ընդունինք առ այժմ թէ այսպէս կրնայ ըլլալ , այն ատեն կըսենք թէ այն մէկ կաղնին իր երկրորդ սերունդը՝ այսինքն թոռները՝ համրած ժամանակ 625 միլիոնով կաղնուոյ անտառ մը կը տեսնէ աշացը առջել : Թէ մէկ միլիոնը կամ հազար անդամ հազարը որչափ է , ամենայն ոք կը կարծէ թէ արդէն գիտէ , բայց դարձեալ ամեն մարդը գիտէ . Քանզի եթէ ամբողջ տարի մը Յունուարի մէկէն սկսելով մինչեւ Դեկտեմբերի 31 ը ամեն օր հազար հատ գիծ գծերւ ըլլաք տախտակի վրան , յայնժամ տարւոյն վախճանին տակաւին մէկ միլիոն գիծ չէք գծած , ենք գծածը մի միայն 365,000 է , եթէ երկրորդ տարի մ'ալ գծելով շարունակելու ըլլաք տակաւին միլիոնի չէք

հասցներ ձեր գծերը , միայն երրորդ տարւոյ Սեպտեմբերի 26 ին մէկ միլիոն գիծ կունենաք . Եւ մեր կաղնի անտառը 625 այնպիսի միլիոն ծառեր պիտի ունենար : Այսպէս ալ կը սերին ու կը բազմանան նաև միւս բոլոր բոյսերը բայց առաւել ևս կարծ միջոցի մէջ , բաց 'ի ուրիշ կերպով այսինքն ճիւղերով , արմատներով և ուրիշ կերպով աճումնէն : Հիմա ով որ անդամ մը զարմացեր սքանչացեր է բնութեան այս հարստութեանն ու առատազօրութեանը վըրայ , յայնժամ անոր համար այլ ևս առիթ չ'մնար բուսոց բազմութեանը վըրայ հիանալովյափառակուելու . թէև ամըստամէ 1000 հատեր և հունտեր ու սերմեր կը կորսուին կը փճանան մարդիկներէ կամ կենդանիներէ ուտուելով , երկրին մէջ ոտնակոխ ըլլալով եւ անյաջող եղանակներէ վնասուելով , բայց և այնու իւրաքանչիւր ամ ուրախառիթ ու անվնասելի աւելորդութիւն մը ունի : Բոլոր աշխարհիս մէջ ցանելու համար սերմ կը գտնուի . պակասածը միայն երկիրն է ու հողը :

## ԲՈՒՍՈՅ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

3. Արդ եթէ իւրաքանչիւր հասուն սերմ՝ որ իր մայր բոյսէն կը զատի , ուղ-

դակի վար հողին վրան իյնար և տեղը մընար , ամենքն ալ իրար վրան կը խռոնէին և ոչ մէկը չէր կարողանար աճել և այն տեղերը ուր բոյս չը կայ , բոյս ալ չը պիտի ըլլար : Բայց Աստուած այս բանս մեզմէ առաջ իմանալով մեր խրատներուն կարու չէր : Քանզի քանի մը հասուն հունտեր իւրենց մէջը եղող աներեւոյթ զօրութեամբը իրարմէ կը հեռանան , ոմանք ալ խիստ փոքրը և թեթեւ գորով խաղաղիկ մը հոգով հեռու տեղ կերթան . ոմանց վրան բարակ փետուրներ կան զորս տղայք խաղալով կը փշեն և ակամայ բնութեան կը ծառային . ոմանք ալ իրենց վրան բարակիկ և լոյնկէկ թեեր ունին որոնցմով կարծես թէ կը թըռին ու հեռուն կիյնան : Երբոր ամառուան ատեն , յորդառատ անձրեներէն առաջ՝ մըըըկալից ամպերը կելլան ու թաթառներն ու փոթորիկները օդը խառնելով տակնու վրայ կընեն , յայնժամ բնութիւնը իր բարերարութեանցը մին գործադրելու մէջ է և իր սերմերը կը ցանէ , մինչդեռ մեք կը վախնանք , կամ անոր գէմ կը գանգատինք ու կը բարկանանք : Այն միջոցին բիւրաւոր սերմեր որ իրենց պղտիկութեանը աղագաւ մերաշացը չեն երեւնար՝ կը լողան ու կը թեւածեն տատանեալ օդին մէջ և գեանին վրան իյնալով վար իջնող փոշիներէն ալ կըդոցուին :

կան սերմեր որոնք իրենց ծանրութեաւ նը պատճառաւ հովէն չեն տարուիր, բայց ասոնք ալ կլոր և ողորկ ըլլալով մարդկանց և կենդանեաց ոտքովը զարնուելով աւելի հեռու տեղ կերթան։ Ոմանք ալ ծայրերնին առը և կեռ են ուստի կամ կենդանեաց մազերուն կամ մարդկանց զգեստներուն կը փակչին և հեռու տեղեր տարուելով հոն կը ձգուին։ Սերմերու մէկ մեծ մասն ալ իբրև կերակուր՝ թռչնոց փորը կը մտնէ ու այնուղ չը մարսուելով, թռչունը զանոնք ուրիշ տեղեր կը ձգէ, բնաւ տարակոյս չը կայ որ այն գաղթող թռչունները որոնք ամառը մեր երկիրները են ու ձմեռը գէպի հարաւ կերթան որ վերստին դառնան, — չատ անդամ այս երկիրներէս իրենց ստամոքսին մէջ հունտեր և արմտիք հարաւային երկիրները տարեր և անտիէն ալ անծանօթքոյսեր հոս մեզի բերեր են։ Թռչնոց միջոցովն է միայն որ երթմն պատերուն ու ապառաժներուն վրան կեռասի, թթի, նուռի, թուրի ծառեր կը աեմնենք։ Սերմեր ալ կան որ անոնց ծառերը գետերու և վըտակներու տիֆանց վրան ըլլալով, կամ ջրին մէջը կիյնան ու վերջապէս տեղ մը բանի մը հանդիպելով հոն կը կենան ու ծառ կը լւան, կամ թէ հովս ու հողմերը զանոնք կը վանեն կը հալածեն մինչեւ որ գետի մը կը

յանձնեն։ Այս ոմանք ալ այս կերպիւ մինչեւ ծովը կը համեին և ծովան ալեացը վըրան ճոճալով այն կողմն անդամ կերթան ու իրենց տունն ու բնակարանը հոն կը շինեն։ Տեղ տեղ բոյսեր երեւան ելած են զորս չը քննած՝ ինքնաբոյս որոմ անուանեցին, սակայն քննելով իմացուեցաւ թէ սերմը բերողը ծովն է եղեր։ Ահա այսպէս կը կատարեն Արարչապետին կամքը թէ անձրկն ու ձիւնը թէ կարկուտն ու կայծակը, թէ փոթորիկն ու մըրիկը։

4. Թոէկ տնկերուն այս օրինակ աճումը երկրագործներուն նեղութիւն և աշխատանք կը պատճառէ, անոնց արտերուն մէջ և չուզած տեղեր սերմերուն գալով բուժնելովը, բայց տունկերուն օգուտը չայնչափ յայտնի է որչափ օրստօրական է իրենց հարկաւորութիւնը և գործածութիւնը։ Առանց տնկերուն ծառայութեանը ոչ մարդիկ կրնային աշխարհիս վրան ապրիլ ոչ ալ անասունք, անոր համար ալ ամենուն իրնամակալըն Աստուած այսչափ հասարակ և գիւրին ըրաւ անոնց յառաջ գալը և աճումը։ Ցնկերն են որ բնութիւնը կը զարդարեն, ու երկրին մորկութիւնը կ'զբացուցանեն Ցնկերն են որ այնչափ անթիւ անհամար կենդանեաց կերակուր կը մատակարարեն։ Եւ մասնաւորապէս մարդուս ըրած օգուտնին

խիստ շատ է . ոչ թէ մեր կենացը հարկաւոր եղած սնունդը միայն կը չնորհեն , ինչպէս բանջարեղբէնք ու ընդեղբէնք և այնչափ պտղատու ծառեր իրենց համեղ պըտուղներովը , կամ զովացուցիչ ու զօրացուցիչ հիւթովը ինչպէս որթը՝ ձկթենին և Ամերիկայի՝ Հնդկաստանի և ուրիշ երկիրներու այնչափ տնկերն ու ծառերը որոնց զարմանալի բնութեանն ու բերքերուն վրայ բուսաբանութեան մէջ կարդալու է . հապանակ մարդուն հագուստը , բնակարանը ու պահպանութիւնը տնկերէն է . ո՞ւսկից է բամպակը , ուսկից կտաւը , քթանը , կանեփը , և ազնիւ ու դեղեցիկ մետաքսը , որոնցմով մարդիկ իրենց մարմնոյն պատրսպարան ու զարդ կը շինեն . ո՞ւսկից է մեր բնակարանը , տունը , տաճարը ու այնչափ կահ կարասին ու գործիքը որոնք մարդուն ամեն ըոպէ հարկաւոր են . յայտնի է որ տնկերէն որոնց տուած առատ բերքովը մարդիկ այս ամեն հարկաւորութիւննին կը կատարեն : յսկ մարդուն կենաց պահպանութեան համար տնկերուն ըրած օգուտը ստուգիւ անպատմելի է . թէ և անոնց ամենուն ալ զօրութիւնը մինչև ցարդ ըստ արժանուոյն չէ հասկցուած , բայց չկայ տունկ կամ բանջար կամ խոտ մը որ իր կեցուցիչ և առողջարար զօրութիւնը չունենայ որով

աշխարհքիս սկզբէն մինչև հիմայ օրէ օրնոր դեղու դարման կը մատակարարեն ամեն կերպ հիւանդութիւններու : Մեղրը և մոմը տնկերէն է . եթէ ծաղիկները չ'ըլային , մեղուն ո՞ւսկից պիտի ժողվեր այն քաղցրահամ հիւթը : Նոյնպէս ալ անուշահոտ խնկերը , և քանի մը աղնիւ գոյները տունկերէն են :

## ԿԵՆԴԱՆԵԱՑ ԲՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԶԴՄՈՒԻՆՔ

Աստուած կենդանեաց մէջ յատուկ ազգմունքներ դրեր է , որոնց ձեռքովը կրնան իրենց կենաց պիտոյքները հոգալ ու դրտնալ : Այս բնածին զգացմունքները՝ որոնք բնազդում ալ կը կոչուին , ոմանց կենդանեաց մէջ կատարելութեան ամենաբարձր աստիճանին հասած են և մեր զարմանքը կը դրգուեն : Առանց փորձառութեան , առանց խորհրդածութեան , առանց դպրոցի դասի և օրինակի կընեն և կը կատարեն սքանչելի հմտութեամբ իրենց ծննդենէն սկսելով բոլոր այն բաներուն մեծ մասը որոնք թէ իրենց կենացը պահպանութեանը , իրենց անձանցը յարձակումներէ պաշտպանութեանը և իրենց բոյներուն շինութեանը , ու թէ ձագերուն ապահովութեանը կը ծառայէն :

Այնպիսի արարմունքներ ունին որ կարծես  
խելքով խորհելով ու իմանալով կատարուած  
են, բայց բնատուր ձգտումներու արդիւնքէ  
զատ ուրիշ այլ ինչ չեն. Անոնք կը հնաղան-  
դին բնութեան բարեհրաւէր և անողոք  
բռնադատմանը : Այս բնածին աղդմունք  
երեւան կուգան մասնաւորաբար

## Ա. ԿԵՐԱԿՈՒՐ ՃԱՐԵԼՈՒ ԱՏԵՆ

Հազարաւոր հունտերէն կը դըտ-  
նէ թռչուն մը ճիշդ այն, որ իրեն օդտակար  
է, իսկ մնացածը կը մերժէ իբրև վնասա-  
կար. բնական աղդում մ'է որ այս տարրե-  
րութիւնը կը սորվեցնէ թռչնոյն, ի՞նչ է  
պատճառը որ արօտներու մէջ արածող բաղ-  
մաթիւ անսասունք մի քանի խոտերու բնաւ  
և երբէք չեն դպչիր, նոյն իսկ այն տարի-  
ները երբ երաշտութենէ խոտեղէնք ըլ-  
դալի կերպիւ սակաւ կը լլան, մինչդեռ միւս  
որ և է կանաչ բոյս կուտուի. ի՞նչ է արդ-  
եօք պատճառը որ խոտաճարակ կենդան-  
եաց տեսակները իրենց սիրած մասնաւոր  
բոյսերն ունին, միշտ զանոնք կը փնտռեն,  
և միւսներուն չեն մերձենար եթէ անօթի  
աւ ըլլան: Արդեօք փորձառութեամբ իմա-  
ցան կամ իրենց աւելի տարիքոտ ցեղակից-  
ներէն սորվեցան, թէ այս ինչ խոտը վնասա-

կար և այն ինչը մնադարար է իրենց . ո՛չ  
Այլ անոնց մէջը Արարիչն Աստուած վարող  
և խրատող աղդում մը դրեր է որ զանոնք  
զգուշացնէ վտանգներէ, որոնց դէմ կը դնէ  
մարդս միայն փորձառութեամբ և խորհըր-  
դածելով.

Յաճախ ալ բնածին հմտութեամբ և խո-  
րամանկութեամբ կը ճարեն իրենց կերա-  
կուրը, և ոչ սակաւ վարպետութիւն կը ցը-  
ցընեն զայն պատրաստելու ատեն. ինչե՛ր  
չեն պատմեր աշուեէն՝ այս խորամանկ կեն-  
դանիէն . և որչափ հանճարաւոր և արուես-  
տալից կը շինէ ու կը յերիւրէ սարդը իր ոս-  
տայնը ճանճեր որսալու համար . Ագուաւըն-  
կող մը կը գտնայ և վերջապէս կը յաշողի  
անոր մէջը ուտելու զայն քանիցս բարձր տե-  
ղէ քարի վրայ ձգելով ու կոտրելով: Սե-  
ծառկոտէն թռչունը որ եղեւինին կոնածե պր-  
տուզը ծառէն կառնու, չը կրնար անոր մէ-  
ջը շարուած հատերը հանել կեղեւին հաստ  
և ամուր ըլլալուն համար . ուստի առաջ  
ծառին կեղեւէն մէկ տեղը կտցահարելով  
ծակ մը կը փորէ ( այս առթիւ ատոր ծա-  
ռակոտիկ կամ վայտափոր կը կոչեն ) եղեւ-  
ինին պտղոյն կոթը հոն կը խոթէ ու եր-  
կու ոտքովն ու տուտովը զինքը ծառին վը-  
րան ամրացնելով, կը կտցէ ու հատերը հա-  
նելով կուտէ . Աբուէն յուէ որ քերանոյ

տեղ երկար ու վողանման կտուց մը ունի ,  
միշտ ծովերուն եղերքը կը կենայ և կը սը-  
նանի ճանճերէ և մըժդունքներէ : Եթէ քա-  
րի մը կամ տերեւի մը վրան ճանճիկ մը նը-  
կատէ որ հոն կը հանդչի , բելովը վրան  
կաթիլ մը ջուր կը ցաթկեցնէ ու կը թրջէ որ  
չը կրնար փախչիլ ազատիլ այլ կաթիլին հետ  
ծովը կիյնայ : Եւ այսպէս կորսայ կուտէ  
զայն այդ փոքրիկ ձուկը :

Բաց ՚ի դմանէ կը տեսմենք որ կան և  
բազմաթիւ թռչունք որ բնական անդիմադ-  
րելի ձգտմամբ մը՝ գեռ ձմեռը չեկած , ո-  
րուն ցրտութեանը անոնք չէին դիմանար ,  
իրենց բնակարանները կը թռղուն և տաք  
ու ուտեստով առաւել ևս ճօխ երկիրներ կը  
գաղթեն , նոյն իսկ ամենահեռաւոր տեղ-  
ուանքէն չը խուսափելով : Այս տեսակ թռչ-  
նոց հաղթական կըսենք : Ասոնք շատ դիւրաւ  
և ճշութեամբ կը նշմարեն իրենց ժամա-  
նակը , ուստի և իրենց ճամբորդութիւնը՝  
ձմեռը գեռ չեկած , կսկսին . և մինչև այն  
աստիճան գիտեն ու կզգան իրենց գաղ-  
թութեան ժամանակը որ բանտարկեալք՝ զոր  
օրինակ լորերը՝ իրենց վանդակացը մէջ անհան-  
գիտ կըլլան ու կը թռչտին : Շատ անդամ  
խիստ հեռու տեղուանք կերթան , Ափրիկէ և  
Ասիայ կերթան՝ միջերկրական ծովուն վրայէն  
թռչելով . և զարմանալի է թէ ինչպէս այս

կենդանիքը առանց այն հեռաւոր երկիր-  
ներն ու անոնց եղանակները ճանչալու  
կրնան գիշերուան ատեներն անգամ ճա-  
նապարհորդելով գտնալ . Առաւել եւս զար-  
մանալին այն է թէ ինչպէս այնչափ ժամա-  
նակ այդ հեռու և օտար երկիրները մնալ  
կենալէն զինի , ոչ թէ միևնոյն ճանապարհո-  
ւը կրնան վերադառնալ և իրենց հին հայ-  
րենիքը գտնալ , այլ կը ճանչնան նաև ծիշդ-  
այն կոճը որուն փակած էր հերուն իրենց  
բոյնը . Արդէն երեմիա մարդարէին ժամա-  
նակն ալ այսպէս եղած է ինչպէս որ կըսէ  
( Գլ . 8 համար 7 ) “ Երկնքի արագիլը ճանչ-  
ցաւ իր ժամանակը , տատրակն ու ծիծեռ-  
նիկը որ վայրի թռչուններ են , իրենց վերա-  
դարձի ատենը կը պահեն իրենց մտքին  
մէջ ” : Գաղթող թռչնոց թիւը փոքր չէ , և  
անոնցմէ ամենածանօթներն են՝ արագիլը ,  
ծիծեռնիկը , լրբերը , լորամարկիքը , սո-  
խակները , կռունկները , վայրի սագերն ու  
բաղերը և կկուն :

## Բ. ԲՆԱԾԻՆ ԱԶԴՄՈՒՆՔ ԶԻՐԵՆՔ ԹՇՆԱՄԵԱՅ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱՏԵՆ

Փ. + ւ մէ ունին՝ երբոր վրան կը յար-  
ձակուի կամ իրենք վտանգ մը կը գուշա-  
5

կեն, կը կծկուին և իրենց վրայի փուշերը ասղներու պէս անանկ կը ցցուին կենդանւոյն շուրջը որ հզօրագոյն գաղանն անդամ չը կրնար անոնց վնասել. Առակու զինքը կաղատէ իւր հալածող թշնամի շներէն իր պոչը խիստ կծու միզովլ թրջելով և մօտեցած շներուն աչուշներուն քսելով. Եթէ աղուէսը որոգայթի մը մէջ իյնայ ու պոչէն բոնուի՝ կը խածնէ զայն կը կըտրէ, կը թողու ու առանց պոչի կերթայ: Ամերիկայի ժանտահոտ աքիսը փամփուշտի մը մէջ սարսափելի դարշահոտ հիւթ մ'ունի զորն կրնայ իրեն թշնամեաց դէմիրեւ սըրինգով սրսկել. Մարդիկ այդ հոտէն դըլխու ցաւ կստանան և ոմանք ալ մարելով կիսամեռ կիյնան, և կենդանեաց խիստմեծ մասին՝ ընդ որս և շանը, անտանելի է այդ հոտը:

Նոպաստակը դիտէ խոյս տալ զինքը հալածող շներուն առջևէն յայս և յայնկոյս ոստոստելով, կամթէ կը տափարակի գետնին կը փակչի երբ ուրիշ նապաստակ մը կելայ, ուզելով շներուն հաւտացնել թէ ահա՛ ձեր հալածածը. Ենք միշտ երեսը կը դարձունէ դէպի իր թշնամին որպէս զի կարենայ հրել իր եղջիւրով. իսկ ձին կը դարձունէ թշնամոյն իր քամակը ու կը նայի իր ոտուշներուն մէջէն ու կուտայ անոր իր ոտ-

քի հարուածը և կըսպաննէ: Կառկիներուն մեծ տեսակները զիրենք պաշտպանելու համար կը գործածեն ծառի ոստեր և քարեր, փիղն ալ իր պատիճը: Սարէ երբոր կը տեսնէ թէ մարդու ձեռքէ ինկեր և այլ ևս փըրկութիւն չկայ իրեն՝ ոտուշները կը քաշէ և ժամերով անշարժ կը մնայ զինքը մեռած կեղծելու նպատակաւ, կան և թրթուրներ որոնք յանկարծակի բարակիկ թելով մը վար կիջնան երբոր վտանդ մը նկատեն. իսկ ասոնցմէ ոմանք ալ՝ հազիւ թէ ձեռքովդ կը դպչիս, տեսակ մը աղտոտ հիւթ մը թող կուտան իրենցմէ որ կը զգուիս թող կուտաս: — Ուրիշներ ալ կան որ երբ իրենյ ցեղէն մէկը վտանգի մէջ տեսնան, շատերը ՚ի միասին կուգան իրենց ընկերոջը յօդնութիւն ինչպէս են մեղուները և շանաճանճերը: — Մի քանի ջրակեաց կենդանիք ալ կը պըլտորեն ջուրը ու կազատին իրենց հալածչացը նիւթած դաւէն. զօր օրինակ թանսքաձնուկը իրմէն բաւական չափ մելանի նման հիւթ մը կը թողու և այնու պղտորած ջրին մէջէն փախուստ տալով կերթայ ուրիշ տեղ կը թաքչի:

Ահա՛, այսպէս՝ ոչ թէ իւրաքանչիւր տեսակ կենդանի իր կերակուրը գտնալու ու զինքը պաշտպանելու կերպը դիտէ, այլ դիտեն կենդանիք նաև բաւական վարպե-

տութիւն և խորամանկութիւն որ խորհըրդածութեան խիստ մօտ է։ Եւ այս կը պարաւաւորէ զմեղ ուրախութեամբ զարմանալ Արարշին իմաստութեանն ու գթութեանը վրայօք որ կենդանեաց մէջ ալ կը ցուցնէ իր զարմանազուն դործերը անոնց այնպիսի ազդմունքներ ներստեղծելով։

### ԳԱՅԼ ԵՒ ԿԱՏՈՒ

Գայլուն մէկն անտառէն փախէլով զնաց գեղ ոչ թէ հիւր, այլ կեանքը աղատելու կը փնտոէր տեղ իւր կը ոնքի կաշուն համար Սարսափելով կը դողդողար։  
Ինչու ըսես նէ՝ որսորդներն ու շըներ Ետեւէն էին ընկեր։  
Ո՛ր գուռն ալ որ բաց գտնէր,  
ինքինք ներս պիտի նետեր։  
Յանկարծ պատի մը վրայ Գայլը կատուն կը տեսնէ։  
“Ո՞վ քաղցրիկ փիսիկ աղբար, կը սէ անոր,  
ինդրեմ զուրցէ։  
Այս գեղի մարդոցը մէջ ամենէն աղէկն ովէէ,  
Որ զիս անդութ թշնամեացըս ձեռքերէն աշատէ։  
Սա կը լսես ինչ կերպով կը հայեն չար չները  
Եւ ի՞նչ գուռում գոչում կը նեն որսորդներուն փողերը։  
Ատոնք ամենն ալ մէկէն իմ ետեւէս ընկեր են,

— թէ այդպէս է, ըսաւ կատուն, շուտ ըրէ, Փանոսին տունը գընա, Շատ բարեսիրտ մարդ է նա։

“Այդ իրաւ է,  
Բայց ես նորա մէկ ոչխարը պատռեր եմ։  
— Այնպէս է նէ՝ Թադոսին։ “Թադոսին մի ի՞նչպէս ընեմ։

Կարծեմթէ նա ալ սըրդողած է վըրաս։  
Պատճառն ի՞նչ է ըսես նէ՝ աս

Որ ես անոր ալ մէկ այծը տարեր եմ։  
— Վազէ ուրեմն սա տունը։ Թորոսին։

“ Թորոսին։ ո՛չ, ես անկէ ալ կը վախեմ։  
Նա ինձ գարնան ժամանակէն ոխ ունի,

Մէկ գառնուկի մը համար։  
— Ուրեմն քու բանդ գէշ է՝ սանահար Բայց կարելի է ծառուկը քեզ կընդունի։  
“ Ախ վիսիկ, ի՞նչ ըսեմ քեզ։

Ծառուկին ալ մէկ հորթուկը կերեր եմ ես։  
— Ատ ի՞նչ բան է, աղբարիկ, ըսաւ կատուն

Դուն այս գեղին ամեն մարդոցն ալ դիմուն ի՞նչ փորձանքներ բերեր ես, որքան վնաս։  
Ուրեմն ի՞նչպէս պաշտպանութիւն անոնցմէ գտնալուսաս։

Զէ, մեր գեղջուկներն այնքան անխելք չեն Որ իրենց վնասովք քեզ փորձանքէ աղատեն։  
Եւ իրաւունք ալ ունին։ իսկ գուն զքեզմեղադրէ

ի՞նչ որ ցանեցիր՝ նոյնը եւ հնձէ։

## ԽՈՐԱԳԻՏ ԴԱՏԱՒՈՐ.

Թէ արեւելքի մէջ պատահած բաներուն  
քոլորը ն ալ ծուռ չեն, կարելի է ապա-  
ցուցանել նաև հետեւեալ դէպքո-  
վը որ կըսեն թէ այս կողմերը տեղի ունե-  
ցեր է: Հարուստինմէկը՝ անը զգուշու-  
թեամբ բաւական մեծկակ դումար մը  
ստակ կը կորսընցընէ որ կտաւի կըսո-  
րի մէջ փաթթուած կարուած էր:  
Մարդը՝ ինչպէս որ սովորութիւն է, մու-  
նետի կ կանչել կուտայ թէ շատ մը  
ստակ կորսնցուցեր է և թէ կը խոստա-  
նայ գտնողին և իրեն դարձնողին քը սան  
ոսկի չնորհել: Շատ չանցաւ և ահա բարի  
ու ճշմարտասէր մարդ մը եկաւ ու ը-  
ստաւ. “ըստա կդ գըտեր եմ. անշուշտ  
ասի կայ ըլլալու է: Ուստի քեզի բլայ  
քու ստացուածքդ” “Այսպէս ուրախ դէմ-  
քով և մաքուր խղճով խօսեցաւ մար-  
դը, և արարքն ալ անտարակոյս լաւ էր:  
Սակայն միւս սին ալ դէմքը զուարթ էր,  
բայց միայն անոր համար որ կորուսած դը-  
րա մը վերստին ձեռքը եկեր էր. այլ թէ  
ինքն ալ մաքուր խղճով մէկն էր հիմա պի-  
տի տեսնենք. Ստակը հաշուեց,  
համրեց և այն միջոցին ալ ճեպով մը խոր-

հեց թէ ինչ հըն արք դոր ծագը է որ  
գտնողին խոստացած ընծան զրկէ: Հարե-  
կամ, ըստ անոր, “ընդ ամենը սոյն կը-  
տաւիս մէջ հարիւր և վաթսուն ոսկի կային  
և հիմայ կը տեսնեմ որ հարիւր և քառա-  
սուն է, ուրեմն դուն ինծի չսպասելով  
կապը քակեր ու քսան ոսկիդ արդէն վե-  
րուցեր ես: Աղէկը ըրեւեր ես: ես ալ  
շնորհակալութիւնս կը յաւելում վրան ու  
Պակայն ասոր ըրածը լաւ չէր: Մեր պատ-  
մութիւնը դեռ չէ լմնցեր և գիտենք ալ  
որ ճշմարտութիւնն ու հաւատարմութիւնը  
պարզերես կըլլան, իսկ ստախօսին երեսը  
ամօթով կը մնայ. Ճշմարտասէր մարդը  
որուն հոգը հիմա ոչ թէ այնչափ այն իրեն  
խոստացուած քը սան ոսկին էր այլ կը-  
ցաւէր որ իր մաքուր անունը արտա-  
ւորեցաւ, վասնորդ և սկսաւ պնդել թէ  
ծրարը ճիշդ այնպէս գտած է ինչպէս  
կը բերէ և ճիշդ այնպէս ալ կը բերէ  
ինչպէս որ գը տած է: Վերջապէս գացին  
դատաստանի. Հոս ալ երկուքը կը  
պնդէին իրենց խօսքերը, մէ կը թէ հար-  
իւր և վաթսուն ոսկի էր կարուած մէջը և  
քըսանը առեր է գտնողը. իսկ միւսը  
թէ դտածին պէս բերեր մարդուն տուեր  
է: Այս պարագաներուս մէջ վճիռ տալը  
դիւրին չէր. բայց խորագէտ դատա-

ւորը որ թէ մէկուն ճշմարտասիրութիւնը  
և թէ միւսին վատութիւնը դատին սկը զ-  
քէն հասկըց եր էր, դատը այսպէս ս  
տեսաւ . առաջ հրամայեց որ իւրաքանչիւր  
ոք իր ըսածը երդ մամբ ալ հաստա-  
տէ և երկուքն ալ ատենին առջել եր-  
դուան իրենց ըսածներուն վրան : “ Ու-  
րեմն ” ըսաւ այնուհետեւ խելացի դատա-  
ւորը . ձեզմէ մէ կը հարիւր և վաթ-  
ուուն ոսկի է կորուսեր, և միւսը ծրար  
մ'է գտեր սոսկ հարիւր և քառասուն  
ոսկիով . ուստի և անհնարին է որ այս վերջ-  
նոյս գտած ստակը առաջն ըլլայ՝  
դուն, ով ճշմարտասէր բարեկամ, առ ու-  
րեմն քու գտած ստակը դ և լաւ մը  
պահէ մինչև որ հարիւր և քառասուն ոս-  
կին կորսնցնող անձը երեւան ելլայ . իսկ քե-  
զի, կըսէ միւսին դառնալով, ուրիշ խրատ  
մը չեմ գիտեր բաց ՚ի անկէ որ երթաս  
համբերես մինչև որ այն մարդը գայ ու-  
լուր բերէ թէ քու կորուսած հարիւր և  
վաթսուն ոսկիդ գտեր է ու . Ասան կ վըն-  
եց դատաւորը և մինչև յարդ ալ բանը  
այս կերպով կը մընայ :

### ՀՈՎՈՒԻԻ ՏՂԱՅ

Անդամմը փոքրիկ հովուորդի մը  
կուր իր ճարտար պատասխաններու-

վը զորս իրեն եղած հարցմանցը կուտար  
բոլոր երկրին մէջ հոչակուած էր .  
երկրին թագաւորն աւլսեց այդպա-  
տանեկին վրայօք, և որովհետև չէր հա-  
ւատար, հրամայեց որ իր պալատը ե-  
րեն զտղան . Այն ատենըսաւ թագաւորնա-  
նոր . ևս քեզի երեք հարցումներ  
պիտի ընեմ, եթէ անոնց պատասխանը  
գտար, յայնժամ ես զբեղ ինծի զաւակ  
կընեմ : Պատանեակը հարցուց . “ ինչ են  
քու երեք հարցումներդ, ըսէ՞ ” : — Թա-  
գաւորը ըսաւ . “ համատարած Ռվկիանու  
մէջ քանի՞ կաթի ջուր կայ ” : — Հովու-  
որդին պատասխանեց . “ ով տէր արքայ ։  
հրամայէ՞ որ ծովը թափող բոլոր գետերուն  
ու վտակներուն սկիզբներն ու աղջ-  
բիւրները գոցեն որպէս զի իմ չը  
համրած մէկ նոր կաթիլը մէջը չիգայ, յայն-  
ժամ ես ալ կըսեմ քեզի Ավկիանու կաթիւ-  
ներուն թիւր ” : — Թագաւորն ը-  
սաւ . երկրորդ հարցումն է թէ քանի՞  
աստղեր կան երկնքի վրան ” : — Հովու-  
որդին խօսեցաւ . “ ինծի թերթ մը ճերմակ  
թուղթ տուէք ” : յետոյ գրիչով անոր  
վրան այնչափ կէսեր շնեց որ ճերմակ տեղ  
մը հազիւ կըտեսնուէր և կէտերուն  
ալ համրելը ան հընարին էր . Զայս ը-  
նելէն դիմի առաւ թուղթը ու թագաւորին

մատուց ըսելով “ահա՛. այսչափէ է երկնից աստղերուն թիւը որչափ որ հոսկէ առեր կան համբեցէք” : — Սակայն և ոչ մէկը չը գըտն ուեց աւ որ կարօղանար այն կէտերը համբել . . թագաւորն ըստ աւ երրորդ հարցումն սա է թէ քանի՞ վայր կեան է յաւիտենականութիւնը” : — Հովուորդին պատասխանեց . “Եփը բատին այն կողմը սև և ամուր քարէ լեռ մը կայ որուն բարձրութիւնը մէկ մղոն, լայնութիւնը մէկ մղոն և երկարութիւնը մէկ մզոն է . թոչուն մը կայ որ հարիւր տարին անդամ մը կուգայ կտուցը այն ապառաժին կը քըսէ ու կերթայ . արդ երր այդ թռչունը իր կտուցը այն լեռանը քսելով լեռը մինչև վերջը մաշի ան հետան այ, յայնժամ անհունյաւ վտենականութեան միմիայն մէկ վայրկեանը անցած կըլլայու . . և իւ եւ լացի ես դուն” , ըստ թագաւորը, ևս քեզի ինծի տըլայ ըըի” :

## ՆԵՂՈՒԹԻՒՆ

(ՊԱՏԱՀԱԾ ԴԼՊԲ ՄԸ)

Գաղղիոյ մեծ քաղաքաց մէկուն մէջ քաշալաւ երէց մը կար, որ ոչ թէ միայն

ճարտար կը քարողէր, այլ հաւատարիմհովիւ մը և իր ժողովրդեանն ալ սիրալիր հայը ըըն էր . Միսիմարութիւն, օգնութիւն և խաղաղութիւն տանիլ այն տեղերը ուր որ կարօտութիւն կար, — ահա՛ այս էր ազնիւ և բարեպաշտ մարդուն միակ ջանքը . թէ պէտ և իր ժողոված ողորմութեանը վրան շարունակ իր ստացուածքէն ալ բան կաւելցունէր, բայց և այնու հանդերձ կը պակսէին իրեն միջոցները իր ծուխերուն մէջ գըտնուած աղքատներուն և կարօտեալներուն ինչպէս որ հարկն էր հոգ տանիլ:

Անդամ մը տարափոխիկ և մահարեր ախտ մը ինկաւ լաւ երէցին ժողովրդեանը մէջ, որ չարաչար կոտորածներ կըներ. Տուն մը չ'մնաց որ մէջը հիւանդ չ'ըլլար . իւրաքանչիւր ընտանեաց մէջ կամ մեռեալ մը կար կամ մեռնող մը . Սակայն և ամեն տեղու ամեն տուն կերթար քաջ մարդը և իր բաղու կը ամենուն ալ կարկառելով որուն կերակուր, որուն դեղ կուտար և որուն դարման կը տանէր . Անոր միմիթարիչ խօսքերը կափոփէին զյուսահատեալները, և անոր օգնութիւնը շատերը մահէ ազատեց :

Սակայն անհնարին էր որ կարօղանար այնչափ բազմաթիւ կարօտեալներուն, որոնց մեծ մասը իրենց առողջ ժամանակը օրականովեին կապրէին. ամեն պիտոյքը ստար-

Ժանւոյն հոգալ, ի՞նչ բրաւ ազնիւ սրտոտ  
մարդը։ Խնքղինքը մոռնալով՝ ունեցած ար-  
ժանաւոր բոլոր բաները, նոյն իսկ իր եկե-  
ղեցական աւելորդ անօթները ծախեց, որ-  
պէս զի կարօղանայ խեզճ տառապելոց օգ-  
նել։ Նաև այն հզօրագոյն զօրութեանը որ  
անոր անկեղծ ու անպաճուճ առաքինու-  
թենէն կարտափայլէր, ոչ ոք կրնար դի-  
մադրել, ուստի և իր հայրենակիցներէն  
բաւական օգնութիւն կը գտնար։ Բայց ուր  
որ կարօտութիւն մը կը շարունակի, հոն-  
ողորմածութիւնը օր ըստ օրէ տկարանալով  
և կատարած կը մարի։ Նոյնպէս ալ սոյն  
արի երեցիս ժողովրդեանը մէջ իջաւ բա-  
րերարութեան եռանդը՝ մինչդեռ ախտը  
օրքան զօր կը սաստկանայլ։

Արդէն անխոնջ հովիւն ալ, որ մինչեւ  
շարդ Աստուծոյ ակներև խնամօքը ախտէն  
ազատ մնացեր էր, ճարահատած այլ ևս  
չէր գիտեր թէ ինչպէս օգնելու է. իր օգնու-  
թեան աղբիւները ցամքած էին. ուրիշ և  
ոչինչ չունէր բաց ՚ի իւր մերկ կեանքէն ու  
Աստուծոյ վրան դրած յոյսէն։ Բայց գիպ-  
ուածով մը իմացաւ որ մօտակայ տեղերը  
քնակող հարուստ անձ մը, որ մեծամեծ  
ձեռնարկութեամբ կարի շատ գանձերու  
տիրացած էր՝ հիմա ալ դրամախաղով մը մէկ  
գիշերուան մէջ ահագին գումար մ'է վաս-

տըկեր։ Թէպէտ և բարի երէցը այս մար-  
դըս միմիայն յանուանէ կը ճանչնար, բայց  
առանց բոպէ մը կորսնցնելու միւս առաւո-  
տուն կանուխ ելաւ դէպի հարուստ մար-  
դուն բնակարանը գնաց. Հոն կը հասնի և  
կը յայտնէ սպասաւորներուն թէ պարոնը  
տեսնել կուղէ. կարդ իլեն ու կըսեն թէ մարդ-  
չընդունուիր. Բայց նա կը խնդրէ, կաղա-  
չէ մուրացկանի մը պէս, անանկ որ վերջա-  
պէս հրաման կատանայ ներս երթալու։ Սե-  
նեկին մէջ կը տեսնէ որ պարոնը գիշերուան  
քնահատութենէն բոլորովին թուլցած լրք-  
ուած՝ անկողին մտնելու կը պատրաստուի։  
Հոս կալբսի սերճախօս մարդասէրը պատ-  
կերներ նկարագրելու հարուստին գիմացը  
որ զթշուառութիւնն ու ողորմելիութիւնը  
խիստ զարհութելի կերպարանքով կը ներ-  
կայացնէին. ՚ի վերջոց եր աղիողորմնկարագ-  
րութեանց կալտչէ որ հարուստը առատօ-  
բէն ողորմութեամբ մը օգնէ իր կարօտեալ  
հոգեւոր զաւակներուն. և իր աղաչանաց  
ստուգութիւնը կապացուցանէ ծեր հովիւը  
ճերմակ ալիքներուն վրայէն իր ականակիտ  
աշուշներէն երկու խոշոր կաթիլ արտասուք  
թող տալով։ Պատի պէս պաղ և մունջ կե-  
ցեր կայներ էր քունը աւրած հարուստը  
և անզգայ անզգայ կը գիտէր զերէցը՝ ոտ-  
քէն սկսելով մինչեւ գագաթը քանի մը ան-

գամ վեր և վար նայելով։ Վերջապէս հանեց իր քսակը բացաւ և երէցին անկէ մէկ ֆրանքնոց մը (հինգ դահեկան) տարով՝ առանց անոր ծերութեանը պատիւը, անոր սրբազն պաշտօնը և անոր այցելութեան ամենայն յարդանաց արժանաւոր առիթը մեծարելու՝ նախատեց և կշտամբեց զառաքինի այրը որ յանդգնէր այնպիսի տարադէպ ժամու մը անոր այցելութիւն ըրերէ, Սակայն ազնիւ ալեւորը այն մարդը չէր որ քանի մը ցուրտ խօսքերու համար յուս սահատած ապարդիւն յետ դառնար։ Քաղցրը ձայնով մը սկսաւ քանի մը խօսք ալ ըստու շնորհք աղերսել, և բարկացելոյն պատասխանը տակաւին չառած, կրկին անդամ կը նկարագրէ երէցը այն յիշած թշուառութիւնքն ու տառապանքը առաւել եւս աղեխարշ խօսքերով։ Իր բոլոր գիտութիւնն ու ճարտարախօսութիւնը՝ ի գործ կը դնէ և աւելի մեծ օգնութիւն մը կը պաղատէ իր աղքատներուն համար, որոնց մէկ ֆրանքնոցը—ոչինչ չը կրնար օգնել։

Հարուսար պատասխանեց մարդուն նախատելով ու ծազրելով, և հայհոյանաց խօսքերով իսկ ։ Դարձեալ չ'մեղկանար ու չ'յուս սահատիր ազնիւ ու բարերար հովիւը, կը սկըսի միրոյ և հեղութեան լեզուաւ համոզ զելու ջանալ և կերդմնեցնէ որ օգնէ ։ բայց փոխանակ մեղմանալու գթալու, աս բար-

կացած կատղած դազանը ապտակ մը կը զարնէ պատուարժան աղաչողին։ Հեղահամբոյր երկայնմտութեամբ՝ ինչպէս իր չարչարնացը ատեն ամենօրհնեալ փրկիչն էր՝ ըստ երէցը անուշ ժպիտով ու պայծառաւ փայլ նայուած քով մը։ «շատ բարի ։ ասիկայինծի՛, իսկ ի՞նչ պիտի տաս իմ խեղճ աղքատներուս ։ Հարուստ գազանին մտքէն այսպիսի բան մը հարկաւ ամեննեին անցած չէր։ Այս պարզ խօսքերը՝ երկնային հեղութեամբ մը արտասանուած՝ ճեղքեցին անոր սրտին կարծը կեղեւը։ Խոր զգացումներով զգածեալ ինկաւ չսիշախեալ սրտիւ ազնիւ երէցին ոտուրները և սկսաւ խոչոր արտասուքներ թափել։ Յետոյ յանկարծակիվեր թռաւ, գնաց իր սնտուկին քովը և յանձնեց բերկեալ ծերունւոյն ոչ միայն նոյն գիշերը շահած գրամին ամբողջ գումարը, այլ նաև իր մէկ տարւոյ բոլոր եկամուտքը։ Ի լւան և ՚ի բարին փոխանակուած մարդը այսչափովը չշատացաւ, նա ինքն կը պատմէր սոյն պատմութիւնը իր բերնով։ և հիմայ ճիշդ այնպէս բարեպաշտ է ինչպէս որ սոյն դէպքէս առաջ անզգամ և ամբարիշտ էր։ իսկ երէցը կը գովէր ու կօրհնէր զԱստուած ու կը կազդուրէր իր ժողովուրդը։

## ՎԱՐԴԻ ՈՍՏ

Ասա՞ դու ինձ , ոստդ վարդի ,  
 Ո՞ւր ես ծըլել , ո՞ւր ես ծաղկել ,  
 Ո՞ր հովիտի կամ ո՞ր դաշտի  
 Զարդարանք ես դու եղել :  
 Արդեօք ծըլել ես Եղեմում ,  
 Եւ ջըրել է ըզքեղ Եփրամ ,  
 Թէ սընուցել է իր գոդում  
 Քեզ ծերունին Այրարատ .  
 Ո՞ր անգութի ձեռն է քաղել  
 Քեզ քո թըրիից մայրենական ,  
 Կամ ո՞ր անգութն է քեզ տընկել  
 Այս աշխարհում պանդ խտական ,  
 Կամ թէ այն թուփ , քո օթեան ,  
 Թառամեցա՞ւ քեզ համանման .  
 Թէ սոխակները քաղցրածայն  
 Մինիթարումեն միշտ նորան :  
 Բայց դու չունիս միտթարիչ ,  
 Ով թագուհիդ ծաղիկների ,  
 Չունիս դու քեզ սիրոյ երգիչ ,  
 Թառամումես երկրիցդ հեռի :  
 Մի առաւաւ վատահաճաւ  
 Գուշակումէ նոր դոյժ , նոր ցաւ ,  
 Խակ դու տրխուր , վիրաւորուած  
 Կախել ես գլուխըդ թառամած :

## ԽՂՃԻՆ ԶԱՅՆԼ

Բոլ անունով հարուստ մարդ մը , որ  
 շատ տուներ ունէր՝ հրամայեց օր մը իր ծա-  
 ռաներուն դուրս հանել իր տուներուն մէ-  
 կէն խեղճ որբեարի մը որ անկարող էր իր  
 տարեկան վարձը վճարելու : Երբոր ծառա-  
 ները ներս մտան , այլին սկսաւ աղաչել .  
 և ո՞հ համբերեցէք խուն մի . թերեւս ձեր  
 տէրը գթայ մեզի . թոյլ տուէք որ անոր  
 երթամու աղաչեմ :

Այրի կինը գնաց իր չորս որբերովը հա-  
 րուստ մարդուն , իսկ իր հինգերորդը որ  
 խիստ հիւանդ էր տունը թողած էր . Ամեն-  
 քըն ալ ողորմագին ձայնով կաղերսէին որ  
 զիրենք չ'հանէ , և նոյն իսկ կրտսերագոյնը  
 կաղաղակէր . “ կաղաչեմ , կաղաչեմ տէր ” :  
 — Սակայն Բոլ ըսաւ . “ իմ հրամանս ան-  
 դառնալի է . ելլելու էք , եթէ ստակը հի-  
 մայ չ'վճարէք ” : Մայրը սկսաւ դառնապէս  
 թափել արտասուքները և ըսաւ . “ ո՞հ ,  
 ի՞նչ ընեմ , հիւանդ զաւակիս դարմանիլը  
 սպառեցուց բոլոր ստացուածքս ու վաստա-  
 կըս և արդիկց իս աշխատութենէս ու նոյն-  
 պէս ալ վոքը զաւակները միաբերան կա-  
 զերսէին ու մարդուն ոտքերն իյնալով կա-

դաշէին որ զիրենք հանել չտայ : Սակայն  
Բօլ դարձուց կռնակն անոնց ու ճեմելով գը-  
նաց պարտէզը ու սաղարթնամոխ ուռեն-  
ւոյն տակը դրած փափուկ թիկնաթռոռին  
վրան անհոգ անհոգ բազմեցաւ . թէև օր-  
ուան օդը ծանր էր , բայց ուռենոյն տա-  
կէն կարկաչելով վազող ջրառատ վտակը  
զովութիւն կսփռէր իր ափանցն ու եզերա-  
ցը . բայց և այսու ամենայնիւ այնպիսի լր-  
ուութիւն մը կը տիրէր բոլոր պարտիզին մէջ  
որ տերեւի մը անգամ միւսին շօշափիլ քը-  
ուիլը կրնար լսուիլ : Գետափանց վրան բու-  
սած կնիւնը հանդ արտիկ սեքով մը մեղմ  
շշուկ մը հանեց , և այս շշուկը զարկաւ Բօ-  
լին խղճին քանզի մտաբերեց որբեարիին ո-  
ղորմելի զաւակաց ճչալը : Յետոյ ուշադրու-  
թիւնը դարձուց գետին կարկաչմանը և մէ-  
կէն վրան սարսափ մ'եկաւ ու կը կարծէր  
թէ անյատակ ծովու մը եզերքը կայնած է .  
Բօլ իր տեղը առաւել ամուր նստաւ և ըս-  
կըսաւ օրուիլ . — Սակայն քիչ մ'ալ հազիւ  
անցած էր , և յանկարծ որոտման մը ձայնը  
լսեց որ հեռու տեղ մը անձրև կը բերէր .  
այս որոտումը յիշեցուց անոր Աստուծոյ ահեղ  
դատաստանին ձայնը :

Ները ալէկոծեալ Բօլ նստած տեղէն վեր  
թռաւ , հապճեպով տուն գնաց և հրաման  
ըրաւ ծառաներուն որ զիւեղն որբեարին

կրկէն իր բնակաբանը դարձնեն , բայց անիւ-  
կայ իր զաւակացն հետ անտառը դացեր էր ,  
և զանուեցաւ . Այդ միջոցին փոթորկա-  
լից ամպ մը վեր ելաւ , դոցեց պոյժառ երկ-  
նից երեսը սև խաւարով և փայլակներով  
ու որոտմունքով յորդ անձրեներ տեղաց ,  
Բօլ տխուր և տրտում՝ կը պարտէր ու խա-  
զաղութիւն չունէր . ուր կերթար , ուր կը  
նստէր և ուր և կանկողմանէր սրտի խաղա-  
ղութիւնը հալածականի պէս կը փախչէր ան-  
կէ . Հետեւեալ օրն տեղեկացաւ թէ փոքրիկ  
հիւանդ տղան անտառին մէջ մեռեր է և  
մայրն ալ իր մնացած զաւակներովը անդիէն  
չուեր գացեր է : Առաւել ևս տիրեցաւ աը-  
խուր Բօլ և իր այն պարտէզն ու տունը ի-  
րեն ատելի եղաւ , որ սյլ ևս չէր կրնար զը-  
ւարճանալ ոստալից ուռենուոյն շուքին տակ  
կարկաչահոս վտակին յարագուարթ խաղաց-  
մունքովը ու զովութեամբը : Այսչափը տա-  
կաւին բաւական չէր և Բօլի վրան ջերաջերմ  
հիւանդութիւն մ'ալ եկաւ , և իր տենդին  
մէջ կը լսէր շարունակ կընիւնին շշուկը , վր-  
տակին կարկաչումը և մըրկալից փոթորկին  
թաւ գոչումը : Այս ցաւերով տուաւ հոգին :

### ՓՈՔՐԻԿ ՔԱՍՏԱՎԱՃԱՌ

Փոքրիկ տղայ մը ամառուան մէկ խստ  
սիրուն առաւօտուն մէկ քաջահասակ զին-

ուորական պաշտօնէի պատահեցաւ , որ օրէս  
որդի մը հետ թև թե թե տուած՝ զէռլինի  
մերձակայ գտնուող ճեմելեաց մէկուն մէջ  
ժուռ կուդային ։ Այս ճեմելու տեղերը կա-  
րի գեղեցիկ և անտառախիտ վայրեր են՝  
մաքուր շաւիղներով յարդարուած , որոնց  
մօտերը Պրուսիոյ թագաւորն ալ պալատ մը  
ունի ։ Տղան համարձակեցաւ յիշեալ երկու  
անձանց մօտնալ և աղաչել որ անկէ ստակի  
քսակ մը առնեն , և անոնց մէկ կղրոց մը  
ցուցուց լեցուն այլ և այլ գուներով ու ձե-  
ւերով կարուած ստակի քսակներով ։ Զինուո-  
րական պարոնը բաւար . ա ինծի այդ ապրան-  
քը պէտք չէ ։ և առաւ քալեց . ա բարի հար-  
իւրապետ , շարունակեց տղան զինուորակա-  
նին քովէն վաղելով , գէթ բան մը առ ինձ  
մէ այդ օրիորդին համար . իմ աղքատիկ  
մայրս է հիւսեր այս քսակները , և եթէ ես  
այս երեկոյեան առանց բան մը ծախած ըլ-  
լալու տուն դառնամ , անօթի պիտի մնանք  
այս գիշեր ։ Զինուորականը թէև շատ չէր  
ցուցնէր , բայց հաճութեամբ ականջ կը դը-  
նէր տղուն խօսքերուն . ուստի տղան քա-  
ջալերութիւն գտնալով սկսաւ պատմել թէ  
հայրը զօրական է եղած ատենով , լայպ-  
ցիկի պատերազմին մէջ վախճաներ է և ին-  
քը տակաւին մէկ փոքրիկ եղբայր ու քու-  
րիկ մ'ալ ունի . Պարոնը տղուն աղատ և ժիր

երեսին նայելով հարցուց քսակներուն գի-  
նը , և տեմներով , որ իւրաքանչիւր հատին  
միայն մէկ գահեկանի չափ ստակ կը պա-  
հանջէ՝ տասուերկու հատ առաւ և տղուն  
մեծ ոսկի մը տուաւ որ հարիւր յիսուն քը-  
սակի գինը կըլլար . « Սակայն , բարի հար-  
իւրապետ » , ըսաւ մեր փոքր վաճառականը  
որ մեծ աչուըներով ոսկին կը դիտէր . « Ես  
չեմ կրնար ասոր մնացածը քեզի ետ  
դարձունել » . Պարոնը պատասխանեց որ  
հոգ չընէ և այդ ստակի ինչպէս որ առեր  
է՝ տանի իր մօրը յանձնէ և հարցուց իմա-  
ցաւ թէ մայրը որտեղ կը բնակի ու անունը  
ինչ է , գարձեալ իր ճանապարհը շարունա-  
կեց՝ պղոփի տղան զարմացման ու հիացման  
մէջ ձգելով :

Ժամ մը հազիւ թէ անցած էր , թագա-  
ւորին պալատականներէն մին մօրը խղճուկ  
առունը մտաւ և տղուն ըսածներուն վրայօք  
ստոյգ տեղեկութիւնք առաւ . Զինուորա-  
կան պաշտօնեայն , որուն տղան հանդիպեր  
էր՝ բրուսիոյ թագաւորն էր իր Աղէքսանդ-  
րինէ աղջկանը հետ , որոնց Աստուած՝ Հայ-  
րըն տառապելոց՝ այս առաւօտուս տղան  
առաջնորդեր էր որ մօր նեղութեան յօդնու-  
թիւն հասնին և անոր ու իր որբերուն ար-  
տասուքները սրբեն . Յիրաւի կնոջ կենցա-  
զավարութեան վրայօք ժողոված տեղեկու-

թիւնք անոր համար գովասանք էին, ուստի  
և հետեանքը եղաւ որ ցմահ հարիւր թա-  
լէր տարեկան ուօնիկ ստանայ և փոքրիկ  
քսակալաճառն ալ արքունի դպրոցաց մէ-  
կուն մէջը դրուեցաւ :

### ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Խիստ շատ անդամ կը պատահի  
Որ գէշ բան մը կը գործենք,  
Ու յանցանքը առանց ահի  
Ուրիշի վրայ կը ձգենք  
Ու կըսենք .  
Իրաւ որ նա՛ թէ չը լինէր,  
Ծյս իմ' մտքէ՛ս ալ չէր անցներ .  
Իսկ երբ մարդիկ չ'մնան,  
Յանցաւորն ո՞վէ .—սատանան .  
Թէսէտ և նա  
Այն բանին մէջ գուցէ յանցանք չունենայ .  
Ասոր ունինք հազար ու մէկ օրինակ,  
Մեք անոնցմէ մէկը յիշենք հոս մինակ :  
Հնդկաստանի կողմերը Պրահման մը կար ան-  
ուանի ,  
Բերնին նայիս՝ շատ ջերմեռանդ ճգնաւոր,  
Բայց վարքն ու բարքը ոչ այնչափ գովանի.  
( Պրահմանաց մէջն ալ չը պակսիր կեղծաւոր )  
Մեզ այն պէտք չէ . բանը ո՞ն էր .—  
Սա իբր թէ եղբարց կարգին

Ամենէն շատ մեղաւորն էր ,  
Միւսերը սուրբ մարդիկ էին .

Բայց եկու տես որ  
Իրենց մեծաւոր  
Խիստ ու բռնաւոր  
Պրահման մ'ունէին .

Ո՞վ կընար շարժել,  
Ընդդէմ կանոնին :

Պահոց օրերը հասան  
Ինչպէս ըներ մեր Պրահմանն

'ի պասին ըսպաս ,  
'ի ծոմին խըթում ,  
Եւ անպատուհաս

Փոքրիկ կերուխում :

Զգիտեմ ուսկիյ և ինչպէս  
Մէկ հաւկիթ մը ձեռք ձգեց

Խուցը մտաւ այլոց պէս

Մինչ կէս դիշեր ըսպասեց .

Կայծքարը զարկաւ , ճըրագը վառեց ,  
Վրան հաւկիթը եփել սկսեց .

Աչքը աղնկած միշտ հաւկիթին կը նայէր ,

Եւ մէկդիէն հանդարտիկ մա՛ն կը բերէր .

Ատեն ատեն բերնին թուքը կուլ կուտար ,

Շուտ եփելուն՝ շուտ ուտելուն կը փութար .

Մէկ կողմանէ ալ կը խնտար

Խըր վանահօրը մօրուքին .

Կըսէր մտքէն . « աղէ՛կ գտար

Բոնուելիք վարպետորդին .

Ես հիմակ այս ձուն  
Ուտեմ կշտանամ,  
Յետոյ գնա դուն  
Իմացիր տեսնամ. ”  
  
Մէկ մ’ալ նայիս մեծաւորն  
Զելէ չըգայ կամացուկ.  
Յանկարծ բացաւ խցին դուռն  
Ու ներս խօթեց իր մօրուք.  
“ Աս ի՞նչ է քու ըրածդ,  
Կանչեց վրան դոռալով.  
Պատասխան տուր, յանցանքդ  
Կրնաս ծածկել, ի՞նչ կերպով. ”  
Ի՞նչ ընէր խեղճ ճգնաւորն.  
Բունուեցաւ ճար չունէր.  
Բաց էր մեղքն ու մեղաւորն,  
Ո՞ւր պահուըտէր, ի՞նչ ընէր.  
« Հայր սուրբ դոչեց, — աչքէն ցատքեց արա  
ցունքը, —

**Մեղայ** քեզի, թողութիւն տուր յանցանքիս,  
Զգիտեմ ուսկից եկաւ ինձ այս փորձանքը  
Յայտնի րան է չար սատանան խաբեց՝ զիս ”:  
Սատանան անդին խըցին անկիւնէն  
Ճըւաց ու ըսաւ. “ հերիք է հերիք.  
Ամօթ չէ ձեզի որ ամեն ատեն  
Զարութիւն կընէք. ու զիս կը քըֆրէք.  
Ես շիտակն ըսեմ, քեզնէ սովրեցայ,  
Եւ առջի անդամն էր որ հոս տեսայ  
Հաւկիթ եփելը ճրագի վրայ ”: ”

## ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Սիրակուսացի երկու երիտասարդք՝ Դաշ-  
մնն ու Պիւթիս իրար խիստ կը սիրէին և  
մտերիմ բարեկամ էին իրարու : Ասոնց բա-  
րեկամութեան հիմը եղեր էր իրենց համա-  
կամութիւնը, համամիտ բնութիւնը, և ազ-  
նուական առաքինութեանց դործադրու-  
թիւնն ու եռանդու հայրենասիրութիւնը  
զանոնք իրարու հետ անլուծանելի միացու-  
ցեր էր : Այն միջոցին Սիրակուսայի իշխանն  
էր Դիոնէսիոս բռնաւորը, որ ամեն տե-  
սակ առաքինութենէ կը խրտէր . ուստի և  
այս երկու բարեկամաց սէրէն, և հայ-  
րենասիրութենէն իր անձին դէմ դաւա-  
դրութիւն կասկածելով դամննը ’ի մահ դա-  
տապարտեց :

Դամնի մայրն ու քոյրը մօտակայ գեղ  
մը կը բնակէին . Դամն բռնաւորէն հրաման  
ինդրեց որ երթայ խեղճ մօրն ու քրոջը վեր-  
ջի բարելը տայ, և խոստացաւ որ չորս օ-  
րէն դառնայ դայ Աիրակուսա՝ իր մահուան  
վճիռն ընդունելու :

Այս ինդրուած քը այնչափ կարգէ դուրս  
երկացաւ բռնաւորին, որ ժպտելով մը զրու-  
ցեց . “ զիս այնչափ միամիտ կը կարծես որ

խօսքիդ հաւատամու քեզ թողում որ եր-  
թաս : Եւ դարձիդ ո՞վ երաշխաւոր կըլլայ :

— Ես , պատասխանեց Պիւթիաս , որ բա-  
րեկամին հետ մէկտեղ գնացեր էր . թէ որ  
որոշեալ օրն ու ժամը չգայ , կը հաւանիմիր  
տեղը մեռնիլ .

Ուրախութեամբ ընդունեց բռնաւորը  
այս առաջարկութիւնը , որովհետեւ Պիւթի-  
աս ևս դամոնին չափ ատելի էր անոր աշա-  
ցը : Ուրիշին սիրտն իրեն սրտին պէս դա-  
տելով՝ որոշ միտքը դրած էր որ Դամոն մի-  
անգամ որ ձեռքէն ազատի այլ ևս չը դառ-  
նար , և այնպէս այն իրենց առաքինու-  
թեամբն ու հայրենասիրութեամբը անուա-  
նի եղած երկու երիտասարդներէն մէկը  
կըսպաննուի , միւսը ինքնահալած կըլլայ և  
անուանարկ իրրե վատ ուխտազանց ոմն .

Զորբորդ օրը կը հասնի , մահառիթ ժա-  
մը կը մօտենայ : Սիրակուսայի բնակիչք հա-  
մախումի ժողոված բարձրաւանդակին պատ-  
րաստուած հրապարակ՝ անձկութեամբ կըս-  
պասեն ահաւոր գլխատութեան , և սակայն  
Դամոն չերևնար . քանզի իր մօրմէն ու քը-  
րոյմէն զատուելով եկեր ողողած գետի մը  
հանդիպեր էր որ անցնելու կամուրջը կոտ-  
րեր տարեր էր : Դամոն որչափ գետին ե-  
զերքէն վեր ու ար կը վազէ , ոչ նաւակ և  
ոչ տախտակ մը կը գտնայ որ վրան նըստե-

լով անցնի : Ժամեր՝ թանկագին ժամեր  
կերթան , արել կը թեքի և դամոն տակա-  
ւին գետէն այս կողմը եկած չէ : Ճարահատ-  
եալ զինքը կատաղի տարերց գիրկը կը նե-  
տէ ու հետը մաքառելով կը լողայ կանցնի :

Բայց Սիրակուսայի մէջ սահմանեալ ժա-  
մը կը զարնէ , կուգան զինքը բանտէն կը  
հանեն կը տանին . և մինչդեռ ժողովուրդը  
կը ցաւէր կողբար անմեղին մահը , և բըու-  
նաւորն ուրախութեամբ կը լեցուէր , ճշմա-  
րիտ և անձնուէր բարեկամը գլխահատ  
բարձրաւանդակին վրայ կելլէր զուարթա-  
դէմ :

Սակայն յանկարծ համատարած լուռ-  
թեան մէջէն աղաղակ մը է կը փրթի “ Ս.Հա՛  
կուգայ ” , դամոն կուգայ ո . և բոլոր ժո-  
ղովուրդը նոյն ձայնը կը կրկնէ . դամոն գե-  
տէն աղատելով՝ իր ունեցած ուժովը կը վա-  
զէ որ պայմանեալ ժամուն հասնի . վերջա-  
պէս չնչասպառ՝ խելքը կորսնցուցած՝ աչ-  
ուըները դարձած կը նետուի ժողովրդեան  
մէջ , բարձրաւանդակին վրայ կսրանայ , կը  
թռչի , կելնէ , բարեկամին կը փաթթուի ,  
համբոյըներովը կը ծածկէ զայն և չերմաջերմ  
արտասուօքը կը թրջէ զայն :

Յայնժամերկու երիտասարդաց մէջ վեհ-  
անձնական կուիւ մը կը բացուի , որ անըզ-  
գայ սրտից անգամ արցունք թափել կու-

տար . “Ճամփ անցաւ , կը զրուցէր Պիւթիւնաս , ալ ի՞նձ կիյնայ մեռնիլ . —Մահուան դատապարտուղղ ե՛ս եմ , ե՛ս պէտք է մեռնիմ և դուն ապրիս” , կը գոչէր դամոն :

Դիոնէսիոս հանդերձ իր անդութ բռնաւորութեամբը չը կրնար այսպիսի սրտաշարժաղիողորմ տեսարանին անկարեկիր կենալ , մանաւանդ կը տեսնէր կը լսէր նաև չորս կողմէն գետահետեալ ժողովրդեան զարմանքը , կարեկցութիւնն ու արգահատանքը : Կիմանայ կը հասկընայ որ այնպիսի չը նաշխարհիկ անձինք փոխանակ մահուաներկարատեկ կենաց արժանի են . երկուքին ևս կը ներէ և հրճուալից ժողովաւրդն ՚ի ձայն ցնծութեան կառնուն յաղթանակաւ տներնին կը տանին այն անձնանուէր բարեկամքը :

## ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ

1783 թուին վերջերը խիստ ցուրտ ձը մեռէն զկնի յաջորդ տարւոյն սկիզբները եղանակները յանկարծ տաքցան : Ալպեան լեռանց ձիւները սկսան առատ առատ հալիլ և փոքրիկ վտակներուն աւաղանները լեցընելով զանոնք գետերու գարձնել և գետերըն ա՛լ մեծադոյն ընել , սակայն առաւել աւերիչ էին այն ահագին սառուցները որ գետոց վրայէն լողալով կերթային : Գետափանց

վրան շինուած շատ հեւղեր վկասուեցան այն ատեն ու կործանեցան , և շատ մարդիկ ալ կեանքերնին կորուսին :

Խտալիոյ վերոնա քաղաքին մէջ հոյակապ կամուրջ մը կար Ատիճէ գետին վրան շինուած , գետ մը որ Տիրողի սառամանուտ բարձր լեռներէն քվիսելով կիջնայ խտալիա կը մանէ և անոր համար ալ խիստ սրընթացէ : Կամուրջին վրան տնակ մը կար որուն մէջ կամրջապետը իր ընտանեօքը կը բնակէր : Որովհետեւ գետին ջուրը անակնկալ արագութեամբ ելեր և մարդուն շուրջը պատեր էր . և յիրաւի սառուցներուն երթալու ոյժն ալ այնչափ մեծ էր որ քարերու վրան հիմնարկեալ սիւներէն մի քանի սառուցներուն շդիմանալով կոտրեցան և կամընջին կամարը վարը ջրին մէջը թափեցաւ , և սիւներէն մի քանին ալ վկան անհետացան :

Կամրջին այն մասը , որուն վրան մարդուն տնակը շինած էր՝ ամենէն երկար գիմացաւ սառներուն ու ալեացը հարուածներուն , քանզի սիւներէն ամենահաստաներուն վրան էր . Սակայն ամենեցուն ալ յայտնի էր որ այն սիւնն ալ պիտի տապալի . և այր ու կին իրենց դաւակներովը հանդերձ սկսան ողորմելի ձայնիւ աօդնութիւնն , օգնութիւնն , աղաղակել . Քանի մը հազար մարդիկ կային որ գետին եղերքը կայնէր կը

լոէին, և անշուշտ ամենքն ալ զաւակից է՝  
ին թշուառ ընտանեացը, սակայն անհնա-  
րին բան մը կը թուէր ամենեցուն մակուկով  
մը գետը ճեղքելով սառուցներուն մէջ ա-  
նոնց երթալ ու օդնելը :

Վերջապէս եկաւ ըսպօլվէրինի անունով  
կոմս մը իր ձիուն վրան նստած և հասաւ  
այդ բաղմութեանը որ դժբաղդ ընտանեաց  
սոսկալի յուսահատութեանը հանդիսա-  
տես էր, և երբոր իր աչօքը տե-  
սաւ և հասկցաւ թէ կամրջապետին վիճակը  
ճիշդ այնպէս է ինչպէս որ իրեն պատմուած  
էր, հանեց իր գրպանէն քսակ մը երկու  
հարիւր ոսկիով լեցուն և պոռաց, թէ այդ-  
քսակը այն մարդուն պիտի ընծայէ որ յան-  
դրդնի խեղճերուն քովը երթալով անոնց  
օդնէ :

Բայց որովհետեւ նաւավարքն անդամ  
համոզուած էին թէ նաւը սոյն սառուցաց  
մէջը իջեցնողը ստոյգ մահուան մօտ է, և ոչ  
ոք ուզեց գէթ փոքրիկ փորձ մը ընել. Եւ  
այն միջոցին ջուրը կառաստանար ու կը բար-  
ձրանար և աղքատիկին հիւղը աւելի սերտ  
կերպիւ կընդգրկէր :

Հոն Աւստրիացի գիւղական մ'եկաւ,  
լսեց ողբրմելիներուն աղէկոտոր կոչումները  
ու սիրտը թնդաց : Թուաւ նետուեցաւ գե-  
տին ափանցը վրան կապած մակուկներուն

մէկուն մէջը և համարձակ համարձակ սա-  
ռոյցները բաժնելով իրեն ճանապարհ կը  
զ տնար յիշեալ կիսամեռ ընտանեացը յօդ-  
նութիւն հասնելու : Յաջողեցաւ գիւղա-  
կանը բարեբախտաբար եկաւ հասաւ տնա-  
կին, բայց կամրջապետին ընտանիքը բաղ-  
մաթիւ գոլով խոհեմութիւն չէր փոքրիկնա-  
ւակը այսպիսի երկիւղալի հանդամանաց ա-  
տեն խիստ բեռնել :

Ուստի գիւղականը խորհեցաւ որ նախ  
և առաջ երեք հոգի առնէ նաւակին մէջը  
դնէ ու ազատէ . այնուհետև այդ դժուա-  
րին գործը երկու անգամ ալ կատարելով  
յաջողեցաւ բոլոր ընտանիքը ազատելու : Եւ  
հազիւ թէ կը զերծանին, յանկարծ կընայ  
և այդ սիւնին մարմինը կամրջապետին տը-  
նակն ալ վրան :

Հանդիսատեսք մեծ համակրութեամբ  
կը գրուատէին ու կը ծափահարէին գիւղա-  
կանին քաջութիւնը . յայնժամ եկաւ անոր  
քովկոմնը և մատուցանոր քսակը լեցունոսկի-  
ով և ըսաւ . «ա՛ռ սա քեզի, քանզի քու  
արիւթեամբդ արժանի ես դուն այդ վար-  
ձիդ » :

“Այսնեկին” ըսաւ գիւղացին, այսպիսի  
բաները ստակի համար չեն ըներ . թէպէտեւ  
մեծամեծ կալուածոց տէր չեմ, բայց ունե-  
ցածովս կը շատանամ և գոհ եմ. Դուք ձեր

ոսկիքը տուէք այն խեղճ ընտանիքին որ  
կամուրջին վրան շատ աշխատեր և շատ ալ  
տնանկացեր են իրենց ունեցածը կորուսա-  
նելով : ” Ահա այս խօսքերս ըսելով ելաւ  
գնաց . առանց իր անունն ու բնակարանը  
ըսելու : — « Բարի ըրէք առանց փոխարէնի  
մը սպասելու և բարձրելոյն որդիքը պիտի  
ըլլաք , ” (Դուկ . 6 դԼ . 35 հմր .)

## ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

Երբ Խոսրով կը թագաւորէր Հայոց աղ-  
թին ու երկրին վրան , Պարսկաց Սասանեան  
Արտաշէր թագաւորին խորհրդովը , Անակ  
իշխանը Պահլաւունին եկաւ Հայաստան իրը  
թէ Արտաշիրէն հալածուած և փախած , որ  
կը փափաքի Խոսրովին պաշտպանուիլ . սա-  
կայն իսկ նպատակը Հայոց թագաւորը ըս-  
պանել էր : Օր մը պատեհութիւն գլտնա-  
լով սուսերովը կը հարուածէ զթագաւորը ,  
և մինչդեռ ՚ի փախուստ կաճապարէ , պա-  
շարուելով Հայոց զօրքէն՝ դետավէժ կը մե-  
ռանի Երասխայ մէջ : Անոր ընտանիքն ու  
որդիքը նաև կը կոտորուին սրով , և այս կո-  
տորածէն կաղատի միայն Երեքամեայ մա-  
նուկ մը զոր Աստուած պատրաստած էր ա-  
ւ ետարանական կենդանաբար լցուը համօրէն  
Հայաստանի մէջ տարածելու համար : Այս

մանուկը իր Սովիթա անուն հաւատացեալ  
անտունտուի խնամքովը կը զերծանի ՚ի կե-  
սարիայ և այնտեղ մկրտուելով կստանայ  
Գրիգոր անունը :

Յետ սակաւ ժամանակի Արտաշէր Սա-  
սանեան զօրանալով՝ կը տիրէ Հայաստանի և  
սրաման կը լուսորովայ գերդաստանը , բայց  
ասոր ալ երկու զաւակները կաղատին մեր  
նախարարաց ոմանց ձեռօքը՝ Տրդատ կը  
փախցնեն Հռովմէական պետութեան մէջ ,  
իսկ զխոսրովիդուզտ կը տանին Անի ամրոցը .  
Տրդատ կը վարժի հոս զինուորական կը ը-  
թութեան մէջ երևելի զօրավարի մը մօտ ,  
իսկ Դրիգոր Պահլաւունին կը զարդանայ հոն  
Փրիստոնէական հրահանգօք և իմաստասի-  
րական հմտութեամբ :

Գրիգոր 18 տարեկան հասակին մէջ  
կամուսնանայ Մարիամ՝ անուամբ բարեպաշտ  
աղջկան մը հետ և կունենայ երկու զաւակ՝  
Վլթանէս և Սրիստակէս : Յետ ժամանա-  
կաց Գրիգոր խիստ փափաք մը զգալով թէ  
Հայաստանը քրիստոնէական ճշմարտու-  
թեամբը լուսաւորելը իրեն երջանիկ պարտ  
մը է՝ Վլթանէսը դայեկաց և Սրիստակէսը  
իր ամուսնոյն կրյանձնէ ու անոր համաձայ-  
նութեամբը կը մեկնի ու կուղեօրի առ . Տրդ-  
դատ . վասն զի տեղեկացած էր որ իր Հայ-  
ըն Անակ ըսպանած է Տրդատայ հայր Խոս-

րովը . Տրդատ իր քրոջութեամբը փայլելով  
և մանաւանդ մէկ օտարազգի քաջ թագա-  
ւորի մը հետ ունեցած մենամարտութեա-  
նը մէջ յաղթող հանդիսանալով՝ կը պսակուի  
արքայական թագով և կը դառնայ Հայաս-  
տան իր հօր տեղը թագաւորելու :

Երբ կը համնի Հայոց հողը՝ գոհութեան  
զոհեր կը մատուցանէ Անահիտին իր յաղ-  
թութեան և արքայական փառաւորութեան  
համար . ուստի և կը հրամայէ Գրիգորին ,  
որ իր զօրացը մէջ կը դանուէր և քրիստո-  
նէութեամբ յայտնի էր՝ ընթրեաց սեղանի  
վրայ դրած ծաղկանց պսակներէն առնուլ ,  
նոյնպէս և թաւ ոստեր և մատուցանել Անա-  
հիտ դիցուհւոյն . Գրիգոր կը հրաժարի այս  
հեթանոսական պաշտամունքէն և Տրդատայ  
զայրոյթը սաստկապէս կը բորբոքի , և Գր-  
իգորի մտաց հաստատութիւնը քայքայե-  
լու համար 'ի գործ կը գնէ ողօքանք , խոստ-  
մունք , սպառնալիք , և հաճութեան նշոյլ  
իսկ չ'տեսնելով՝ կը սկըսի մի զինի միւսոյն 'ի  
կիր արկանել հոռվմէական սարսափելի տան-  
շարանները . Առաւել եւս կը կատղի Տրդատ  
երբ կիմանայ թէ Գրիգոր Անակայ որդին է  
որ իր հայրը սպաններ է , և կը հրամայէ  
արկանել մահապարտաց դուրը :

Այս միջոցին յանկարծ Հայաստան կա-  
պաստանի Հռովմէական հալածանաց մըր-

րիկներէն փախած կուսանաց գունդ մը .  
Բայց երբոր Տրդատ այս անմեղներուն հան-  
գըստութիւն չը տար և մանաւանդ ասոնց-  
մէ Հռիփսիմէ անունով մէկուն դէմ չարու-  
թիւն ընել կուզէ և անոր սպանմանն ալ  
պատճառ կըլլայ , կիյնայ ներքին տագնա-  
պի մը մէջ , և քանի մը օր յետոյ որսի ելած  
ատեն կը մոլեգնի վայրենի անսառունի պէս =  
Տրդատայ քրոջ կը յայտնուի թէ գուրին  
մէջը ձգուած Գրիգորը միայն կրնայ բժշ-  
կել զՏրդատ . Նախարարներէն մին իսկոյն  
կերթայ կը հանէ զմեծ Հայրապետը վիրա-  
պէն թխացած ու սեցած , որ լրւացուելով  
և նոր հագուստուներ հագնելով կուզեորի 'ի  
վաղարշապատ : Վայրենացեալթագաւորը ու-  
նորա հետ միասին մոլեգնեալ և փրփրեալ  
իշխանները և բազմաթիւ այսահարները Դը-  
րիգորի առաջը կելնեն , որ ծունը կիշնէ ,  
կաղօթէ և սակաւ ինչ կզգաստացնէ : Իսկ  
երբ իրենց յանցանաց համար թողութիւն  
կը խնդրեն զդաստացածները , Գրիգոր Լու-  
սաւորիչ կը յայտնէ որ ինքը բնութեամբ՝  
անոնց հաւասար մարդ է , ուստի և կը յոր-  
դորէ " զԱստուած միայն ճանաշել Արարիչ  
երկնի եւ երկրի , զնա միայն պաշտել և 'ի  
նմանէ խնդրել թողութիւն և փրկութիւն , "

Գրիգոր կըսկսի ԵՅ օր քարոզել բազմա-  
խուռըն ժողովրդեան և թագաւորին ու-

իշխաններուն քրիստոնեայ կուսանաց գէմ  
բրած հալածանքներն ու անոնց ըսպանու-  
թիւնը իրենց աչացը առջև իրեւ բուն քը-  
րիստոնէութեան գէմեղած յանցանք ցուց-  
նելով կը համողէ բոլոր բաղմութիւնը  
դառնալ կռապաշտութենէ 'ի ճշմարիտ Աստ-  
ուածդիտութիւն . Այս քարոզութիւնը կը-  
լայ որպէս ընծայութիւն կամ պատրաստու-  
թիւն մկրտութեան , որով այնչափ կը շար-  
ժի ժողովուրդը որ իր գաղափարաց փոփո-  
խութիւնն ու զզումը և ապաշխարութիւ-  
նը յայտնապէս խոստովաննելուն ու իր նոր  
կրօնքը դաւանելուն յապացոյց՝ նահատակ-  
եալ սուրբ կռւսանաց վկայարաններ կը շի-  
նէ , որ փոքր եկեղեցիներ էին՝ որոնց մէջ հան-  
դիսիւ թաղուեցան նահատակելոց հօղեղէ-  
նը : 'ի փառաւորութիւն տօնին թագաւո-  
րը ինքը փորէ տապանաց աեղերը և Աշխէն  
թագուհին աւ խոսրովիդուղտ օլիորդը ի-  
րենց հանդերձներով բրած հողը կը կըն և  
դուրս կը թափեն . Հոս էր ուր կանդնեցին  
առաջին հոյակապ և գեղասքանչ եկեղեցին՝  
լ.ջմիածին՝ յանուն Միածին Որդւոյն Աստու-  
ծոյ և սեղանատեղուոյն վրան բարձրացուցին  
Խաչը՝ փրկութեան նշանը : Այս տեղ կը դի-  
մէ ժողովուրդը խուռան բաղմութեամբ , որ-  
պէս 'ի կեդրոն Հայաստանեայց հօգեւոր մի-  
ութեան եւ կաշակերտի աւետարաննական

վարդապետութեան . Այսուեղ բաղկատա-  
րած կը հայցէ Գրիգոր , եւ Աստուած կը  
բժշկէ հոգւով և մարմով խօթացեալները ,  
անդամալցծները , ջրդողները , բորոսները ,  
և ամէն ախտաժէտները : Քրիստոնէութիւ-  
նը կը յաղթանակէ , և հոգւով ու ճշմարտու-  
թեամբ երկրպագուները կը բաղմանան :

( Բատ Մ. Վարդ . Մուրատեանց )

## ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍ

Մեր նախնիքը Գրիգորի ձեռօքը լու-  
սաւորուելէն զինի սովորութիւն ըրին իրենց  
եկեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնեայն  
միշտ անոր զաւակներէն թռոներէն ընտրել:  
Սակայն բաւական ժամանակ անցնելէն ետ-  
քը Փառներսէն անուամբ մէկը կը կաթու-  
ղիկոսանայ , որուն մահուանէն յետոյ Հայոց  
նախարարներն ու կուսակալները և զօրա-  
կանները , ժողովրդեան մեծ բաղմութեամբ  
հանդերձ կը ժողովուին ու միաձայն հաւա-  
նութեամբ հայրապետ կընտրեն մեծն և ըս-  
քանչելին Ներսէս , որ ուսմամբ և բարե-  
պաշտութեամբ զարդացած 'ի կեսարիայ ,  
մտած էր զինուորական կարգի մէջ և կը  
ծառայէր 'ի յարքունիս Հայոց իրրե սենեկա-  
պետ և զինակիր թագաւորին : Բարուք  
քաղցը , հասակաւ բարձր և գեղանձնեայ էր

Ներսէս : Ներսէս այս անակնկալ ընտրութենէն շփոթուելով՝ կաշխատի հրաժարիլ, իր անձը անարժան համարելով հայրապետական վսեմ կոչման, բայց մեծագումար ժողովի միաձայն աղաղակը դինքը կը պարտաւորէ ընդունիլ զայն :

Նախարարք, կուսակալք և դօրականք կը պատրաստուին և թագաւորի հրովարտակաւ կը տանին զներսէս՝ի կեսարիայ, ձեռնադրել կուտան հայրապետ և բերելով կը կացուցանեն Հայոց հօտին վրան :

Ներսէս լիովին կ'զգայ իր անձին մէջ ազգի տարտամ վիճակը որ արտաքուստ օտարաց ազդեցութենէն կը տաղնապէր և 'ի ներքուստ զեղծմանց ու երկողառակութեանց մէջ կը տարուբերէր . ուստի իր բարձր կոչման համեմատ օտարաց առջև կը հանդիսանայ ազգային իրաւանց իրաւարար, իսկ ազգին մէջ՝ պարտուց կատարող հայր և ուղղութեան առաջնորդ . Ով որ մէկ անգամ՝ Մեծն Ներսիսի կեանքն ու արարքը քննէ ու հասկնայ, այն միայն կրնայ ըմբռունել թէ ի՞նչէ կաթուղիկոսութիւն կամ Հայրապետութիւն :

Ներսէս ժողովը մը կը դումարէ համօրէն եպիսկոպոսներէ և բազմաթիւ աշխարհականներէ և կանոնական սահմանադրութեամբ կը ջանայ մարդասիրութիւնը և ողորմածու-

թիւնը արմատացնել Հայաստանի մէջ և անդը թութեան արմատը խլել . կը շինէ աղքատանոցներ, և կը կառուցանէ հիւանդանոցներ ամեն գաւառաց մէջ՝ բորոտներու, ու ըուկներու և հաշմերու պատսպարութեան համար, որոնք մինչև այն ժամանակ պիղծհամարուած էին, և անդթութեան երեսէն փախչելով՝ ամայի անապատներու, քարանց ծերպերու և մացառներու մէջ կը բնակէին . և այս աղքատանոցներու և հիւանդանոցներու համար հասոյթ կը նշանակէ աւաններէն, պտղաբեր ադարակներէն և արօտականաց կաթնէն և գեղմանէն, ընդհանուր վերատեսուչ կարգելով իր խաղ անուն կարնեցի սարկաւազը, կը շինէ ամեն գեղերու մէջ վանքեր կամ իշեաններ՝ որպէս օտարանոց անձանօթ ճանապարհորդներու և հիւրերու համար, և որպէս տեղի ապաստանի որբոց, ծերոց և կարօտելոց . կը շինէ զանազան տեղերու մէջ մենաստաններ կամ միանձանց խրճիթներ, ժառանգաւորաց եղբայրանոցներ կամ դպրոցներ ամեն գաւառոց մէջ, Յունարէն և Ասորերէն գիտութիւն դպրութեամբ ծաւալելու համար, և այս հաստատութեանց վրան, որոնց թիւը երկու հազարէն աւելի կըլայ՝ արժանաւոր տեսուններ կը նշանակէր Հայերէն :

Ներսէս զեղծումներն ու հեթանոսական

սովորութիւնքը, որ մեր աղջէն տակաւին անհետացած չէին՝ բառնալու համար յոր դորանօք և կանոնական սահմանադրութեամբ կարգելու մերձաւորաց խնամութիւնը, կամ ամուսնական տոհմակից խառնակութիւնը, որով եղծեալ էին մանաւանդնախարարները, ագահելով որ իրենց սեպհական ազատութիւնը և ստացուածքը այլոց չանցնի, նոյնպէս և կարգելու մեռելոց վրան կատարուած յուսահատական կոծումները, սեպհետիլը, և այլ սնոտիապաշտոնիները.

Գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, գաւառէ գաւառ կը շրջի Ներսէս հայրապետ, և իր հայրապետական խնամքը հաւասարապէս կը տարածէ ամենուն վրայ. հանապազօք սեղանակից կընդունի ոչ միայն նախարարներ ու կուսականեր, այլ մանաւանդոտարականներ, կաղեր, կոյրեր, մարմնահարներ և հաշմեալներ, որոնց շարաւալի վէրքերը շատ անգամ իր ձեռքովը կը լուայ, կօծանէ և կդարմանէ, գիւղական խրճիթներն ու տանիքները իր համար հայրապետական գահոյք առնելով.

Հայրենեաց մէջ հայրն Ներսէս պաշտպան հայրենեաց է օտարաց առջեւ. երբ կը թէ Հռովմայեցի թէոդոս զօրավարը կը դիմէ Հայաստանը աւրելու, ընդ առաջ կը

լանէ, կը զիջուցանէ նորա զայրոյթը. կերթայ կոստանդնուպոլիս՝ հայոց պատանդները յետ կառնու, կայսրական տոհմէն Ողիմակիադա կոյսը կը բերէ հայոց թագաւորին հղուորդինոր պատանդ էր հիւպատոսութեան կարժանացնէ ու կդառնայ կրկին 'ի Հայաստան :

Մեծ իմաստութիւն կը գործածէ Ներսէս մեր հայրենիքը, որ Պարսկաց ու Հռովմայեցւոց մէջ տեղը իյնալով մերթ ասոր մերթ անոր ձեռքը կանցնէր՝ իսպառ ազատելու ու անկախ ընելու համար, ուստի և կը յորդորէ, կը յանդիմանէ նախարարները, որ թագաւորին հետ հաշտին և ուխտեն «որ թագաւորը վարուի ուղղութեամբ և նախարարները ծառայեն միամստութեամբ»:

Ներսէս կրկին կերթայ կոստանդնուպօլիս, բայց հիմա առ վաղէս թագաւորը մէկ նամակաւ որ զիջուցանէ անոր բարկութիւնը, սակայն այս անգամ հալածանք կը կրէ վաղէսէն՝ արիոսականաց առաջարկութիւնը մերժելով, և կաքսորուի մի ամայի և անմարդաբնակ կրղոյ մէջ խոտաբուտ լինելով և տագնապելով 'ի սէր ազատութեան հայրենի աշխարհին.

Երբոր Պարսից թագաւորը կուգայ Հայաստանը աւրելու, բիւրաւոր քրիստոնեայք

կը ջարդէ և կը գերէ, հայոց կուսակալները  
փոխանակ աւերման առաջն առնելու՝ Ար-  
շակ թագաւորէն կը բողոքեն ու ազգը պա-  
ռակտելու կը ջանան։ իսկ Ներսէս ամենքը  
կը ժողովէ, կը համոզէ որ հնազանդ ըլլան  
հայրենի թագաւորին և միաբան պատերազ-  
մին մողեկրօն Պարսկաց դէմ, այս նշանաւոր  
խոսքերը աւանդելով. “ եթէ Արշակ բիւր  
անդամ ևս չար ըլլայ, սակայն աստուածա-  
պաշտ է, և եթէ մեղաւոր իսկ ըլլայ, դար-  
ձեալ ձերին թագաւորն է ” ։

Ներսէս կը տեսնէ հայոց վրան եկած  
ազգի ազդի աղջտները, Պարսկաց անդը-  
թութիւնները, եպիսկոպոսաց կապանքնե-  
րը, նախարարազուն կանանց խեղդամահ  
կախումը բերդերու պարիսպներէն, սակայն  
չը յուսահատիր, Պապը կը թագաւորացնէ  
Արշակայ տեղ, հայոց բանակին հետ պատե-  
րազմի դաշտը կելնէ, ահաելի ճակատամար-  
տին ժամանակ լեռը կը բարձրանայ Պապին  
հետ. ինքը բագկատարած կազօթէ Հայաս-  
տանի փրկութեան համար, և զիսապ նոր  
տեսարանով յուղղութիւն ածել կը ջանայ.  
Պարսիկը կը յաղթուի, և ուրացող Մերու-  
ժան, փոխանակ թագի, եռացեալ շամփրով  
կը պսակուի Սմբատ ասպետէն։

Այսպէս կը կատարէ Ներսէս իր հայրա-  
պետական պարտքը, աղքատները սփոփե-

լով, կայսրներն ամոքելով, գորականները  
քաջալերելով, թագաւորներն ու նախարար-  
ները խրատելով և կշտամբելով, և 'ի վերջո  
Պապայ ձեռքով կը թունաւորի և կը թաղ-  
ուի թիւն աւանի մէջ ։

( Ըստ Մ. Վարդ. Մուրատեանց )

## ՍԱՀԱԿ ԵՒՄԵՍՐՈՊ

Մինչդեռ Հայաստանի քաղաքային շէն-  
քը կը տատանէր, քրիստոնէութիւնը կամ-  
բացնէր իր փրկարար աղդեցութեամբը ա-  
նոր հոգեսոր շինութեան հիմունքները, այն  
մոլի թագաւորաց և խռովայսող նախարարաց  
դէմ հանելով աւետարանական այնպիսի ըն-  
տիր մշակներ, որոնք առանց աղէտներէ և  
տառապանքներէ յուսահատելու մի կողմէն  
կարտասուեն հայրենեաց անկման վրայ և  
միւս կողմանէ արտասուքները կորբեն և  
բարոյական ոյժը զօրացնել կը ջանան։

Այս ընտիր մշակներուն պարագլուխ կը  
դասուին Սահակ և Մեսրոպ՝ ամոլք Հայաս-  
տանի հոգեսոր մշակութեան։

Սահակ մեծն Ներսիսի որդին էր, կոս-  
տանդնուազօլսոյ մէջ հելենական դպրու-  
թեամբ վարժուած, և համանման իր հօրը՝  
հայրենեաց ցաւը զգացող և լուսոյ ծաւալ-  
ման համար խորհուղ ու աշխատող, իսկ Մես-

բոպ էր մեծին Ներսիսի աշակերտը, վարդան անուն առաքինի մարդու մը զաւակ, որ Ներսիսի կենդանութեան ժամանակ նօտար էր հայրապետական գործքերու, իսկ անոր վախճանէն զկնի հայոց արքունական դիւանին ատենադպիր կարգեցաւ, վասն զի դիտակ էր թոյն, Ասորի և Պարսիկ դըպրութեանց, մանաւանդ զի հմուտ նաև աշխարհական կարգաց և իր մեծանուն ուսուցչի նման զինորական արհեստի մէջ վարժուած :

Սահակ Պարթե, կաթուղիկոսի մահէն զկնի, Խոսրով թագաւորին և Աղդին հաւանութեամբը հայրապետ կընտրուի, բայց որովհետեւ Պարսկական մոգակրօնութիւնը էշխել կը ձգտէր Հայաստանի քաղաքային և կրօնական Վարչութեան, ուստի նորընտիր հայրապետը ոմանց քսութեամբ կամբաստանուի և Պարսից Դուռը կը կոչուի Խոսրովին հետ : Սակայն կընդդիմանան ու չեն երթար : Ասոր համար Պարսից թագաւորը զայրանալով իր որդին մեծ զօրքով Հայաստան կուղարկէ, Սահակը հայրապետութենէ կը դադրեցնէ ու Խոսրով կապելով կը տանի կը կալանաւորէ՝ տեղը անոր Վռամշապուհ եղբայրը թագաւորացնելով :

Պարսից վախճանեալ թագաւորին կը յաջորդէ Արտաշիր, և Սահակ վերստին կը

շարունակէ իւր հայրապետական պաշտօնը և կուղերի առ Արտաշիր Հայոց դառն աղբաժիցը համար դարման գտնալու, և կը դըտնայ իսկ : Սակայն Հայաստան երկու համազօր Տէրութեանց՝ Պարսից ու Յունաց մէջ տեղը պատահելով, այս երկուքիս ձեռքէն չարաշար նեղուեր տանջուեր է . Պարսիկները կաւերէին յայտնի յարձակումներով, իսկ թոյնք կը պատրէին օգնականութեան սուտ խոստումներով և Պարսից հետ աւելի կը թշնամացնէին :

Մեսրոպ, շուրջ եօթն տարի, Հայոց արքունեաց մէջ ատենադպրութեան պաշտօն վարելէն զկնի՝ կանցնի Գողթան և Սիւնեաց գաւառները և ջանադիր կըլլայ տեղոյն վայրենարարոյ և խուժադուժ ժողովուրդը կըթել Աստուածային ուսման մէջ և յաւէտ Աստուածաշատունչ գրոց ուսման մէջ վարժելու կը ճգնի : Բայց հայկական գրեր չըլլալուն պատճառաւ շատ դժուարութիւն կը կըէ և խորին թախծութեամբ կը տրտմի, երբ կը տեսնէ թէ ժողովրդեան չը հասկըցած լեզուաւը կը կարդացուի Ա. գիրքը Հայաստանեաց եկեղեցիներու մէջ, և կը մատիաքի հայկական գրեր պատրաստելու :

Այս սուրբ բաղձանքով լցուած՝ կը դառնայ առ Սահակ և կը հաղորդէ անոր իր սրտին իղձը, և անոր սրտին մէջ ևս նոյն

Եռանդը վառուած կը տեսնէ . Ա. Հայրապետը ժողով կը գումարէ , խորհրդակցութեամբ ՚ի կատար հանել այս նուիրական գործը , ուր ներկայ կը գտնուի և վռամշապուհ ուսումնասէր թագաւորը . կ'որոշեն որ հայկական գիրեր կամ որոնուին գտնը ուին և կամ նոր հնարուին : Մեսրոպ շատ մը հեռու տեղեր ուսումնականներու երթալէն և գրեթէ արդիւնք մը չը գտնաէն զինի աղօթքով Աստուծոյ օգնութեանն կը դիմէ , և Սնոր առաջնորդութեամբը կը գըտնայ Մեսրոպ մեր այրուբենը որ մեր ազգութիւնը պահող և Հայ ազգը կը թող ու լուսաւորող հզօրագոյն մէկ միջոցը կը լայ :

Մեսրոպ հայկական նոր գրերով կ'սկսի թարգմանել Աստուածանչէն Սոակաց գիրքը իբրև նախապտուղ իր քրտնաթոր մաս կութեան և ուրախանալով յաջողութեան վրայ՝ կը դառնայ ՚ի Հայստան , վռամշապուհ թագաւորն ու Սահակ Հայրապետը սոյն ուրախական լուրն առնելով՝ կը գիմաւորեն Մեսրոպին , բազմութեամբ նախարարուաց և աւագանի մարդկան , կ'ողջագուրեն զնա անպատում հոգեզմայլութեամբ , և ցընծութեան երգերով թագաւորանիստ քաղաքը կը դառնան , ուր քանի մի օր կը տօնեն Տօն ցնծութեան հայկական նորագիւտնչանադրաց և հայեցի գպրութեան դա-

րագլխոյն համար . — Այնուհետև հրաման կը հանէ թագաւորը , հաճութեամբ հայրապետին վարժարաններ հաստատել ամեն տեղ , մանուկներ ժողվել հայերէն դպրութեան և գըտնութեան մէջ վարժելու և Յունարէն ու Ասորերէն գրուած մատեանները հայագիր գաղափարելու :

Վռամշապուհ կը մեռնի և Սահակ Պարսից Դուռը գնալով Խոսրովը կալանաւորութենէ կաղատէ և կրկին կը թագաւորեցնէ . բայց հազիւթէ մի տարի կը տևէ՝ կը վախճանի և տեղը կանցնի քանի մի ամաց յետոյ՝ Սահակին ջանիւքը՝ 18 ամեայ Արտաշէս՝ վռամշապուհի օրդին :

Շատ ժամանակ չանցնիր , սաստիկ խռովութիւն կը յուղի նախարարաց մէջ մանուկ թագաւորի արարմանց դէմ , որոնք կը ջանան Ս. Հայրապետն ևս մասնակից ընել իւրենց ազգասպանութեան խորհրդին և չարխօսել Արտաշէսէն առ թագաւորն Պարսից : Բայց գթուտ հովիւը , թէև կը խոստովանի անոր մեղի ու մոլի վարքը , սակայն կը յիշեցնէ միանդամայն և Պարսից գաղանութիւնը , կը մերժէ նախարարաց դաւադեր խորհուրդը՝ այս նշանաւոր խօսքերը արտասանելով . “քան լիցի որ ես գայլերու մատնեմ իմ միոր ոչխարս , և չպատեմ կոտրածն ու հիւանդացածը , այլ գահավէժը”

Նեմ զայն : Եւ ինչպէս կրնայ ըլլալ որ իմ  
ախտացած ոչխարս առողջ գաղանի մը հետ  
փոխեմ, որուն առողջութիւնը մեղ համար  
պատուհաս է : „

Նախարարքը, փոխանակ յետս կասելու  
ազգամատնութենէ, կը միաբանին՝ թագաւ  
որութեան հետ հայրապետութիւնն ևս  
գահավէժ ընել : Սուրմակ անուն վատ երէ  
ցի մը հետ Պարսից Դուռը կերթան, կամ  
բաստանեն թագաւորը և հայրապետը, եր-  
կուսն ևս կը կոչեն այնտեղ և երկուսն ևս  
գահընկէց կընեն՝ Սուրմակը ՚ի վարձ իւր  
չարախօսութեան հայրապետ անուանելով :  
Սակայն ժողովուրդը Սուրմակէն և անոր իր  
նման մէկ յաջորդէն տաղտկանալով նախա-  
րարներէն ոմանք զՍահակ և ոմանք ուրիշ  
մէկը կը խնդրեն հայրապետ : Պարսից թա-  
գաւորը այս երկպառակութենէն օդուտ  
քաղել ուզելով երկու կուսակցութեանց ևս  
առաջարկութիւնքը կը կատարէ, բայց և Սա-  
հակին միմիայն վարդապետական ու կրօնա-  
կան գործքերը կը թողու :

Սահակ, Սրշակունի թագաւորութեան  
բարձման համար սիրտը գառնացած և հայ-  
րապետութեան աղէտներու վրայ կարեվէր  
խոցուած, սքանչելի կերպիւ կատենաբա-  
նէ նոյն ամենատխուր աւուր մէջ և վոամ  
անոր վրան զմայլած, մոգերով հանդերձ,

կը հրամայէ արծաթ տալ Ս. Հայրապետին,  
սակայն նա մերժելով կը մերժէ զայդ և հա-  
մարձակապէս նախարարաց գահն և պար-  
սիկ մարզպանաց բարձումը կը պահանջէ :  
Սահակ կը դառնայ ՚ի Հայաստան, և երբ իր  
հակաթոռը մոլութեան ու ագահութեան  
մէջ կը վախճանի, կրկին կը խնդրուի ընդ-  
հանուր հայրապետութեան պաշտօնը վա-  
րել, բայց նա յանձն չառնուր և սակաւ ժա-  
մանակէն յետոյ հիւանդանալով կը վախճա-  
նի և կը թաղուի Աշտիշատ աւանին մէջ :

Սահակին կը տեղակալէ արժանաւոր  
յաջորդը Մեսոպոտ, բայց վեց ամսէն զկնի  
կը փոխի և նա յաշխարհէս, որոց երկրաւոր  
նշխարքը վաղարշապատու մերձ Օշական  
դիւղին մէջ կամփոփեն :

Սակայն կը կնքեն իրենց բազմարդիւն  
կեանքը Հայաստանի լուսաւորութեան եր-  
կու ամողք՝ Սահակ և Մեսորոպ . և պատմու-  
թիւնն ալ Սահակայ տապանին վրայ և մահ-  
կանացու ծնաւ, բայց իր յիշատակը անմահ  
թողուց . . կը գրէ : Իսկ Մեսորոպայ համար  
ալ կը յաւելու, թէ « գերազանցեցաւ Մես-  
որոպ այն ամեն առաքինի մարդիկներէն որ իր  
ժամանակը կային :

(բատ Մ. վարդ. Սուրատեանց)

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Աշխարհիս ականաւոր հանճարներէն և  
պատմիչ հեղինակաց կարգին մէջ պայծա-  
ռափայլ աստղերէն մին է Մովսէս Խորենա-  
ցին իր Հայոց ազդին պատմութեամբը. Այս-  
չափ եռանդ ու այսչափ լրջմտութիւն և  
արդարասիրութիւն, այսչափ գիտութիւն,  
հմտութիւն և տեղեկութիւն իրաց ու ան-  
ձանց և պատմութեանց ու այսչափ պատ-  
մաբանական ճշդութիւն և նրբազնութիւն,  
որ ոչ առատալիր գիտութեամբը իր որոշած-  
ընթացքէն մազի մը չափ լսոտորիլ մոլորե-  
լու կը գայթակղի, և ոչ իր պերճ համա-  
ռոտաբանութեամբը նշանախեց մը որ իր  
սահմանած առարկային կը վերաբերի՝ անյի-  
շատակ կը ձգէ. զարմանալի է: Յիրաւի մեր  
մրտին մէջ բիւրաւոր փափաքներ կը յարու-  
ցանէ, մեր գիտութեան ծարաւը իր ամեն  
դլխովն ու պարբերութեամբը կիզիչ կընէ,  
բայց կատարելապէս կը յագեցնէ կը հան-  
դըստայնէ մեր պատմական իղձը:

Այս անդուգական պատմագիրը և Հայ  
ազդին կոլոմպոսը որ մոռացօնաց Ռվիկանէն  
հանեց յաշխարհածանօթութիւն հռչակեց  
մեր հայրերն ու հայրենիքը, Ամերիկայի

գտշին վիճակակից եղաւ, ոչ միայն իր կե-  
նաց օրերուն մէջ շարունակ տառապանաց  
մէջ ապրելով, այլ նաև իր հանգստեան մէ-  
ջը մանելքն զկնի՝ ուսումնատեաց և օտա-  
րամոլ եկեղեցականք ոսկերներուն իսկ հան-  
գիստ չը տուին և գերեզմանէն հանեցին ու  
ջուրը թափեցին: Այս ազգաշէն բարերարիս  
յիշատակը ամ ըստ ամէ շքեղաշուք տօնա-  
խըմբութեամբ հանդիսացուցանել իւրա-  
քանչիւր Հայու պարտքն է:

Տարօնոյ Խորնի անունով գիւղէն է Մով-  
սէս, որ այն պատճառաւ ալ Խորենացի կոչ-  
ուեցաւ: Մեսրոպայ քեռորդին էր և իր ման-  
կութեան ատեն, երբոր Հայաստանը նոր գի-  
րերու գիւտով կերպարանափոխ կըլլար, ա-  
նոնց նորակառոց գպրոյց մէջն էր և իր  
ուշիմութեամբը, հանճարովն ու փափկա-  
ձայնութեամբը իր ուսուցչացն ու դաստի-  
արակացը յոյժ սիրելի: Նոցա ձեռքին տակ  
մեծ յաջողութիւն ցուցնելէն զկնի, ճանա-  
պարհորդութիւններ ըրաւ աշխարհիս այն  
ժամանակաց ուսումնատեղիք, և ճոխացոյց  
իր խիստ ընդունակ հանճարը պատմագրա-  
կան ու բանասիրական հմտութեամբ:

Երբոր վերադարձաւ Մովսէս իր ուսում-  
նասիրական պանդխտութենէն, վախճանած  
գտաւ իր երանելի վարդապետները Սահակ  
և Մեսրոպ և Վուամչապուհ թագաւորը, և

Հայ հայութնիքը քաղաքական աղէտից մատնուած . ուստի և ընկալուչ խնամակալութիւն մը չը տեսնելով իշխանաց և մեծամեծաց կողմէն՝ իր անձը տիտուր և վշտակեր առանձնութեանց տուաւ , արտասուելով Հայրենեաց և եկեղեցւոյ բազմադէտ վիճակը : Երիտասարդութեան աշխոյժտարիները՝ հայրենեացը մտաւոր մնունդ պատրաստելու համար նուիրողը՝ ծերութեան հասակին մէջ օրուան հացին կարօտ եղաւ , ինչպէս տիտուր վկայութիւն մը կը յիշատակէ , ու պարկը կռնակը զարկած՝ դռնէ դռու կը քալէր այն Հայը այն Հայաստանին մէջ զորն պիտի անմահացնէր իր պատմութեամբ :

## ԳԱՐՈՒՆ

Ո՞հ , ի՞նչ անուշ և ինչպէս զով Առաւոտուց փշես հովիկ , Ծաղկանց վրայ գուրգուրալով Եւ մազերուն կուսին փափկիկ , Բայց չես հովիկ իմ հայրենեաց , Գընա՛ անցի՛ր սրտէս 'ի բաց :

Ո՞հ , ի՞նչ աղու և սրտագին Ծառոց մէջն երգես թունիկ , Սիրոյ ժամերն ՚ի յանտառին

Ըղմայլեցան ՚ի քոյ ձայնիկ . Բայց չես թունիկ իմ հայրենեաց Գընա՛ թըռի՛ր սրտէս ՚ի բաց :

Ո՞հ ի՞նչ մըմունջ հանես վտակ Ականակիտ և հանդարտիկ . Քու հայելոյդ մէջ անապակ Նային զիրենք վարդն ու աղիկ . Բայց չես վտակ իմ հայրենեաց Գընա՛ հոսէ՛ սրտէս ՚ի բաց :

Թոէպէտ թունիկ և հովն Հայոց Աւելակաց թուչին վերայ , Թէպէտ պղտոր վտակն Հայոց Նոճիններու մէջ կը սողայ . Նոքա հառաչք են հայրենեաց , Նոքա չերթա՛ն սրտէս ՚ի բաց :

## ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ա.

Պարսիկները այլ և այլ հնարներով Հայոց թագաւորութիւնը տկարացնելէն յետոյ , կը մոտածեն քրիստոնէական կրօնքն ալ անհետացնել . որովհետեւ անիկայ միայն մեծարդելք էր իրենց ոտիցը հաստատուն կը ուան մը դանալու Հայաստանի մէջ . Մոգե-

ըը և քրիստոնէից ոխերիմ թշնամի Միհըր-ներսէն հազարապետը խորհուրդ կուտան Պարսկաց Յազկերտ թագաւորին, որ մեծ ատելութիւն մ'ունէր քրիստոնէական կըրօնից դէմ՝ Պարսկական տէրութեան բոլոր քրիստոնեայ ազգերը մողութեան դենին դարձնել. Մոլի մողերէն գրդուռած Յազկերտ հրովարտակ մը կը դրէ իր ձեռքին տակն եղած հպատակ ազգաց . և մանաւանդ Հայոց կիմայնէ իրենց թէ միտքը դըրած ըլլալով Քուշանաց վրայ պատերազմի երթալ, իրենց օգնութեանը կը կարօտի. ուստի կը հրամայէ որ իւրաքանչիւրն իր այրուձիով, նախարարներով ու իշխաններով Ապար աշխարհքը դիմեն .

Հայաստան ալ հասաւ թագաւորին այս հրովարտակը : Ումանք միամնութեամբ, այլք 'ի հարկէ կըստիպուին հնազանդիլ այն պիսի հրամանի մը՝ որուն աղէտալից հետեւանացը իրենց միտքն ալ կը վկայէր : Գուշակութիւննին սուտ ալ չելաւ : Մինչդեռ Հոնաց դէմ բացած պատերազմները կը շարունակուէին՝ թագաւորը 'ի մոգութիւն կը հրապուրէր քրիստոնեայքը զանազան միջոցներով, մերթ պատիւներ տալով նախարարաց . մերթ քրիստոնէութիւնը պախարակելով և մոգութիւնն ու քաւդէութիւնը ջատագովելով, և մերթ կրտսերնե-

ըն ու անարդները նախամեծարելով քան աւագներն ու պատուականները : Բայց Քուշանաց նուաճմանէն զինի մոգերը հրապութեցին թագաւորը ըսելով՝ սյն աստուածները, որոնք յազդութիւն տուին քեզ, միայն մի հատուցում կը պահանջեն քեզմէ, այն է քրիստոնէութիւնը բառնալ և բոլոր աղգերը՝ 'ի մոգութիւն դարձնել : Ուստի ու վաղվաղակի պատգամատարներ ուղարկուեցան Պարսկային տէրութեան բոլոր աղգերուն, որ միայն արեգակը պաշտեն, կրակին բապաս տանին և մոգութիւնը ընդունին . Եւ Հայոց այրուձին տար աշխարհին մէջ պահելով՝ ձեռնարկեն տակնապել և տանջել անարդելով, թոշակը պակսեցնելով, ձըմերոցաց դժնեայ վայրերուն մէջ խոշտանգելով և երբեմն ստիպելով որ յազեալ միս ուտեն և երբեմն դէպի հիւսիսցին անապատները գունդագունդ պատերազմի տանելով և ցուրտի և որոյ ճարակ տալով, մինչև որ հաւատքնին ուրանան :

Անտէր Հսյաստանին ուրիշ խեղճութիւն մ'ալ էր պատրաստեր Յազկերտ Դենշապուհ անունով մէկը զրկեց որ առաջ կեղծաւորեցաւ իրը թէ ողջոյն բերած է թագաւորէն և եկած է աշխարհագիր ընելու, հարկը թեթևեցնելու և այրուձին նուազեցնելու . Բայց այն ինչ դենշապուհ Հայերը

Խամբելու համար ամեն պատրողական հը-  
նարք 'ի դորձ կը դնէր և ազգին նիւթա-  
կան ոյժն իմանալով հարկը , սակը , բաժը ,  
հասքը և մուտքը կրկնապատկելով կը ծան-  
րագրնէր ու իր բանսարկութեամբ նախա-  
րարները իրարու դէմ կըյարուցանէր և ա-  
մեն տան մէջ խոռովութիւն կը ծդէր . Ար-  
եաց և Սնարեաց հազարապետը հրաման  
գրեց Հայոց որոյ մէջ երկարօրէն կը բա-  
ցատրէր զրադաշտական ուսումը . Բայց  
աստուածապաշտ Հայաստանը իրեն սուրբ  
հայրապետացը հետ միաբանած՝ Արտաշատ  
քաղաքին մէջ գումարուած եպիսկոպոսաց  
ձեռքովը Միհրներուէնի հրապուրողական  
ու ամբարիշտ թղթոյն պատասխանեցին՝ բան  
առ բան ջրելով համարձակապէս զրադաշ-  
տական վարդապետութիւնը , և ապա կըն-  
քեցին իրենց քրիստոնէտկան դաւանու-  
թիւնը այս նշանաւոր խօսքերով . « մեր այս  
հաւատաքէս ոչ ոք չի կրնար խախտել , ոչ  
հրեշտակը և ո՛չ մարդիկ , ոչ սուր , ոչ հուր  
և ոչ ջուր և ինչ դառն հարուած և ըլլայ-  
եւ եթէ սոյն մեծ վկայութենէս յետոյ մէկ  
ուրիշ բան մ'ալ հարցնես , ահաւասիկ մենք  
որ մեր մարմինները քու ձեռքդ կըյանձ-  
նենք . ու զածդ շուտով ըրէ . քեզմէ տան-  
ջանք և մեղմէ յանձնառութիւնք , քեզի  
սուրը և մեզի մեր պարանոցները » :

Թագաւորն ու իրեն համախոհ մոգպե-  
տը՝ երբոր այս քրիստոնէական ոգւոյն թե-  
լադրած անվեհեր պատասխանը կարդա-  
ցին , առաւել ևս զայրացան . մանաւանդ-  
մոգպետը այն դառնացեալ ծերը , որ կար-  
ծես թէ կը փափաքէր իր աշքովը տեսնել  
Հայաստանի կործանումը , ու իր ձեռքովը  
սուրբ եկեղեցեաց աւերակներուն վրան-  
ատրուշանաց հիմունքը ձգել . խրատ տու-  
աւ թագաւորին որ քաղցրութիւնը ձգէ ու  
այնպիսի ապստամբ ազգը բռնութեամբ ընկ-  
ճէ : Հաւանեցաւ թագաւորը , ու կծու  
թղթով մը հրաման դրկեց որ Հայոց դլխա-  
ւորները և Վարդան Մամիկոնեան սպարա-  
պետը արքունի դուռը դան : Հնագանդե-  
ցան անոնք . Յովսէփի կաթողիկոսին օրհ-  
նութիւնն ու քաջալերութիւնն առնելէն  
ետքը հասան 'ի Պարսկաստան , տեսան ի-  
րենց ընկերակցաց նեղութիւնը , արտաս-  
ուեցին անոնց վշտացը վրայ . բայց թագա-  
ւորին սիրտն աւելի յայրացնելու համար  
հանդարտութիւն կը կեղծէին .

Բայց նա իր սրտին թոյնը դուրս թա-  
փելու չուշացաւ . Նոյն իսկ հասած օրերնին՝  
մինչև այն ատեն սովորական եղած ընդու-  
նելութեան պատւով չընդունելէն զատ՝ ա-  
լէկոծեալ ծովու մը պէս տակն ու վրայ ե-  
ղաւ . երդում ըրաւ սրեւուն վրայ որ ամեն-

Նեղութիւն անոնց գլուխը հասցնէ , եթէ  
երկրորդ օրը անոր առջևը ինկած երկրը՝  
պատութիւն չ'մատուցանեն արեգական . ի՞նչ  
գմնդակ հրաման աստուածասէր նախարա-  
րաց համար . այն օրն՝ յորում կուզէր զշայս  
արևապաշտ ընել , զիրենք իր արեամբը վըր-  
կող ճշմարիտ առտուծոյն հրաշափառ Յարու-  
թեան օրն էր : Այս բանիս յիշատակն ու  
մտածութիւնը միայն զիրենք կը սարսափե-  
ցընէր . ուստի և քաջութեամբ դէմ կեցան  
թագաւորին թէ ինչպէս իրենց կրօնիցը վը-  
րայ հաստատուն են , և թէ առ ճշմարիտն  
Աստուած ունեցած սէրերնին ամեննեին ար-  
գելք չըլլար իրհնոց պարտքերէն պակսելու  
զոր ունին առ երկրաւոր թագաւորս . ինչ-  
պէս ալ հին արքայից ատեն իրօք այլ և  
այլ պիտանի ծառայութիւններ մատուցած  
և գովութեան արժանի համարուած են :

Բայց Յաղկերտի առջև այն ամեն ար-  
դիւնքն ընդունայն էին . անարգանօք մեր-  
ժեց նախարարները իր երեսէն , սպառնա-  
ցաւ օտար և հեռու երկիր մը աքսորել ,  
անթիւ զօրքուղարկել իրենց աշխարհը , նո-  
ցա կանայքն ու որդիքը խուժաստան տա-  
րագրել , եկեղեցիններն ու վկայարանները  
քակել քանդել և աւերակ դարձնել : Սակայն  
երբ սպառնախացն ալ արդիւնքը չ'տեսաւ  
հրամայեց որ բանտի մէջ արգելուն զիրենք:

Հոս տիսուր և սրտաշարժ տեսարան մը  
կը բացուի առջենիս . Ամեն նեղութեանց ,  
ամեն վշտաց ու դառնութեան համբերող  
սրտեր՝ հայրենեաց սիրով կը լքանին , այն  
սէրը կը յորդորէ զիրենք այնպիսի բանի մը  
ձեռք զարնել որ երրէք չէր կրնար արդա-  
րանալ . Առանց սպարապետ վարդանին ի-  
մացնելու՝ որուն հաստատուն հաւատոցը  
առջև իրենց բոլոր խորհուրդները ՚ի դերեւ  
ելած կը տեսնէին՝ խորհեցան որ առ երեսս  
գէթ մէկ անգամուան համար արեւուն եր-  
կըրպագութիւն ընեն , որպէս զի Վրիստոսի  
հաւատքը անվտանգ պահուի Հայաստանի  
մէջ . թէև այս բանը իրենց մէջ զազտ հաս-  
տատեցին , բայց ո՛չ կը համարձակէին յայտ-  
նել վարդանայ , և ոչ չը յայտնել . Ուստի  
բազում ինչ խորհելէն զկնի ժողովեցան մի-  
արան վարդանայ քովը և բացին անոր ի-  
րենց խորհուրդը թախանձելով որ ինքն և  
անոնց միաբանի . Վարդան այս խօսքերս  
լսելով բացէ ՚ի բաց հրաժարեցաւ նոցա  
խորհրդէն և ըսաւ . « Ես իմ Արարշիս հը-  
րամանը չեմ մոռնար որ կըսէ . թէ ով իր  
կինը կամ որդիքը աւտաւել կը սիրէ քան  
զիս , ինձ արժանի չէ . » ուստի ինծի այդ-  
պիսի բան մը մ'ըսէք որ արժան չէ լսելը թող  
թէ արդեամբք կատարելը : Եւ ուրիշ շատ  
կերպերով ու աղաշանքներով համոզել կու-

զէին զվարդան , յիշեցնելով նաև Պօղոսի  
այն խօսքը թէ ուխտիւք կը խնդրէր ինքը  
նղովք ըլլալ և Քրիստոսէն զրկուիլ իր եղ-  
բարց և ըստ մարմնոյ ազգականաց Քրկու-  
թեան համար . Բայց ոչինչ կազդէին քաջ  
հաւատացելոյն այդ խօսքերը : Ուստի ի-  
րենք իրենց մէջ առանց վարդանայ դիտու-  
թեանը որոշեցին ու հաստատեցին հաւա-  
տարիմ մնալ Քրիստոնէութեանը արիւննին  
անդամ հեղլով ՚ի պաշտպանութիւն հաւա-  
տոյ . “ միայն այս անդ ամոււան համար զեր-  
ծանինք այս վտանգէս ու յետոյ ազատենք  
հայրենիքն ու մեր հաւատքը ” : Եւ այս բա-  
նը հաստատեցին՝ ձեռուընին աւետարանին  
վրայ դնելով և երդուելով :

Վարդան այսպիսի բան մը չէր կարծէր ,  
բայց երբոր լսեց և տեսաւ անոնց ահագին  
երդումները , դառն արտասուեցաւ և յան-  
ձըն առաւ միաբանիլ անոնց հետ : Եւ յե-  
տոյ ամենեքին միաբերան աղօթքներ մա-  
տուցին առ Աստուած և խոստովանեցան  
անոր առջև դառն արտասուօք իրենց այն  
գործը որ դիտէին ու կը տեսնէին որ բարի  
չէր բայց բարւոյն համար կատարել կը կա-  
մէին . ուստի և ազդ արարին թագաւորին  
իրենց այս հաճութիւնը :

Զուարճացաւ թագաւորն , բերկրեցաւ  
արքունիքն , պատուեցան նախարարք , տօ-

նեցաւ օրն , և աւետիք ցնծութեան առա-  
քեցաւ մոգաց և մոգպետաց , ատրու-  
շանաց և ամեն մեծամեծաց , որպէս թէ  
դիքյօգնութիւն հասան , և որոշուեցաւ նա-  
խարարները իրենց հայրենիքը դարձնել : Բայց  
որովհետև տակաւին խոպառ անկասկած չէր  
թագաւորն , ուստի և պատանդներ պահեց  
իր մօտ և միւսներուն հետ բազմաթիւ այրու-  
ձի և 700 մոգեր գնելով ուղեորեց : Մոգե-  
րը խնդութեամբ կը վաղվաղէին , վիճակ կը  
ձգէին ճանապարհին , թէ ո՞ր լեզու և ո՞ր  
ազգ որո՞ւ վարդապետութեանը պիտի աշա-  
կերտի : Ունէին իրենց հետ արքունի հը-  
րովարտակ ևս , որով հրամայուած էր , մին-  
չե նաւասարդ ամիսը ամեն բան ՚ի կատար  
ածել , այն է եկեղեցեաց դոները փակել  
և կնքել , սպասները գրով և համարով  
յարգունիս գրաւել , եկեղեցական պաշտա-  
մունքներն ու Սուրբ Գրոց ընթերցմունքնե-  
րը դադեցնել , քահանայից արգելուլ որ  
ժողովուրդը չուսուցանեն , նախարարաց կա-  
նանցը և ազատաց ու շինականաց դստե-  
րացը ուսուցանել մոդութիւնը , ( վասն զի  
կանանց քրիստոնէական բարեպաշտութիւ-  
նը առաւել արգելք էր մոգապաշտութեան )  
ըստ Քրիստոնէական օրինաց ամուսնութիւ-  
նը կարծել և բազմակնութիւն հաստատել  
ազգապղծութեամբ հանդերձ , ծիղք և քա-

Կորք 'ի կրակ չընկենուլ, և ձեռք չը լըւա-  
նալ առանց կովմիզոյ որուն սրբիչ դօրու-  
թիւն կընծայէ զրադաշտական մատեանը:

Բ.

Այս միջոցին այսպիսի գմնդակ լուր  
մը՝ բերնէ բերան, գաւառէ գաւառ տաշ-  
րածուելով հասաւ մինչև Հայոց մոյրաքա-  
ղաքը՝ վաղարշապատ, Յաւ ու տագնապ  
կը պաշարէ զթովսէփ կաթուղիկոսը և իրեն  
համախոհքը, և միաբան ժողով գումարե-  
լով կստիպուին արտասուօք երգնուլ սուրբ  
աւետարանին վրայ, որ չէ թէ միայն իրենց  
արիւնովը սուրբ հաւատքը պաշտպանեն,  
այլ չ'ինայեն նաև իրենց կարեւոր սիրելեա-  
ցը, եթէ անոնք ուղենան Հայաստանի մէջ  
արեւու պաշտօնը տարածել, Հայրը իր որդ-  
ւոյն չ'ինայէ՝ ըսին, որդին ալ այդպիսի առ-  
թի մէջ հօրմէն չը պատկառի. կինը իր էր-  
կանը հետ կուուի, ծառան ալ տիրոջը դէմ  
ելնէ „. ի՞նչ սրտաշարժ դէպքեր, Ամենքը  
դէնք առին, արք և կանայք, զրահ հա-  
գան և պատրաստուեցան:

Մինչդեռ այսպէս կազմ և պատրաստ  
էր Հայաստան իր հաւատոյ պաշտպանու-  
թեան համար, Նախարարները Պարսկաց  
զօրաց և մոգաց հետ Հայաստան հասան:

Քիւղաքաղաքի մը մէջ բանակեցան ու դաշ-  
դար առին մի քանի շաբաթ: Յետոյ մոգ-  
պետը մողերով հանդերձ փորձ փորձեց՝ տէ-  
ըունական օրը եկեղեցին մտնել և զրաւել:  
Սուրբ Ղեւոնդ որ ուրիշ երիցանց հետպաշ-  
տօն կը մատուցանէր, ընդդիմացաւ մոգա-  
կան խմբին և իսկոյն յուղեալ ժողովուրդը  
յարձակեցաւ մողերուն վրայ և բրածեծ ու  
գլխապատառ վանելով սարսափ ձգեց մո-  
գակրօններուն սիրտը, Մոդպետը զարմա-  
ցաւ և իրեն ամեն համախոհքը. “Թող զը-  
րեմ և ցուցնեմ մեծ թագաւորին, կըսէր,  
որ այսպիսի առաջարկութեան մը գործ ադ-  
րութենէն 'ի բաց կենայ . . . քանզի այն-  
պիսի մարդկանց որ զմահ նախամեծար կը  
համարեն քան զիեանս՝ ովկ կընայ դիմանալ”:

Սակայն Հայ նախարարաց մէջ անանկներ  
ալ կային որ 'ի սրտէ ուրացեր էին Քրիստո-  
սի հաւատքը, և ասոնց մէջ գլխաւոր էր  
նենգամիտն Վասակ Սիւնի, որուն հոգեւոր  
աշուշները Փառասիրութեամբ կուրցած՝  
կուզէր Քրիստոնէական հաւատոց վաճառ-  
մամբն ու ջնջմամբը Հայոց թագը գլուխը  
դնել: Տեսնելով վասակ թէ մոդպետը յու-  
սահատեցաւ թագաւորին խորհուրդը ա-  
ռաջ տանելէն, քաջալերել սկսաւ զինքը՝  
և այդ գժուարին գործոցն կատարման յանձ-  
նաւորութիւնը իր վրայ առնելով խոստա-

ցաւ ջանալ որ եկեղեցւոյ ուխտին մէջ երկապառակութիւն ձգէ և այսպէս թագաւորին կամքը՝ ի գլուխ հանէ :

Իր ծածուկ հնարագիտութեամբքը կըսկըսի վասակ միտքը դրած չարութեան խորհութեան առաջ տանելու աշխատիլ . մի կողմէն զօրք հանեց Սիւնեաց աշխարհէն և իր գունդը ստուարացոյց , միւս կողմէն ըսկըսաւ նենգել ու պատրել՝ ոմանց սիրտը պատիւներով ու յարքունուստ բերուած կարասիներով շահելով , ոմանց միտքը պարգևներով ու ոռճիկներով ողոքելով . Մոգեր բաժնեց նախարարաց աներու մէջ , անոնց ոռճիկներն աւելցուց և այսպէս ընդունելութիւն գտնել տուաւ մոգերուն իշխանաց տուներուն մէջ և զոմանս յերկրպագութիւն արեգական հրաւագուրելով՝ անոնց համար ատրուշաններ շինուեցան , և նոյն խսկ Քըրիստոնէից մէջէն քրմապետք կարգուեցան . Այս ամեն չարագործութեանց մէջ վասակ տակաւին կը կեղծաւորէր և զինքն կը ծածկէր և համամիտ կը ցուցնէր . Բայց արթունեպիսկոպոսունք շուտով յաջողեցան ուխտապահ և ուրացող նախարարները իրարմէ զանազանիլ և մանաւանդ վարդանայ մատաց հաստատութեանը հասու լինելով մեծ վըստահութիւն ստացան . Տեսնելով թէ սատանայական խորհուրդն առաջ կերթայ , սուրբ

աւետարանը ձեռութնին՝ Հայոց սպարապետին՝ վարդանայ տունը կը վազեն , իմանալու համար թէ արդեօք իր խորհրդովը այնպիսի անօրէնութիւնք կը կատարուին : “Թէ որ ձեր խորհրդովն է , նախ մեր պարանոցը հատէք և յետոյ եկեղեցեաց վրան ձեռութնիդ զարկէք ” : Որդէն բոլորովին խոռվածէր վարդան Հայոց աշխարհին վրայ հասած աղետիցը համար , արդէն սրտովը լացեր էր ուրացութեան ակամայ յանցանքը , ու առիթ կը փնտուէր թէ ինքը և թէ իրեն հետեղող հաւատարիմ նախարարք՝ որ իրենք զիրենք յայտնեն . Այլ ևս չը կրցաւ դիմանալ , անոնց ներկայութեանը լալով պատմեց իր մտացը ուղղութիւնը և թէ պատրաստ է նոյն սուրբ հաւատքին համար մինչև արիւնն ալ թափելու : Մէկէն հրաման տուաւ որ համախոհքը ժողովուին , ու եղածը դարմանելու փութան :

Այնուհետև բոլոր բազմութիւնը սուրբ նախանձով բորբոքուած վառեցան ՚ի զէն և ՚ի զրահ , և գունդը բաժնելով շրջապատեցին վասակայ զօրքը , կամակորները կոտորեցին և զնոյն ինքն վասակ ձերբակալը ըրին : Սակայն նա եպիսկոպոսաց ոտքը իյնալով թողութիւն իններեց , և որպէս զիիր կեղծաւորութիւնն ու նենգութիւնը կատարելութեան տանի՝ երդումն կնքեց Աւետին 9

տարանին վրան և ուխտին հաւատարմութիւն ուխտեց . Սակայն սրտովն 'ի Հայոց ուժացեալ՝ բերնով անոնց հետ ինքդինքը մէկ կը ցուցնէր , անոնց մէջ կը խառնուէր ու անանկով կշանար զանոնք իրարմէ երկպառակել : Այնչափ և այնպիսի վստահութիւն շահեր էր , որ Պարսից դէմ պատերազմել ուղած ժամանակնին , անոր ձեռքը կը յանձնէին զօրաց մէկ գունդը . Երբորբաւական վստահութիւն դտաւ վասակ , այլ ևս սկսաւ իր երկպառակութեան ու անմիաբանութեան խորհուրդը յայտնել :

Միհրներսէհ Պարսից մեծ հազարապետը տեսնելով թէ իրեն դժուարին պիտի ըլլայ Հայոց միաբանութեան դէմ դնել ու միանդամայն գիտնալով վասակայ 'ի սերտ սրտէ ուրացութիւնը , իրեն կանչեց զինքը ու իմանալով իրմէ թէ որչափ ջանացեր է Հայաստանին մէջէն վերցնել սուրբ կը ոնքը , ու անով թագաւորին կամացը գործակատար ըլլալ , սիրտ առած մեծամեծ պարզեներ կը խոստանայ՝ միայն թէ կարօղանայ իր միտքը դրած խորհուրդները առաջ տանիլ . Անօրէն խոստումը ընդունեցաւ վասակէն : Մէկէն իրեն հետ միաբանեց վասակ այլ և այլ ուխտագրուժ նախարարներն . և անոնցմով ու անոնց հպատակներով զօրաց բանակ մը պատրաստեց , ու սկսաւ իր հայրեն-

եաց ու կրօնիցը դէմպատերազմի պատրաստուիլ . « մոռնալով , ինչպէս կըսէ պատմիչը , Որդւոյն Աստուծոյ գալուստը , և սուրբ աւետարանին քարոզութիւնը չը յիշելով . իր սուրբ հաւատոցը ոչ սպառնալիքներէն վախնալով , և ոչ աւետեօքը միմիթարուելով » : Ասանկով Հայաստան երկու մասն բաժնուեցաւ , հաւատացեալ եւ ուրացող :

Վարդան որ գնդովը դէպի արեելք գացեր էր՝ այն կողմերը արշաւած Պարսիկներուն դիմագրաւելու , մինչդեռ կը շարունակէր իր յաղթութիւնները , յանկարծ դոյժ հասաւ , որ վասակ Քրիստոնէութեան ուխտէն յետս գալով , հրձիգ կընէ գիւղերը , կը կործանէ բերդերը , կը գրաւէ զօրաց կայանքները և ձմերոցները , ուխտապահնախարարաց կանայքը և ընտանիքը կը կալանաւորէ ամրոցներու մէջ , եկեղեցիները կը կողպատէ , քահանայք կը կապէ և բոլոր երկիրը կը նեղէ ու կը բռնահարէ : Բաջ ըսպարապետը այս դոյժն առնելով , ժողովեց իր զօրքերը և շտապաւ Հայաստանի սահմանը հասաւ , որոյ յաղթութեան հըռչակէն և ահէն վասակ սարսափելով թողուց գերին ու աւարդն և աճապարանօք փախաւ Սիւնեաց գաւառին ամրոցներուն ապաստանեցաւ : Վարդան և իր նիզակակիցք առին թագաւորանիստ տեղերը ու երկիրը

անդորրացուցին . և այն ձմեռը խաղաղութեամբ անցուցին : Եպիսկոպոսապետն Յովսէփ պատուիրեց որ բոլոր քաղցր ամիսը պահօք և աղօթիւք Աստուծոյ օգնութիւնը հայցեն երկրին խաղաղութեանը համար , և ապա 'ի նշան գոհութեան և 'ի յիշատակ մեծ յաղթութեանն սահմանեց տարեկան տօն կատարել Քրիստոսի Յարութեան տօնին հետ :

Այն ինչ հրճուանօք կը տօնէին զատկական օրերն , յանկարծ լուր հասաւ որ Պարսկային գունդը սահմանին հասած բանակ ողբած են , ասպատակներ կը վուեն աշխարհի մէջ : Հայաստան խռովեցաւ , նախարաց սիրտը թնդաց և ահա' վաղվաղակի իւրաքանչիւրն իրենց վաթուն և վեց հազար հոգի զօրքովը Արտաշատ գումարեցան մեծին վարդանայ քովը , և անոնց հետ Յովսէփ կաթուղիկոսն ու Ղեւոնդ երէցը . Սպարապետարքարեց այս զօրախումբը , զինուց , երիվարաց և հանդերձից պակասութիւնը լցուցանելով և զօրական հանդէսներ կատարելով :

Բայց թշնամին յառաջ դալով արդէն աշխարհի միջոցը զըաւեր էր և բանակածէր Աւարայր դաշտին մէջ Ցղմուտ գետին ափանցը վրայ : Հայոց զօրախումբը ևս բանակեցաւ դէմյանդիման : Վասակ պատգամա-

ւորներ կուղարկէր և զօրաց միտքը լքուցանելու համար թողութիւն - կը հրատարակէր թագաւորէն , բայց հաւատացելոց խումբը չը հաւատաց ուրացեալ ստախօսին : Պատերազմի նախնթաց երեկոյին վարդան զօրքը քաջալերեց իր խրախուսական ու պերճաբան խօսքերովը , ու յետոյ յորդորեց սուրբ Յովսէփից և այլ ընկերակցաց հրամանաւ Ղեւոնդ երէց իր սրտաշարժ ճառովը . Նոյն գիշերը չը մկրտուածները մկրտուեցան և զինուեցան հաւատքի զինով . Սեղան պատրաստուեցաւ , ամենասուրբ խորհուրդը կատարուեցաւ , ու պատրաստուեցան 'ի մարտ' փափաքանօք սպասելով այն արշալուսոյն որ իրենցմէ շատերուն համար արքայութեան դռները պիտի բանար , ու իրենց արեամբը փրկութիւն պիտի տար Հայաստանեայց :

Փափաքելի առաւօտը կը հասնի . Պարսիկ ու Հայ սպարապետները փոփոխակի իւրենց զօրքերը կսկզբին քաջալերել , ու միանդամայն զօրքերնին պատերազմի կը պատրաստեն . Պարսից զօրավարը կը յիշեցնէր իր զօրականին թագաւորի հրամանը , իւղը , պսակը , ուռն ու առատաձեռն պարգևները , որ արքունուստ պիտի տրուին . կը յիշեցնէր իւրաքանչիւրի կինը և որդին , անդըն ու ագարակը ու փախստէից պատուհամները . վարդան ևս իր զօրքը երեք

գունդ բաժնած , կարգած և ըսպառաղինած էր ոչ միայն 'ի զեն նիւթական , այլ մանաւանդ 'ի զինուորութիւն հոգեւոր :

Փափաքելի առաւօտը պայծառ ծաղեցաւ , գալարափողները հնչեցան 'ի նշան պատերազմին , զօրաց աղաղակները բարձրացան երկու կողմէն և կորիւն սկսաւ նետաձգութեամբ գետի երկու եղերքէն : Հայոց գունդը յառաջեց գետն անցաւ : Մէկ կողմանէ Պարսից զօրքը կը ցրուէր , և միւս կողմանէ անոնց սպարապետէն հրամայեալ գունդը կը քայքայուէր : Ահագին էր պատերազմը , նիզակները կը ճօնային , հրաձգութիւնք կեռային , աղեղունք կը ճոյթէին , վահանք կը կոփէին և ահաւոր ձայնէն ու աղաղակներէն գողցես լերինք և անձաւք կը շարժէին : Թանձրամիտք կը յիմարէին և վատասիրտք կը լքանէին , քաշք կը խիզախէին և նահատակք կը կոչէին , և երկու կողմէն շատ վիրաւորներ դիալթաւալ կը խաղային . Եւ մինչդեռ յաղթութիւնն Հայոց կերեւէր , Պարսիկները սաստիկ յարձակմամբ կը թափէին վերջին ճիգն ու զվարդանանք աղմկելով շուրջանակի կը փակէին : Աստանօր մեծ նախնիր կը գործէր կորովին վարդան իր քաջ նիզակակիցներով և առաւ անոնց հետ ՆԱՀԱՏԾՈՂՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՊՈԱԿԲ :

## ՀԱՐՑՄՈՒՆՔ ԱՍՏՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ով պայծառ աստղեր , գեղեցիկ աստղեր  
Որ երկնից մէջը դուք կը շողովէք ,  
Ասանկ ծագելով գիշերէ գիշեր ,  
Կաղաշեմ , ինծի պատմեցէք՝ ի՞նչ էք :

Քնացող երկրին պահապաննե՞ն էք ,  
Երբ անոր վրայ կը պատէ մութը .  
Որ ձեր լուսաւոր գունդովը կելլէք  
Ուրախ ու զըւարթ երկնքին տակը :

Ճանապարհորդին ճամբուն լրջու կուտաք ,  
Երբ լուսին չիկայ՝ ոչ ալ արեգակ .  
Ու անոր՝ անշէն անապատին մէջ  
Ճառագայթովնիդ առաջնո՞րդ կըլլաք :

Փալվլուն աստղեր , դուք ձեր կարգովը  
Որ բոլոր գիշեր արթուն կը հըսկէք ,  
Ովկիանոսին մէջ մոլորած նա՞ւ մը  
Արդեօք իր յատուկ ճամբան կը գնէք :

Կը փալվլան միշտ . չեն պատասխաներ .

Զայն չե՞ն ունենալը արդեօք վերերը .  
Այդ արեգները ինչո՞ւ են կեցեր  
Ու չեն տար մեղի պատասխանի մը .

Արդեօք գարունին անուշ զեփիւռը ,  
Արդեօք ամառուան այն սաստիկ տաքը ,  
Աշան անձրելը ձմեռուան ձիւնը  
Իրե՞նք կը խրկեն . գիտնայի մէյ մը .

Թող պատմեն ինծի որոնք գիրքերէն  
Շատ զարմանալի բաներ սորվեցան .  
Թէ ինչպէս ասոնք հին ատեններէն  
Կապուտակ երկնից տակը դրուեցան .

Այսափ գեղեցիկ սիրուն լոյսերը —  
Ո՞հ սիրտս հատաւ ի՞նչ պիտի ըլլան .  
Զիկայ մէկը որ իրիկունները  
Դաս մը տայ ինծի աստղերուն վրան .

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ականջ դիր ինծի , միտք առ ամեն բան  
Ով հետաքընին մանուկ բանասէր .  
Ես քեզի պատմեմթէ ինչպէս եղան  
Հին ատենները հրաշալի բաներ :

Ինչպէս երկնքին կամարին տակը  
Աստղերուն գունդը առաջ դրուեցան  
Ու այն ընդարձակ միջոցին մէջը ,  
Ինչպէս հողովել հրամայուեցան :

Նա որ ստեղծեց դաշտերուն մէջի  
Մանտրտիկ ծաղկանց իւրաքանչիւրը ,  
Նա որ դոյացուց անտառին մէջի  
Հոլվանի ընող ծառոց տերել ,

Նոյն այն Աստուածը իր ըսքանչելի  
Եւ ամենաբաւ զօրութիւնովը ,  
Մէկ խօսքով դրաւ կարգի կանոնի ,  
Երկնից կամարին տակի աստղերը :

Ինքը զգեցուց անոնց ամենը  
Պայծառանշոյլ ճառագայթներով ,  
Ինքը պատուիրեց որ գիշերները  
Մեր գլխուն վրայ ծագեն շողալով .

Մանուկ, վեր նայէ , ամէն մէկ հատը  
Այդ կանթեղներուն որ կը պըլպայ ,  
Մէկ աշխարհ մըն է , կամ արեգակ մը  
Որ օդին հեռու տեղերուն լցոս տայ :

Գուցէ փառաւոր բնակիչներ կան  
Հոն՝ ուր բնաւին մարդ ոտք չի կոխեց ,  
Եւ ուրախութեամբ կերգեն յաւիտեան  
Այն մեծ բաները՝ որ Աստուած դործեց

Ոչ ալ դուն աս մեր հեռու աշխարհէն  
Զուր տեղը ապշած դէպի վեր նայէ .  
Հապա ամէն մէկ շողողուն աստղէն ,  
Իմաստութիւնը Աստուածոյ սորվէ :

Այս թող անոնք Տեառնը դործ քերը  
Քու մատղաշ սրտիդ միշտ սորվեցունեն  
Եւ իրենց անձայն զրոյցներովը ,  
Իր անհուն սէրը քեղի հաղորդեն :

Մի ձեռքով երկու ձմերուկ չի բռնուիր :  
Զին ու ջորին կռուեցան , մէջ տեղ էշը սատա-  
կեցաւ :

Շան պոչը քառսուն տարի մամուլը դի՛ր ,  
չի շտկուիր :

Ամառուան փուշը՝ ձմեռուան նուշը :

Անձրեւ օրը հաւերուն ջուր տուողներ շատ  
կըլլան :

Քոսոտ այծը աղբիւրի ակնէն կը լսմէ :

Սուտը ոտք կելլայ բայց չի քալեր :

Սոխին քաղցրը ո՞վ տեսաւ :

Ռւրագն իր կոթը չի տաշեր :

Որ ջուրն իս կը Խըդդէ , ես զանիկայ ծով  
կըսեմ :

Չունիս փող (ստակ) մտի՛ր հող :

Սերը սովորին , թանը մոլորին :

Զուածող հաւը կաչկըչան կըլլայ :

Մարդուս աչքը մինակ հողով կկշտանայ .

Մարդուս աչքը ելնէ լաւ է քան թէ անունը :  
Խեւ աղջիկը խեւ հարս կըլլայ , խեւ հարսը  
խեւ տան տիկին :

Էշը կերան , պոչին վրան իրար սրդողին :  
Ինչ տեղ հայ , անտեղ կա՛ց :

Ինչ տեղ պանիր , այնտեղ բանի՛ր :

Խիստ քացախը իր ամանը կը ճաթեցնէ :

Դարտակ կարասի ձայնը բարձր դուրս կու-  
գայ :

Երուսաղէմ շուն չկայ :

կատուին խաղէ մըկան մահէ :  
 կաշառքը մութ տեղը լցո կուտայ :  
 Մօրուք չունիմ որ խօսքս անցնի :  
 Մէկ մի տար որ երկու կուզէ :  
 Տանձն ինչ ըրաւ , որ կոթն ինչ ընէ :  
 Մեղքը լալով , պարտքը տալով .  
 Աղքատն ունի հաց ու պանիր , գիշերը քու-  
 նը չի տանիր :  
 Հոպոպը ինքը հոտած է , բայց կարծէ թէ  
 բոյնն հոտած է :  
 Սուտ խօսդին տունն այրեցաւ , չը հաւտա-  
 ցին :  
 Ծառը եթէ վար իյնայ , կացնաւորը կը շատնայ :  
 Չուագող՝ ձիագող :  
 Խելօքին մէկ , յիմարին քանի կուզես :  
 Կատուի տունչը մըսին չ'հասաւ , այսօր ուր-  
 բաթէ՝ ըսաւ :  
 Գող՝ սրտումը դող :  
 Ըսեր են ա՛ռ ու տո՛ւր , ո՛չ թէ ա՛ռ ու կո՛ւլ :  
 Աստուած լեռը կը տեսնէ , ձիւնը կը դնէ :  
 Մի ծաղկով գարուն չի գար :  
 Փոքրիցն ըսկըսէ՝ որ մեծին համնիս :  
 Ով որ փըքանայ , շուտով չըքանայ .  
 Ով կը կարդայ , նա մարդ ա (է) :  
 Սառած օձն առաջ տաքացնողը կը խածնէ :  
 Տուն քանդողին տունն Աստուած կը քանդէ :  
 Օձն իր շապիկը կը փոխէ , բայց չը փոխէր  
 բնութիւնը :

Քիչ խօսիս՝ շատ կը լրսես :  
 Ոմն սիրէ վարդ , ոմըն մանուշակ :  
 Դրացիիդ մի կովն ուղէ՝ , որ Աստուած քեզ  
 երկուսը տայ :  
 Խելին խրատն ինչ ընէ , սեւին սապոնն ինչ  
 ընէ :  
 Ինչ որ կըսես , նա կը լսես . ինչ կը ցանես ,  
 նա կը հնձես :  
 Այդ քեզ խրատ , ա՛լ չը ցանես կըտահատ  
 ցատ բարեկամ ունենալ կարծողն եւ ոչ մէկ  
 հատ ունի :  
 Ապահով բարեկամ համարէ քեզի այն ան-  
 կեղծ մարդը որ պակասութիւններդ կիմա-  
 ցունէ , քան թէ զայն որ ամեն ըրածդ կը-  
 գովէ :  
 Ապերախտին սիրտն անապատի կը նմանի որ  
 երկնքէն իշած անձրեւն անյագաբար կը  
 ծծէ , կը կլէ ու բան չըուցուներ .  
 Աղքատը շատ բանի կարօտ է , բայց ադահն  
 ամեն բանի :  
 Ինչպէս կուզէք որ մարդիկ ձեղի ընեն ,  
 դուք ալ անոնց անանկ ըրէք :  
 Մեղմ պատասխանը սրտամութիւն կիշեցնէ :  
 Իր ընկերին շողոքորթութիւն ընովը , անոր  
 քայլերուն որոգայթ կը լարէ .  
 Գինեմիլն ու շոպիլը աղքատ կըլլան :  
 Միրեցէք ձեր թշնամիները , օրհնեցէք ձեզ  
 անիծողները .

ի՞նչ օգուտ է մարդուն որ բոլոր աշխարհը  
վաստըկի ու իր անձը կորսունցունէ :  
Քարի անունը շատ հարստութենէն ընտիր է :  
Ամեն չարութիւններուն արմատը արծալթ ~  
սիրութիւնն է :

Սուտ շրթունքը տէրոջը զզուելի է .  
Երանի անոնց որ սրտով մաքուր են , ինչու  
որ անոնք պիտի տեսնեն Աստուած :

Վ Ե Ր Զ

Տեր 104

ՀՀ Ազգային գրադարան



NL0247779

ՀԱՅՈՒԹՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԵԱՄԲ  
ՏՊՈՒԱԾ ԳՐԵԱՆՔ

1. Անգութն Պետրոս Ա. էպ. Թրդ.	Գին
2. Առաջնորդ Հայ ընթերցանութեան Յօրինեալ ներսէս Ս. Մէջոնութեանէ . . . . .	3
3. Բարոյա. Պլուտարք. Բ. հար. Ծ Թրդ. Կ. 2	1
» » Գ. » Հ ԶՈՒԽԱԾ. 3	2
4. Դպրութիւն կամ նոր Քերականու- թիւն գրաբար լեզուի յօրինեալ Ա. Մ. Վ. Գ. ԴԱՐԱԴԱՇԵԱՆԷ սպառած . . . . .	3
5. Ընթերցարան Յօրինեալ բազմահ- մուտ Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆԷ Ճոխ եւ ընափր . . . . .	3
6. Թուագիտութիւն համառօտ Յօրին- եալ ՍՏԵՓԱՆ Պ. Պ. ՔԱՓԱՋԵԱՆԷ . . . . .	3
7. Կրթութիւն Քերականութեան Յօ- րինեալ Ա. Մ. Վ. Գ. ԴԱՐԱԴԱՇԵԱՆԷ սպառած	3
8. Նախագիտելիք մանկանց Թրդմ. բա- րեյիշատակ Ա. ՄՈԶԵՎԱՆԷ սպառած	3
9. Պարտք տղայոց Թրդմ. բարեյիշա- տակ ՆԵԱՆ ԶՈՒԽԱՇԵԱՆԷ . . . . .	4
10. Սկզբունք Տրամաբանութեան Յօրին- եալ Ա. Մ. Վ. Գ. ԴԱՐԱԴԱՇԵԱՆԷ . . . . .	45
11. Սկզբունք Քերականական եւ Տրա- մաբանական Վերլուծութիւն Յօ- րինեալ Ա. Մ. Վ. Գ. ԴԱՐԱԴԱՇԵԱՆԷ . . . . .	6
12. Քերականութիւն համառօտ գրաբար լեզուի Յօրինեալ Ա. Մ. Վ. Գ. ԴԱՐԱԴԱՇ- ԵԱՆԷ սպառած . . . . .	